

Ալեքսան Յակոբեան

Մեծ Հայքի 15 նահանգներից 10-րդի՝ Արցախի գրեթե կենտրոնում՝ Խաչէնագետի հովտի միջնամասի աջ (հարավային) ափին, կաթողիկոսանիստ Գանձասարի դէմ-դիմաց յառնող անտառապատ լեռան ժայռոտ գագաթին բազմած է Հայոց Արեւելից կողմերի նշանաւոր ամրոցներից մէկը՝ Խօխանաբերդը: Ըստ է. դարի երկրորդ տասնամեակի կէսին շարադրուած «Աշխարհացոյց»-ի՝ դա Արցախի կենտրոնական գաւառներից մէկի՝ Մեծ Իրանքի (կոչուած նաեւ՝ Մեծ Առանք, Մեծարանք, Մեծիւրեանք) արեւմտեան մասն է:

Խօխանաբերդը զբաղեցնում է ծովի մակերեւոյթից 1812 մ բարձրութեամբ լեռան (որը ժողովուրդը կոչում է Թարխանաբերդ) ներկայումս անտառապատ գագաթը՝ մօտ 0,6 հա տարածքով: Պահպանուել են ժամանակին անմատչելի պարիսպների առանձին կտորներ՝ մինչեւ 5 մ բարձրութեամբ, երկու քառանկիւն, կրասուաղ պատերով ջրամբարների փոսերը՝ 2-2,5 մ խորութեամբ, արեւելքում գտնուող կենտրոնական մուտքով անցնող ժայռափոր, 2-3 մ լայնութեամբ աստիճանները եւ բազմաթիւ շինութիւնների փոսահետքերը («նախնական հաշուումներով կացարանների թիւն անցնում է յիսունից»¹): Համարուում է, որ այդ միջնաբերդը կառուցուել է Սահլ Սմբատեան իշխանի ժամանակներում, որի յիշողութիւնը պահպանուել է լեռան ստորոտում գտնուող Սահլատափ

հանդամասի անուան մէջ²: Միջնաբերդից ներքեւ՝ լեռան լանջին, փռուած են վարելահողի վերածուած տափարակներ, սակայն նրանց շրջադժով պահպանուել են շինութիւնների ու պարիսպների որոշ հետքեր: Աւելի ներքեւ՝ լանջի մի բարձունքի վրայ, Գառնաքար գիւղից մի փոքր վեր, գտնուում է Հաւապտուկ կամ Հաւոց պտուկ անունով վանքը, որի եկեղեցիներից մէկի շինարարական արձանագրութիւնը գրուել է 1163 թ. («Յիշխանութեան՝ Հասանա՝ որդոս Վախտանգա»)՝³, նաեւ՝ շրջակայ ընդարձակ գերեզմանոցը, որի տապանագրերը ԺԲ.-ԺԳ. դարերի թուագրումներ ունեն: Վանքից դէպի արեւմուտք՝ մէկ ուրիշ ժայռոտ բարձունքին, գտնուում են իշխանական ապարանքի աւերակները, որոնք ժողովուրդն անուանում է Դարպասներ: «Պահպանուել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը՝ կիսակործան անկիւնային բուրգերով ու դարպասով, երկու սենեակի պատերն ու ծածկի որոշ մասեր, ինչպէս նաեւ մի քանի այլ սենեակների մնացորդներ»⁴: Բուն ապարանքի շինու-

2 Տե՛ս Գ. Տէր-Յովհաննիսեանց, Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառոտ կենսագրութիւն, - «Փորձ», 1880, թիւ 5, էջ 133-134, ծնթ. 2 («Այս բերդից փոքր-իմջ դէպի արեւելք տարածուում է մի հարթ եւ բաւական ընդարձակ գետին, որ մինչեւ այսօր սոյն Սահլ իշխանի անուամբ կոչուում է Սահլատափ (Սահլի գետին): Այստեղ կան բազմաթիւ տների աւերակներ կարգաւ Խաչէն գետի երկարութեամբ դասատրուած»):

3 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1982, էջ 33 (N 70):

4 Ա. Ղուկեան, Խաչէնի իշխանական ապարանքը, - ԼՀԳ, 1984, թիւ 3, էջ 51:

1 Ս. Սարգսեան, Խաչէնի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 77: Հմմտ. Ծ. Մկրտչեան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները, Եր., 1985, էջ 19:

թիւնից «մի քանի մետր հեռու, կողք կողքի կառուցուած են երկու եկեղեցիներ: Դրանք միջին մեծութեան բազիլիկներ են, որոնցից հարավայինին կից է փոքրիկ գաւիթ-սրահը»⁵: Տեղագրական երկերում այդ կառոյցը համարում էին լոկ Հասան-Ջալալեան իշխանատոհմի ապարանք⁶, սակայն արդէն Գարեգին Յովսէփեանն իրաւացիորէն դիտարկել է այն Խօխանաբերդի ամրոց-բնակավայրի համալիրի մէջ⁷:

Խօխանաբերդի անուան հիմքը յայտնի է դեռեւս Բիւրիսական պետութեան ժամանակներից: Ք. ա. 741 թ. արշաւանքի կապակցութեամբ այն յիշատակուում է Բիւրիսէլի Սարդուրէ Բ արքայի՝ Գանձագուս սեպագիր տարեգրութեան մէջ իբրեւ Ուխունէ երկրանուն: Վերջինիս տեղն, անկասկած, Խաչէնագետի հովտում էր, քանի որ նրանից առաջ նշուած Կու-Ալբա երկրանունը համապատասխանում է Տրտուի հովտի Մեծ Կուանք գաւառի անուանը, իսկ նրանից յետոյ նշուած Տերիա երկրանունը՝ Կարկառ գետի ձախակողմեան Տրակետ վտակի անուան հիմքին (աշխարհացոյցեան Արցախի՝ նոյնպէս կենտրոնական

Պիանք գաւառում)⁸: Իսկ Խաչէն անունն սկզբնապէս, ամենայն հաւանականութեամբ, կրում էր նոյնանուն գետի ափին գտնուող այն ամրոցը, որը շուտով դարձաւ Արցախի Մեծ Իրանք գաւառի իշխանների գլխաւոր նստավայրը:

428 թ. Արշակունեաց թագաւորութիւնը վերացնելուց յետոյ Սասանեանները Հայաստանի հիւսիսարեւելեան Արցախ եւ Ուտիք նահանգները մտցրեցին Աղուանք (Առան) մարզպանութեան կազմի մէջ: Նրանց փոխարինած արաբները պահպանեցին այդ վիճակը: Սակայն Խալիփայութեան թուլացման դարաշրջանում Հայոց Արեւելից կողմերում ձեւաւորուեցին մի քանի հզօր իշխանութիւններ, որոնք Թ. դ. վերջին մաս կազմեցին Բագրատունեաց թագաւորութեան: Դրանցից մէկը Խաչէնէն էր (Արցախ նահանգի կենտրոնական մասում), որի իշխանատոհմը սերում էր վաղ միջնադարում յայտնի Ծաղիւսցոց իշխանութիւնից, բայց արդէն որդեգրել էր ուրիշ ինքնանուանում՝ Առանշահիկներ: 837 թ. Սահլ Սմբատեան խաչենցի իշխանը (որն արաբական աղբիւրներում կոչուում էր Սահլ իբն Սիմբաթ, իսկ Միքայէլ Ասորու հայերէն թարգմանութեան մէջ՝ Սահակ Հայկազուն⁹) լեռան վրայ գտնուող իր ամրոցում (հաւանաբար՝ հէնց Խաչէն) ձերբակալեց ապստամբ Բաբեկին եւ զրա դիմաց Արաբական խալիփայութիւնից մեծ շնորհների արժանացաւ: Մասնաւորապէս նա ստացաւ Հայոց, Աղուանից եւ Վրաց աշխարհների իշխանաց իշխանի՝ ըստ ամենայնի, փոխան-

5 Ծ. Մկրտչեան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները, էջ 20: Հմմտ. Գ. Տէր-Յովհաննիսեանց, Աշխ., էջ 134 («Այս աւերակների մէջ է նույնպէս Ջալալ մեծ իշխանի ընդարձակ պալատը, որ տեղացիներից կոչուում է Դարբասներ, եւ որոյ մէջ կանուցած է գեղեցիկ եկեղեցի - բայց այժմ կիսաւեր»):

6 Մ. եպ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 181. Հ. Ս. Էփրիկեան, Պատկերասրահ բնաշխարհիկ բաղարան, հտ. Ա., Վեներտիկ-Ս.Ղազար, 1903, էջ 599:

7 Գ. կաթ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 317: Հայ միջնադարեան կենտրոնական բերդամրոցների շուրջ ձեւատրուած ընդարձակ բնակավայրերի մասին տե՛ս Ա. Զարեան, Ակնարկներ հին եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութեան պատմութեան, Եր., 1986, էջ 93-95, 113-120:

8 Յ. Կարապետեան, Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբիւրներում. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում), Եր., 1998, հտ. I, էջ 138-139, 200-201, 206. Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 317-318, 404-405:

9 Միքայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1879, էջ 365:

ցիկ պաշտօնը. այն 2 տարի անց տրուեց նաեւ «տերանց տէր» Յովհաննէսին: Ենթադրաբար, դա Սահլի որդին է, որը Բաբեկի գերեզման պատմութեան առիթով արաբական աղբիւրներում կոչուած է Մուսիա¹⁰: Մեծարանից Ս. Յակոբովանքում մի խաչքարի պատուանդանին այս Յովհաննէսի թողած վիմագիրն է. «:ՅԲ: թուականութ/է/է^{ան}ս Հայո [853 թ.], ի ժամանակս / Յովանիսի Աղվան/ից/ իշխանի, ես՝ Սողոմ/ոն Մ/եծարանց եպիսկ/ոպոս/ կանգնեցի...»¹¹: Յաւելենք, որ Սահլ Սմբատեանի «քաջազօր եղբայրներին» մասին վկայութիւն է պահպանել Ժ. դ. վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցին («Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազօր եղբարք իւրովք եւ զօրօքն իւրեանց ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ...»)¹², իսկ արաբական աղբիւրները մի տեղեկութիւն են հաղորդում նրա քրոջ նկատմամբ Բաբեկի կատարած ոտնձգութիւնների վերաբերեալ¹³: Այդ եղբայրների եւ քրոջ անունները, սակայն, աղբիւրներում վկայուած չեն:

10 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948, էջ 134-136. V. Minorsky, *Caucasica IV: I. Sahl ibn-Sunbā of Shakkī and Arrān*, BSOAS, 1953, XV/3, էջ 509-510. Յ. Քիրտեան, Բաբակ եւ Սահլ իսկ Սնպատ, - «Բազմավէպ», 1958, էջ 9-22, 72-82, 132-139. Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 266-268:

11 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 12 (N 1): Այստեղ եւ ստորեւ բնագրերում բոլոր ընդգծումները մերն են: Վիմագրերի եւ յիշատակարանների բնագրերում դրել ենք հետեւեալ փակագծերը. [] - վերականգնում, [] - անյայտ տառեր, { } - կորսուած հատուած, / - տողաւարտ:

12 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983 (այսուհետեւ՝ ՊԱ), գիրք Գ, գլ. ԻԲ, էջ 340-341:

13 Տե՛ս Իբն ալ Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի (Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 11. Արաբական աղբիւրներ, Բ), Եր., 1981, էջ 143:

855 թ. Բուղա ոստիկանի կողմից Սահլը եւս գերեզմարուեց ու իր Ատրնեսեհ որդու հետ, բազմաթիւ հայ իշխանների նման, տարուեց Միջագետք: 862 թ. Ատրնեսեհն ազատ արձակուեց եւ հայրենիք վերադարձաւ, ուր շարունակեց իշխանութեան ամրապնդման գործը: Ըստ Դասխուրանցու՝ նա կառուցեց Հանդաբերդ ամրոցը՝ Տրտուլի Լեւ վտակի հովտում, իսկ նրա կին Սպրամը՝ Սողք գաւառի Նորավանքը՝ Սեւանայ լճի աւազանում: Նրանց աւագ որդին՝ 881 թ. Մեծ Մազրայի մեծազիր խաչքարը կանգնեցնող Գրիգոր Ատրնեսեհեանը¹⁴, Հաւախազաց բերդը կառուցելուց յետոյ իր իշխանութիւնը տարածել էր նաեւ՝ աղբիւրի բնորոշմամբ՝ «այն կողմ» Գարդման եւ Քուստի Փառնէս դաւառները վրայ, որտեղ առաւել ամրապնդուեց («առհասարակ տիրեաց») եւ Ժ. դ. սկզբին Փառնիստի հզօր իշխանութեան (հետագայում՝ թագաւորութիւն) հիմնադիրը դարձանրա 5 որդիներից երրորդը՝ Սահակ Սեւադան¹⁵:

Ուղղելով Բագրատ Ուլուբաբեանի մի վրիպումը՝ կարեւոր է արձանագրել, որ Փառնիստի հետ զուգահեռաբար հզօրացած Խաչէնի իշխանութիւնն սկսում է ոչ թէ Սահակ Սեւադայի որդուց¹⁶, այլ նրա մի

14 Դիւան հայ վիմագրութեան, պր. IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Գ. Բարխուդարեանը, Եր., 1973, էջ 334, N 1358 («:ՅԼ: թվականութեանս Հայոց [=881 թ.], ես՝ Գրիգոր Ատրնեսեհեան՝ Սիւնեաց եւ Աղվանից իշխան, կանգնեցի զ[ս]յուր անշահ...»): Ըստ Մովսէս Դասխուրանցու (ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԲ, էջ 341)՝ նրա եղբոր անունն Ապուսեթ էր. «*Աբու Աթթ», այսինքն՝ արաբական ձեւով՝ Աթթ աւագ որդու հայր» (եւ գուցէ, այդ *Աթթ-ի հայկական անուանատարբերակը պիտի ենթադրել տոհմական *Աեադաթ):

15 ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԲ, էջ 340-341: Հմմտ. A. A. Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, էջ 213-214:

16 Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 101-102 (հմմտ. A. A. Акопян, *Албания-Алуанк*, էջ 241, ծնթ. 118):

եղբորից: Ընդ որում դա չէր կարող լինել աւագ եղբայրը, որին Դասխուրանցին կոչում է Ապուլի («*Աբու Ալի¹⁷, այսինքն՝ արաբական ձեւով՝ Ալի աւագ որդու հայր»), եւ ոչ էլ այն Սմբատը, որին պատմիչը վերագրում է Ապուլիի սպանութիւնը 897 թ.¹⁷: Ի դէպ, նկատի ունենալով իր աւագ թոռան անունը (տե՛ս քիչ ստորեւ)՝ կարելի է գտնել իբրեւ վարկած ենթադրել, որ այդ «խաչէնցի» եղբոր (չառ հաւանական է՝ 5 եղբայրների մէջ՝ երկրորդի) անունը եղել է *Սեւեթերիմ (նոյն տրամաբանութեամբ հնարաւոր է նաեւ ենթադրել, որ եղբայրներից աւագի՝ արաբական Ապուլի անուանատարբերակի հաւանական հայկական զուգահեռը եւս կարող էր կրկնել պապի անունը՝ *Ատրնեսեհ):

Ստեփաննոս Օրբէլեանին հասած տուեալներով՝ Տաթեւի մայր եկեղեցու օծմանը 906 թ. մասնակցում էին ե՛ւ «Գարդմանայ տէր» Սահակը (Սեւադան), ե՛ւ «Աղուանից» երեք այլ իշխաններ՝ Եսայիմ (Դիզակ-Գորոզուլի իշխանը), Ատրնեսեհը (Իրականում՝ թերեւս, իրօք, այսպէս կո-

չուած Երկրորդ Աղուանից կամ Շաքի-Հերէթի թագաւորութեան հիմնադիր Համամ Բարեպաշտի որդին) եւ Գրիգորը¹⁸, որն, անկասկած, Խաչէնի իշխանն էր: Այս Գրիգորը ոչ մի կերպ չէր կարող լինել Սահակ Սեւադայի որդին՝ ժամանակի անհամապատասխանութեան պատճառով (Սահակի աւագ որդի Գրիգորն իր քեռայր Աշոտ Երկաթ արքայի կողմից կուրացուելու էր երկու տասնամեակ անց՝ հօր հետ միասին եւ վերջինիս իշխանութիւնը դեռ չժառանգած¹⁹), եւ ոչ էլ՝ եղբայրը (ըստ Հր. Աճառեանի իրաւացի դիտարկման՝ «Հայոց մէջ Համանուն որդի չի լինում»²⁰), այլ միայն՝ եղբորորդին: 949 թ. «յաշխարհն Աղուանից» այցելած եւ «ի գաւառն Խաչէնոյ» հասած Անանիա Մոկացի կաթողիկոսին ամենայն սիրալիրութեամբ դիմաւորում է նոյն «մեծ եւ փառաւոր, աստուածապահ եւ բարեպաշտ տէր Գրիգոր իշխան»-ը: Նա, հաւանաբար, յառաջացած տարիքում էր, քանի որ 9 տարի անց՝ 958-ին, նրան արդէն փոխարինել էր որդին («...Սենեքե-

Մերժելի են նաեւ հեղինակի այն յարակից վարկածները, ըստ որոնց Սահակ Սեւադայի հայր Գրիգոր Ատրնեսեհեանին, իբրեւ թէ, հնարատր է համարել Ծաքի-Հերէթի թագաւոր Համամ Բագրատունու հետ, իսկ դստերը՝ 970 թ. (կամ՝ 987) Սիւնեաց առաջին թագաւոր դարձած Սմբատի տիկնոջ՝ Ծահանդուխտ Ա-ի հետ: Վերջինս, ըստ Ստեփանոս Օրբէլեանի եւ պահպանուած վիմագրերի, իրօք, դուստրն էր «Աղվանից իշխան» Սեւադայի, սակայն դա, հաւանորէն, կարող էր լինել Սահակ Սեւադայի թոռը՝ Սեւադայ-Իշխանանունը (Բ. Ուլուբաբեանը նրան եւ եղբորը՝ Ատրնեսեհին կամայականորէն հանում է Դասխուրանցու ներկայացրած տոհմաշարից), որի աւագ որդի Յովհաննէս Սեւեթերիմը հիմնադրեց Փառնիստի թագաւորութիւնը, իսկ մի դուստրը (անունը վկայուած չէ) դարձաւ Կարսի թագաւորութեան հիմնադիր Մուշեղ Բագրատունու կինը (Ստեփանոսի Տարօնացույ Ասողկան Պատմութիւն Տիգրայկան, Աշխատութեամբ Ս. Տ. Մախաւեսեանց, Ս. Պետերբուրգ, 1885, գիրք Գ, գլ. ԺԷ, էջ 198):

17 ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԱ, էջ 336, գլ. 22, էջ 341:

18 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւսկան, Ի յոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուա, 1861, գլ. ԽԲ, էջ 171:

19 Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 313-314. Յովհաննէս Դրասխանակերտցի, Հայոց Պատմութիւն, հայերէն բնագիրը վրացերէն թարգմանութեան հետ՝ Ե. Վ. Յազարեյշիլու, Թբիլիսի, 1965, էջ 247. Yovhannēs Drasxanakertc'i, *Histoire d'Arménie*, Introduction, traduction et notes par P. Boisson-Chenorhokian, Lovanii, 2004, գլ. Կ, էջ 338: Ըստ Դասխուրանցու՝ Գրիգորի եղբոր անունը Դաիթ էր (ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԲ, էջ 341): Սահակ Սեւադայի դստեր անունը, որն Աշոտ Երկաթի կինն էր, Յովհաննէս Դրասխանակերտցին եւ Մովսէս Դասխուրանցին չեն յայտնում. Կիրիլ Թումանովի տոհմագրական աղիւսակում նա կոչուած է Մառիամ (C. Toumanoff, *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne (Arménie-Géorgie-Albanie)*, Roma, 1976, էջ 238), բայց դրա աղբիւրին, ցուօք, ծանօթ չենք:

20 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Եր., 1944, էջ 278:

ըմբայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի»²¹): Գրիգորի տիրոջութեանը («ի տան իւր ի Խաչեան գաւառի») գումարուած ժողովի մասնակիցների թւում կաթողիկոսը մասնաւորապէս յիշատակուած է նրա գաւառի հետեւեալ վանքերից ժամանածներին՝ Աթախայ, Մաքենոցաց, Շիկաքարի, Խանդին (հաւանաբար՝ նոյն Խաղայ, Խաղարայ), Ոսկեվանից, Այծաքարայ, Գանձասարու եւ Խաչիճայ (վերջին երկուսի վանականներն էին Հայր Սարգիսը եւ Հայր Մանուշակը): Այս Խաչիճայական մասին այլ վկայութիւններ չկան:

Տեղին հարկ է նշել, որ մեր պատմագրութիւնը շարունակուած է կանգնած մնալ աղբիւրագիտական մի լուրջ հակասութեան լուծման խնդրի առջեւ: Ըստ Ժ. Գ. սկզբի պատմիչ Թովմա Արծրունու (այդպէս նաեւ՝ Յովհաննէս Դրասխանակերտցու, Մովսէս Դասխուրանցու, Ստեփաննոս Ասողիկի ու նրանց կրկնող աւելի ուշ մատենագիրների)՝ 855 թ. Բուղա արաբ զօրապետը բազմաթիւ հայ իշխանների թւում գերի տարաւ նաեւ Սահլ Սմբատեանին, որին վասպուրականցի հեղինակն անսպասելիօրէն անուանում է. «Շաքեոյ տէր»²²:

21 Տեան Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տան Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սորք Լուսատրչի աթոռոյն, - «Արարատ», 1897 թրատ. Գ. Տէր-Մկրտչեան], էջ 134 եւ 144: Հեղինակը յիշատակում է նաեւ «Աղուանից» այլ իշխանների, այդ թում՝ իշխանաց իշխան Սեմեքերիմին, որը որոշ ժամանակ անց պիտի դառնար Փառիտսի թագաւորութեան հիմնադիրը:

22 «Եւ խաղացոցին ի Սամառայ. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, եւ Գրիգոր Բուրդկայ որդի Մամիկոնեանից տէր, եւ Ատրնէրսեմ Աղուանից իշխան, եւ Գրիգոր Սիւնեաց տէր, եւ Սահլ ձեռնագրում գրչի վրիպակով՝ Մահլ՝ Սմբատայ որդին՝ Շաքեոյ տէր, որ գԻաբանն կալաւ, եւ Իշխանական վասակ՝ Վայոց ձորոյ տէրն, եւ Փիլիպպէ իշխանն Սիւնեաց, եւ Ներսէմ իշխան Գարիթայանից [սրբագրուող՝ Գարիթանից], եւ ապա Եսայի Ապունուէ, որ զշատ պատերազմուսն եմար»

Հետագօտողների մեծ մասի իրաւացի գնահատմամբ՝ Թովման նկատի ունի Կուր գետից հիւսիս գտնուող Շաքի (հետագայում՝ Նուխի) քաղաքը, որն այդ դարաշրջանում Բուն Աղուանքի քրիստոնեայ հատուածի եւ իշխանութեան կենտրոնն էր եւ որի տիրակալ Համամ Բարեպաշտ Բագրատունին (կոչուած նաեւ՝ Յովհաննէս) Թ. Գ. վերջում հռչակեց Աղուանից թագաւորութեան վերականգնումը (վրաց աղբիւրներում կոչուել է նաեւ Հերէթ, արաբալեզու երկերում՝ Շաքքի կամ Շաքին. արդի դադատանեան պատմագրութեան մէջ արմատաւորուել է Նրկորոյ Աղուանից թագաւորութիւն անուանումը): Սակայն, միւս կողմից, Մովսէս Դասխուրանցու բազմաթիւ հաղորդումներից երեւում է (տե՛ս վերեւում), որ Սահլ իշխանութիւնը մինչեւ Բաբեկին գերելը տարածուել է լոկ Խաչէնի վրայ, իսկ դրանից յետոյ՝ նաեւ Սոթք գաւառի (Սիւնիքի հիւսիսում):

Այնուամենայնիւ, սկսած Նիկ. Աղոնցից, Թովմա Արծրունու վկայութիւնը համարուել է բաւարար եւ փորձ է կատարուել իրար կապիւու Խաչէնի եւ Հերէթի իշխանատոհմերը: Պատմաբանի եւ նրան շարունակողների կարծիքով՝ Սահլի հայր Սմբատը իր՝ իբրեւ թէ իւրայատուկ անուան շնորհիւ կարող է սերուած համարուել այն Բագրատունի տոհմաճիւղից, որը, մէկ-երկու սերունդ առաջ տեղափոխուելով Տարօնից արեւմտեան Հերէթ, ստացել էր այդ երկիրը Վրաց Արչիլ թագաւորից (ըստ «Մատիանէ Քարթլիսա» երկի), իսկ Սահլը որդի Յովհաննէսը (արաբական աղբիւրներում՝ Մուալիա), որը յի-

(տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 10451, թ. 193բ: Հմմտ. Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ի լոյս էած Ք. Պատկանեան], Ս. Պետրոսով, 1887, էջ 191: Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Բնական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Մ. Հ. Գարբիճեան-Մելիքեանի, Եր., 2006, էջ 213):

շուած է Դասխուրանցու երկում շուրջ 840 թ., իսկ Մեծարանից Ս. Յակոբավանքի մի արձանագրութեան մէջ՝ 853-ին, իբրեւ թէ կարող է նոյնացուել Շաքի-Հերէթի թագաւորութիւնը 890-ական թթ. հիմնադրած Համամ Բարեպաշտի հետ: Ժամանակային այսպիսի հեռաւորութիւնը եւ Սահլի՝ Առանշահիկից Բագրատունի դառնալու անհաւանականութիւնը նկատել է դեռ Բ. Ուլուբաբեանը (սակայն նա էլ առաջարկել է մէկ այլ՝ աղբիւրների վկայութիւններին հակասող վարկած՝ հնարաւոր համարելով Համամի հետ Սահլի թուան՝ Գրիգոր Ատրնէրսեհեանի համադրումը): Փորձել են նաեւ եւթաղբել, թէ Թովմայի բնագրի Շաքէ-ն հնարաւոր է նոյնացնել Կուրից հարաւ ընկած որեւէ տեղանուան հետ՝ Արցախում (Սլ. Սարգսեան), կամ անգամ՝ Սիւնիքում (Զ. Բունիաթով):

Սակայն, մեր համոզմամբ, աղբիւրագիտական նիւթի ակնյայտ հակասականութեան այս խնդիրը կարող է հաւանական լուծում ստանալ լոկ այն դէպքում, եթէ ուղղակի ընդունենք, որ գործ ունենք Թովմա Արծրունու շարադրանքի բովում ի յայտ եկած, այսպէս կոչուած, «տեխնիկական» վրիպման հետ: Կարծում ենք, որ վասպուրականցի հեղինակի բանաւոր կամ գրաւոր աղբիւրն իրականում յիշատակել է հէնց «Խաչէնոյ տէր» Սահլին (գրաւոր աղբիւրի տարբերակում ենթադրելի է նաեւ գաւառանուան շատ կամ քիչ աղճատուած լինելու հնարաւորութիւնը): Սակայն միջնադարեան պատմիչն, ըստ ամենայնի, իրեն անձանօթ այդ տեղանունը փոխարինել է՝ բնականաբար, ոչ շատ լաւ, բայց գոնէ ինչ-որ տեղից ծանօթ անուամբ՝ «Շաքեոյ տէր»: Յիշենք, որ Խաչէն գաւառանուանը դեռեւս ծանօթ չէ նաեւ Արծրունեաց տան պատմիչի ժամանակակից Յովհաննէս Դրասխանակերտցին, որը յիշա-

տակում է լոկ Խաչէն ամրոցը²³: Փաստօրէն, կենտրոնական Հայաստանի մատենագիրներից առաջինն Անանիա Մոկացին է, որ վկայում է այդ անունով մարզի մասին, ուր ինքն այցելել էր անձամբ: Ընդամին, նա յիշատակում է նաեւ նոյնանուն ամրոցը եւ անգամ՝ Խաչիճայ վանքը:

Արդ, Կոստանդին Միրանաձին կայսրը (913 -959) Ժ. Գ. կէսին արդէն զիտէր Խաչէնի իշխանութեան որոշակի անկախութեան մասին: Իր «Արարողութիւնների մասին» Բ գրքի 48-րդ գլխում («Այլազգիներին ուղարկուող նամակների վերնագրերը») նա անդրադառնում է նաեւ Հայաստանին՝ դնելով նրա հատուածը Արաբական խալիֆայութիւնից յետոյ եւ Իբերիայից ու Ալբանիայից առաջ: Մեծ Հայքի (իմա՝ Բագրատունեաց թագաւորութեան) ու

23 «Իսկ Բուխայի երթեալ ըմբնէ զմեծ իշխանն Ատրնէրսեմ, որ բնակեալ էր յամրոցին Խաչէնոյ եւ զայլ եւս զհամազգիս նորա» (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, էջ 127-128; Yovhannēs Draxanakerte՝i, Histoire d'Arménie, գլ. 102, էջ 190): Ծառուակութիւնը եւս կարեւոր է մեզ համար. «Եւ անտի չուեալ գնայ ի գաւառն Գարդմանայ, եւ պատնէշ եւ պաշարումն շուրջ գԳարդման բերդին եղեալ՝ ըմբնէ անտի եւ զիշխանն Գարդմանայ զԿտրիճն՝ ի կալանս կապանաց արկեալ: Եւ անտի եւս չուեալ յՈստի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում եւ Կոն անուանէին գնա. որ ի նախնոյ իրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգքն անուանէին: Եւ ապա եւս իշխանն Աղուանից Եսայի Գեգապատի լեալ առ ի նմանէ՝ ըմբնի ի ձեռն նորա հանդերձ համագրեօք իրովք. ընդ նմին եւ այլ եւս տեարք եւ իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա լիշէն՝ Սահլին - Ա. Յ.]: Բերենք նաեւ Ասողիկի հատուածը. «Եւ յառաջ խաղացեալ կալաւ զամենայն իշխանս Հայոց. զիշխանն Արծրունեաց Աշոտ՝ զհայր Դերեմկին, եւ զպարապետն Հայոց Սմբատ՝ զհայր թագաւորին Աշոտոյ, եւ զիշխանն Սիւնեաց Վասակ, եւ զԿտրիճն՝ Գարդմանայ իշխան, եւ զիշխանն Խաչէնոյ Ատրնէրսեմ, եւ գեալի՝ Աղուանից իշխան, եւ զիշխանն Սեւորդեաց զՍտեփաննոս, որում Կոնն կոչէին» (Ստեփանոսի Տարօնացոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, գիրք Գ, գլ. Բ, էջ 107):

Վասպուրականի իշխանաց իշխաններին (իմա՝ թագաւորներին) ուղարկուող նամակներից յետոյ կայսրը նշում է երկրի կիսանկախ իշխանութիւններին (ընդամենը՝ 8 կամ 10 «արխոնտի») առանձին ուղարկուող նամակների մասին եւ Կոզովիտից, Տարօնից, Մոկսից, Անձեւացիքից, Սիւնիքից (Συνής) ու Վայոց ձորից (Βαϊτζώρ) յետոյ տալիս վերջին 2 անունները. «Խաչէնի (Χατζένης) իշխանին՝ Հայաստան, Սեւորդեաց, այսինքն Սեւ որդիներ կոչուող (τῶν Σεβροτιῶν, τῶν λεγομένων Μαύρα παιδία) երեք իշխաններին»²⁴:

Ժ. Գ. երկրորդ կէսի արաբ մատենագիր Իբն Հաուքալի մօտ պահպանուել է 955 թ. դէյլեմցի Մարզուբան Սալարեանի կողմից Հայաստանի ու Հարեւան երկրների պետական կազմաւորումներից գանձուող հարկերի ցանկը: Նրանում Շարւանի, Շաքքիի, Ահր-Վարդականի, Ներքին Արմինիայի (Անի), Վասպուրականի (Ալ-

Դայրանի), Վայոց ձորի (Ալ-Վայզուր) կողքին յիշատակուում են նաեւ Հայոց Արեւելից կողմանց երեք ապագայ թագաւորութիւնների տիրակալները. «Ռուբի տէր» (մեր կարծիքով՝ անկասկած, Սեւորդե-Փառիսոսի՝ անճանաչելիօրէն աղճատուած յիշատակումն է) Սանհարիբ Իբն Սաւադան (Սեւադա իշխանանունի որդի Յովհաննէս Սենեքերիմը)՝ 300 հազար զիրհեմ հարկով, «Ջուրդի տէր» (անկասկած՝ Գորդուի աղճատուած յիշատակումն է) Վաշական Իբն Մուսան՝ 200 հազար զիրհեմով եւ 150 հազար զիրհեմով՝ «Խաչէնի տէր» Սանհարիբը²⁵, այսինքն՝ Խաչէնի Սենեքերիմ իշխանը, որին յիշատակում էր նաեւ Անանիա Մոկացին²⁶: Արաբ մատենագիրը նրանց դեռ թագաւոր չի կոչում, թէպէտ ուշագրաւ է, որ նա այդպէս է վարում նաեւ Անիի, Վասպուրականի եւ Շաքքիի դէպքերում, ուր թագաւորական իշխանութեան գոյութիւնը որեւէ կասկած չի յարուցում:

Փառիսոսի թագաւորութեան ստեղծման (Սեւադա իշխանանունի որդու՝ Յովհաննէս Սենեքերիմի թագադրման) մասին պահպանուել է Մովսէս Դաւիթբեկեանի «Պատմութիւն Աղուանից»-ի նախավերջին գլխի մանրամասն հաղորդումը²⁷: Այն թու է տալիս այդ թագադրումը թուագրել երկի շարադրմանը նախորդած ժամանակով (մինչեւ 982 թ.), իսկ ըստ Ն. Աղունցի հաշուարկների՝ դա աւելի հաւանական է վերագրել 966-978 թթ. ժամանակամիջոցին²⁸: Փառիսոսի յաջորդ թագաւորների

25 V. Minorsky, *Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzuban*, - BSOAS, 1953, XV/3, էջ 519. Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան, *Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում*. ԼՀԳ, 1969, թիւ 2, էջ 58-59:
 26 Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի *Յաղագս սպասամբութեան տանն Աղուանից*, էջ 144: Տե՛ս վերեւում, ծնթ. 21:
 27 ՊԱ, գիրք Գ, ԻԲ, էջ 341: Հմմտ. A. A. Акопян, *Албания-Алганк*, էջ 213-214:
 28 Ն. Աղունց, *Պատմական ուսումնասիրություններ*, էջ 138-140:

24 Կոստանդին Ծիրանածին, *Բիզանդական արքունիքի արարողութիւնների մասին*. Գիրք II, թարգմանութիւնը բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հ. Բարթիկեանի (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, Ե. Բիզանդական աղբիւրներ, Բ), Եր., 1970, էջ 151: Հմմտ. E. Honigmann, *Die Ostgrenze des byzantinischen Reiches*, Bruxelles, 1961, էջ 147-148. К. Н. Юзбашян, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, էջ 87: Տեղից նշենք, որ, իբրեւ վարկած, հնարատր է մտածել, թէ հեղինակի կամ նրա մի ընթրիակողի մօտ ինչ-որ շփոթութիւն է սարդել, իսկ իրականում Սեւ որդիներ՝ Սեւորդեք են կոչուել կայսեր «Հայաստանեան թղթակիցներից» ոչ թէ վերջին երեք իշխանութիւնները, այլ այդ՝ իրօք երեքից առաւելագոյնը երկուսը, այն է՝ Թ.-Ժ. դդ. առաջին կէտում հայկական աղբիւրներից շատ լաւ յայտնի *Տաուշ-Չորագետը* (իրօք՝ Սեւորդեաց կամ նաեւ *Ուտեաց գաւառ* կոչում) եւ *Գարդման-Փառիսոսը* (ընդ որում, վերջինս իր Սահակ Սեւադայ իշխանի ջանքերով տիրեց Սեւորդեքին, սակայն ի վերջոյ այն մտաւ Լոռու Կիրիկեանների տիրոջների մէջ): Այս վարկածի ընդունման դէպքում «երրորդ թղթակից» տակ հնարատր կը լինէր եւ թարգմել, անշուշտ, *Դիզակ-Գորդուի* իշխանին:

Յովհաննէս Սենեքերիմի եղբայր Գրիգորի ու նրա որդի Փիլիպպէի մասին հաղորդում են Ստեփաննոս Ասողիկը եւ Վարդան պատմիչը²⁹: Գորդուի կամ Դիզակի թագաւորութեան մասին պահպանուել են վիճաբար տուեալներ 997 եւ 1000 թուականներից (օր.՝ Տուսի գիւղի մօտ Կարմիր եղջուր բարաւորի վրայ. «Ի Նիսթ թվի՞ն շա՞ր» [=1000 թ.] եւ ի թագաւորութեանս տե՞սն Գագիկա, որդո Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի, շինեցի տուն Աստուծոյ ի փրկութիւն հոգւո իմո եւ ծնողաց իմոց»³⁰:

Ի տարբերութիւն Փառիսոսի եւ Դիզակի՝ Խաչէնում թագաւորութեան հաստատման մասին նմանատիպ ուղղակի աղբիւրագիտական վկայութիւններ չեն պահպանուել, եւ նրա մասին մենք դատում ենք Հարեւան թագաւորութիւնների հետ զուգահեռներով ու Ստեփաննոս Օրբէլեանի աւուղղակի տեղեկութիւններով, որ վերաբերում են այդ թագաւորական տան խնամիական կապերին: Մասնաւորապէս, Սիւնեաց պատմիչի երկից գիտենք, որ Բաղաց թագաւոր Գրիգոր Ա-ի (1051-1072) աներն էր «Աղուանից», տուեալ դէպքում՝ Խաչէնի թագաւոր Սեւադան՝ Հայրը Շահանդուխտ Բ թագուհու³¹, ինչպէս նաեւ վերջինիս եղբայր, «թագաւորացն մանուկ» Սենեքերիմի, որին անժառանգ վախճանուած Գրիգորից յետոյ վստահուեց Սիւնեաց գահը (1072-1094/1096): Վահանավանքի կրկնաշարի եկեղեցու շինարարական վիճաբարում իր հօր թագաւոր լինելու մասին գրում է նաեւ Շահանդուխտը. «Ի ՇԼԵ թվականիս

[=1086 թ.]. ես՝ Շահանդուխտ, դուստր Սեւադաի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի՝ որդո Աշոտկա, վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ [ը]ստ մարմնո, ես եւ քոյրս իմ Կատայս շինեցաք զՄԿԲ Աստուծա՞ծինս փոխարէն գթոց նորա...»³²: Վահանավանքում պահպանուել է նաեւ Գրիգորի «զոքանչ» յորջորջուած Աղուանից Սոփի թագուհու 1081 թուակիր տապանաքարը, որի բնագիրն է. «Սոփի՛ Աղվանից թագուհի, զոքանչ Գրիգոր թագաւորի՝ որդոյ Աշոտկայ, մայր Շահանդուխտ: ԹԿԻ՛ն :ՇԼ: [=1081 թ.]»³³:

Վերլուծելով ոչ շատ հարուստ աղբիւրագիտական նիւթը՝ պէտք է մտածել, որ Խաչէնի իշխանութեան վերածուած թագաւորութեան, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս տեղի է ունեցել Ժ. Գ. վերջերին: Դա այն դարաշրջանն էր, երբ Բագրատունեաց թագաւոր-շահնաշահերն, ըստ էութեան, հաշտուել էին իրենց «Մեծ Հայքի» (այդպիսին էր երկրի պաշտօնական անուանումը³⁴) տարածքում փոքր աւատական թագաւորութիւնների ստեղծման իրողութեան հետ եւ, ապահովելով դաշնակցային հիմունքներով Անիի որոշակի գերակայութիւնը, հէնց իրենք էլ հաստատում էին նրանց արքայական լիազօրութիւնները՝ ինվեստիտուրան (աղբիւրներն ուղղակի նկարագրում են այդ հաս-

29 Ստեփանոսի Տարօնացոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, գիրք Գ, գլ. ԺԼ, էջ 198, գլ. ԽԸ, էջ 286. Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուա, 1861, էջ 134-135:
 30 Դիւան հայ վիճագրութեան, պր. V, Արցախ, էջ 173 (N 604), տե՛ս նաեւ էջ 169 (N 587):
 31 Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւսական, գլ. ԾԸ, էջ 233 (բնագիրն է. «ի տանէն Աղուանից՝ դուստր անցին թագաւորագին մեծին Սեւադայի»):

32 Դիւան հայ վիճագրութեան, պր. II, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1960, էջ 138 (N 405):
 33 Տե՛ս Գ. Մ. Գրիգորեան, *Վիճագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից*, - ՊԲՀ, 1980, թիւ 2, էջ 162-163. նոյնի՝ Սիւնիքի թագաւորութիւնը (X-XII դարեր), - ՊԲՀ, 2006, թիւ 6, էջ 141 (այստեղ հեղինակը շարունակում է. «Նոյն՝ 1081 թուականին, Շահանդուխտ թագուհին, «սրբասնունդ օրիորդ» կատան՝ նրա քոյրը, եւ Սեւեքերիմ եղբայրը մօր յիշատակը յաւերժացնելու նպատակով գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել մեծ տաճարի արեւելեան սարավանջին»):
 34 Տե՛ս К. Н. Юзбашян, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, էջ 81:

տատուամբ Լոուու եւ Կարսի թագաւորութիւններէ համար)³⁵: Աւելի հաւանական է մտածել, որ Խաչէնի տիրակալի թագադրումը յաջորդել է Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի շարադրման ժամանակին (982-988 թթ. միջեւ), ուստի չէր կարող յիշատակուել նրանում: Սակայն այդ ենթադրելի իրադարձութիւնը, թուում է, թէ կարող էր տեղի ունենալ, հակառակ նշուած տրամաբանութեանը, միւս մօտաւոր ժամանակակիցի՝ Ասողիկի երկրի շարադրումից (1004 թ.) առաջ, քանի որ Տարօնացի պատմիչը տեղեկութիւն չի տալիս ոչ միայն դրա, այլ նաեւ Դիզակի թագաւորութեան հռչակման մասին (997 կամ գոնէ 1000 թ. վաղ):

Մանրամասնելով՝ նշենք նաեւ, որ ամենայն հաւանականութեամբ, Փառխոսի վերջին թագաւոր Փիլիպպէն է (1003-1048), որ մէկ այլ «Աղուանից» թագաւորի՝ Ատրներսեհի հետ միասին նամակագրութիւն է վարել ժամանակի յայտնի վարդապետներից մէկի՝ Տիրանունի հետ: Երկու թագաւորների 200 հարցերին (կամ սկզբնապէս, գուցէ անգամ 500) Տիրանունի երկասիրած «Պատասխանի»-ն պահպանուել է մի քանի գրչագրերում³⁶ եւ նորերս հրատարակուել «Մատենադիրք Հայոց»-ի Ժ. դարի հատորում Ազատ Բողոքեանի կողմից: Երկասիրութեան ձեռագրական վերտառութիւնն է. «Տիրանոյ [տարբ. Տիրանայ] Հայոց վարդապետի Պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի եւ Փիպէի»: Ընագրի սկիզբն է. «Ընկալեալ զհրամանս եւ զխնդիրս ան յոյժ փութով եւ յաւերժ ըզձալի

փափաքանաւք՝ ուրախ եղեալք ի սմա իբրեւ ի պարգեւս եւ ի ձիրս երկնառաքս, եւ որպէս որք բաժանեն զաւար եւ որպէս ի հունձս, կամ ի զգաւնութեան ստացեալ զաւետիս բարեաց ի հեռաստանէ եկեալ անընչին կարաւտելոյ, զի այնչափ անդուլ իմաստութեամբ եւ զանազան ընտրողութեամբ շարյարեալ էին յոճ ըստ կարգի գրեալքս առ ի ձէնջ»³⁷: Ինչ վերաբերում է Փիլիպպէի (Փիպէի) հետ յիշատակուած «Աղուանից» թագաւոր Ատրներսեհին, ապա, կարծես թէ, նա կարող է առաւել մեծ հաւանականութեամբ համարուել Հակարի գետի վերնահովտում գտնուող Աղբրաձորի (Մայրեջրի) վանքում վերջերս յայտնաբերուած խաչքարերից մէկի կանգնեցնող «Գրիգոր իշխանաց իշխանի» հօր հետ: Վիմագրի պահպանուած հատուածում առկայ են վերջինիս անուան առաջին երեք տառերը՝ ԱՏՐ{...}, եւ դժուար է կասկածել, որ այդ անունը հէնց Ատրներսեհին է (ամբողջ 8 կարճ տողանոց ընագիրն է՝ «ԹՎ...»³⁸ / ՇԺԸ: / էր [=1069 թ.]: Ես Գրիգոր/իշխան/աց իշխ/ան, որդ/ի Ատր/...): Ընդ որում Գրիգորը եւ, բնականաբար, նաեւ իր հայրը, ըստ ամենայնի, Դիզակ-Գորոզուի՝ ԺԱ. դ. կէսերի իշխանաց իշխանները, այսինքն՝ թագաւորներն են³⁸:

Յաւելենք նաեւ, որ յայտնի է Սեմեքերիմ (Սենեքարիմ, Սինաքերիմ) անունով անձնաւորութեանն ուղղուած՝ առաւել մեծ հաւանականութեամբ, այս նոյն Տիրանունի (Տիրան) վարդապետի մէկ այլ «Պատասխանի» եւս, որի ութ ոչ մեծ հատուածները պահպանուել են Վարդան Այգեկցու քա-

ղուածքների շնորհիւ³⁹: Իհարկէ, յիշուած Սենեքերիմը՝ խիստ ենթադրաբար, բայց կարող է համարուել թագաւոր, եւ այդ դէպքում՝ գուցէ, նաեւ ո՛չ թէ Վասպուրականի Արծրունի (վերջին), այլ, ինչպէս եւ վերը նշուած Փիլիպպէն ու Ատրներսեհը, «Աղուանից» (Հայոց Արեւելից կողմանց) թագաւոր: Այսպիսի վարկածի ընդունման կամ նորայայտ փաստերով հաստատման դէպքում մենք աւելի հակուած կը լինէինք նրան նոյնացնել ոչ թէ Փառխոսի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս Սենեքերիմի (Ժ. դ. երկրորդ կէս) կամ նրա ժամանակակից, Անանիա Մոկացու եւ Իբն Հաուալի յիշատակած՝ Խաչէնի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմի հետ, այլ վերջինիս՝ այլուր չյիշուած, սակայն որոշ հաւանականութեամբ ենթադրելի նոյնանուն թոռան (ԺԱ. դ. առաջին կէս):

Ինչ վերաբերում է Խաչէնի թագաւորութեան անկման ժամանակին, ապա, առաւել մեծ հաւանականութեամբ, այն կարելի է համարել Փառխոսի թագաւորութեան կործանման ժամանակի հետ, որն ընկնում է մօտաւորապէս 1048 թուականին եւ կապուում սելջուկեան Արփ-Արսլան սուլթանի աւերիչ արշաւանքի հետ: Ըստ Վարդան պատմիչի՝ 1044-ին Բիւզանդիայի կողմից Անիի գրաւմանը յաջորդած շրջանում Գանձակի Շաղապեան Փաղլուն ամիրան, անկասկած, սելջուկների հետ համագործակցելով ու դառնալով նրանց առաջապահը Կուրի հովտում, իր

տիրապետութիւնն է հաստատում նախ՝ Փառխոսում, ապա շրջակայ գաւառներում՝ լուրջ սպառնալիք դառնալով արդէն Լոուու, Քարթլիի եւ Կախէթ-Չերէթի թագաւորութիւնների համար (ընագրի սկիզբն է. «Եւ սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպէ [իմա՝ Փառխոսի թագաւորը]՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ զնա ի կապանս զկնի մահուան հօրն եւ առնու ի նմանէ զՇաչուազ [գուցէ, իրօք, Օղոտագը Գեղարքունիում] եւ զՇօթս [գուցէ, իրօք, Սոթքը]: Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձեաց [սրբագրելի՝ Տանձեաց, իմա՝ Տանձիքը Սօթքի ճիւղաւարեւելեան անկիւնում]՝ սպանանէ եւ առնու զերկիր նորա»⁴⁰: Պատմիչի խօսքերով՝ «Եւ այսպէս զօրացեալ՝ տիրէ Խաչէնոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն եւ գոռ դնէ ընդ Գագիկայ թագաւորին Ջորոյ գետին [իմա՝ Լոուու] եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից [իմա՝ Չերէթի] եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց եւ նեղէր զնոսա»⁴¹: Պարզ է, որ Վարդան Արեւելցու՝ «տիրէ Խաչէնոյ եւ Գորոզոյ» խօսքերը կարելի է հասկանալ ոչ միայն Խաչէն եւ Դիզակ երկրամասերի ռազմակալման, այլեւ նրանցում թագաւորական իշխանութեան վերացման իմաստով, ինչպէս որ դա հաստատապէս գիտենք երրորդը նշուած Փառխոս-Սեւորդիքի համար, ուր Գրիգորի որդի Փիլիպպէից (1003-1048) յետոյ թագաւորութեան մասին այլեւս ոչինչ յայտնի չէ: Նշենք նաեւ Սիւնիքի Գրիգոր թագաւորի «զոքանչ» Սոփի թագուհու՝ Սիւնիքում ապաստանելը եւ 1081-ին Վահանավանքում թաղուելը:

Սակայն, ի տարբերութիւն Փառխոսի, Խաչէնի թագաւորական տոհմն, ամենայն

39 Տե՛ս Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, քննական բնագիրը կազմեց Շ. քնն. Հայրապետեանը, Աերածութիւնը՝ Յ. Քեօսէեանի, Եր., 1998, էջ 206 («Ի Հաւատոյ թղթէն Տիրանոյ [տարբ. Տիրանայ] Հայոց վարդապետից, գոր գրեաց առ Սինաքերիմ»), էջ 383 («Ի Հաւատոյ թղթէն Տիրանոյ [տարբ. Տիրանայ] Հայոց վարդապետի, որ առ Սեմեքարիմ»), նաեւ՝ էջ 262, 405, որտեղ թղթակցի անունը նշուած չէ: Հմմտ. նաեւ REArm., 1922, T. 2, էջ 248; Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Եր., 1962, էջ 158:

35 Տե՛ս Ռ. Ի. Մաթեոսեան, Տաշիր-Ձորագետ (X դար - XII դարի սկիզբ), Եր., 1982, էջ 74-75, 120-123:
 36 ՄՄ, ձեռ. թիւ 3710, 3006, 3824, 497, 625, 6380: Տե՛ս Գ. Տէր-Մկրտչեան, Հայկականք, Ժ, - «Արարատ», 1894, էջ 22-26. Ա. Շ. Մնացականեան, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Եր., 1966, էջ 204-210:

37 Տիրան(ուն) վարդապետ, Պատասխանի հարցմանց, Առաջարկը եւ քննական բնագիրը Ա. Բողոյեանի, - «Մատենագիրք Հայոց», հտ. Ժ. Ժ. դար, Անթիլիաս, 2009, էջ 957:
 38 Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտություններ, էջ 56-63:

40 Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 134-135: Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 92:
 41 Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 135:

հաւանականութեամբ, շարունակել է գո-
յատեւել թէկուզ եւ բաժանուած մանր իշ-
խանութիւնները: Այդ իրողութեան արձա-
գանքն են Մխիթար Գօշի խօսքերը Խոս-
րով Գանձակեցու վկայաբանութեան սկզ-
բում. «Ի ժամանակս բռնակալութեանն
Ղեմացւոց՝ յորում վաղ ուրեմն բարձեալ
էր թագաւորութիւնն Հայոց ի սպառս-
պուռ, եւ անտերուզք շրջէին մնացորդք
իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհիս վարա-
տեալք՝ ոչ հնազանդելով միմիանց, մանա-
ւանդ այնոսիկ, որ բնակեալ էին յամուրս
աշխարհին Արցախայ»⁴²: Նկարագրուած
«վարատեալ» վիճակի մի օրինակ Մխիթա-
րը ներկայացնում է իր մի այլ երկում՝
«Ժամանակագրութեան» մէջ: Այդ տեղե-
կութիւնը վերաբերում է «Խաւարան բեր-
դի», այսինքն՝ Խոսանաբերդի տէր Վասա-
կի որդի իշխանին, որը Ժ. Գ. կէսերին
(1148 թ. յետոյ) փորձեց իր եղբօր՝ «Սմպա-
տի» սպանութեան համար վրէժխնդիր լի-
նել ոմն Հասանից («որդույ Դեւրմոյ»)՝
Տաւրան անունով թուրքմէն ցեղապետի
(«որդի Դարին Տաւրան անուն՝ իշխան աշ-
խարհին ճարաբերդոյ»⁴³) օգնութեամբ:
Ե՛ւ Գրիգորը, ե՛ւ Հասանը, որոնք, ըստ Բ.
Ուլուբաբեանի ենթադրութեան, ազգակից-
ներ էին⁴⁴, իրենց դատերին կնութեան էին

42 Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատու-
թեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Անտոնեանի,
Վաղարշապատ, 1903, էջ 23:
43 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ա-
ղուանից աշխարհի, էջ 354 (Յաւելուած Բ): The
Albanian Chronicle of Mxit'ar Goš. By C. J. F.
Dowsett, - BSOAS, Vol. XXI, Part 3, London,
1958, էջ 486:
44 Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ
120: Ուսումնասիրողն այս իշխանաճիւղերի հետ
ազգակից է համարում նաեւ Խաղարկեան-
ներին ու Դեմեաններին (տե՛ս էջ 123): Սակայն
այդ տարբերակին պէտք է մեծ վերապահումով
մօտենալ, քանի որ 1232 թ. Գետիկի վանքում
ընդօրինակուած Աւետարանի ստացող՝ Խաղ-
բակի որդի Ջաշուոյ դուստր Վանեանի, նուի-
րելով այդ ձեռագիրը Հաւապտուկ վանքին («եւ
ես ի սուրբ մեծաստանն, որ կոչի Հաւապտուկ,

տուել Արցախի նախալեռնային շրջաննե-
րում հաստատուած թուրքմէն ցեղապետե-
րին: Հերքան ամրոցի եւ Կայծոյ ծառ ու
Դիւախոռ կոչուած լեռների մօտ տեղի ու-
նեցած ճակատամարտում Տաւրանը եւ
Գրիգորը պարտութիւն են կրում ու սպան-
ւում, եւ միայն 1 տարի անց հայ իշխանի
մարմինը կարողանում են բերել ու թաղել
Գանձասար վանքում, «որ էր տապանա-
տուն նախնեաց նորա»⁴⁵: Գօշի «Ժամանա-
կագրութիւն»-ն անաւարտ է մնացել, եւ
մենք չգիտենք, թէ ցանկացե՞լ է, արդեօք,
հեղինակն ուրիշ տեղեկութիւններ էլ
յայտնել Խոսանաբերդի իշխանների մա-

որ է շինեալ յանուն Սրբոյ Աստուածածնին եւ
բնական տուն եւ շիրիմ Ջաշուոյ իշխանին եւ
նախնեաց իրոց, եւ է ի գաւառին Արցախոյ, եւ է
հանդէպ ամրոցին, որ կոչի Խաւարանաբերդ. ի
տէրութիւն երից հարազատիցն՝ բարեպաշտ
իշխանացն Ջալալին, Ջաքարիայի, Խաւարի»:
Իշխանակարանում իր իշխանատոմոսը համա-
րում է ծագած վարդան Մամիկոնեանի գինա-
կից Բակի սերունդներից («եւ ելեալ ի գիշերի
եւթն հարիւր արամք գնաց Բակը՝ վարդանի
պարտութիւնից յետոյ՝ փախստեալ յերեսաց
Շապհոյ [!] արքային Պարսից յամուրսն Ար-
ցախայ, եւ կեցեալք բարեպաշտութեամբ... մին-
չեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաշուոյ...»): տե՛ս
Գ. Կաթ. Յովսէփեան, Խաղարկեանք կամ Պոս-
շեանք հայոց պատմութեան մէջ, մասն I, էջ 344.
նոյնի՝ Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ն-
դարից մինչեւ ԺԸ. դար), Անթիլիաս, 1951, էջ
881-883: Հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատա-
կարաններ. ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթե-
ոսեան, Եր., 1984, էջ 182: Իհարկէ, իշխանա-
դատեր սերունդը կարող էր եւ չիմանալ պատ-
մական իրականութիւնը, սակայն, միս կողմից,
Խաղարկեանների ամենատերտ հարեան Հա-
սան-Ջալալեանների հզօրութեան շրջանում
նրանց հետ ազգակցութեան փոխարէն այլ
տոհմակուցի մասին մտնել, թերեւս, բաւարար է
հէնց տուեալ տարբերակի հաւաստիութեանը
վստահելու համար:

45 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն
Աղուանից աշխարհի, էջ 354-355 (Յաւելուած
Բ): Նշուած ամրոցի տեղադրութեան մասին
տե՛ս Հ. Մարգարեան, Հերթ գաւառի եւ Հերթ
(Հերթան) բերդի տեղորոշման շուրջը, - ԲՆՀ,
1984, թիւ 3, էջ 123-129; The Albanian Chronicle
of Mxit'ar Goš, էջ 486-487:

սին: Սակայն դիտարկելի է, որ յիշատա-
կումը չի կարող պատահական համարուել,
քանի որ երկուսն ինչէնի թագաւորագարմ
սերունդներից խիստ սակաւաթիւ իշխան-
ներ են արժանացել նման յիշատակման:

Խօսանաբերդի այս Գրիգոր Մեծի
(ինչպէս նա կոչուած է իր դատեր՝ 1215
թուակիր վիճաբանում) յաջորդի մասին տե-
ղեկութիւնը պահպանուել է Գանձասա-
րում Նրջիս իշխանուհուն՝ 1174 թ. կանգ-
նեցրած խաչքարի վիճաբանում: Այն ժէ-
ղարուած աջից օվալաձեւ կտրուել եւ իբրեւ
բարաւոր դրուել է վանքի սեղանատան յե-
տեւի դռան վրայ: Ժամանակին Յովսէփ
Օրբէլու, ապա Սեղրակ Բարխուդարեանի
կողմից կիսատ է ընթերցուել (միայն 14
տող) եւ թերի վերծանութեան հետեւան-
քով, ըստ էութեան, թողնուել է առանց
մեկնաբանութեան: 2010 թ. մարտին հնա-
րաւորութիւն ենք ունեցել՝ յատուկ այցե-
լելու Գանձասար (ճարտարապետ Արմէն
Մկրտչեանի հետ) եւ ուսումնասիրելու
վանական շինութիւնների վերջին նորոգ-
ման ընթացքում սեղանատանից հանուած
(նրա փոխարէն նոր բարաւորի քար է տե-
ղադրուել) եւ հարաւային պարսպապատի
տակ դրուած այդ խաչքարի՝ աւելի դիւ-
րընթեւները դարձած բնագիրը, որը ժէ-
ղարուած միայն վերջին 5 տողաւորտնե-
րում է վնասուել (1-2-ից 5-6 տառերով):
Արձանագրութիւնը 25 կարճ տողերով է՝
խաչի ստորին թեւի երկու կողմերում՝ հա-
մապատասխանաբար 9 եւ 16 տող, ամե-
նակարգը՝ 8 տառ (գրչանկարը տե՛ս
յօդուածի վերջում): Վերծանութիւնը հե-
տեւեալն է.

«Թիւն / ՈՒ.Գ: էր [=1174 թ.]: Վա/խ-
տանդ տէ/ր Խաչինո / յերիտաս/արդ հա-
ս/ակի փոխ/եցաւ ի / Գրիգոր: // Ես՝ Նրջի/ս,
դուստր Հ/ասանա, թող/ն Աբասա թ/ագվո-
րին, / մայր որդոցս»⁴⁶, / որ Ա^{ստուծոյ} ան-

դ/ունդք կոր/ծանեց/ան, կան/գնեցի / ա-
ւար{...(1 կամ 2 տառ)} / իմ մաւր{...(2 կամ 3
տառ)}⁴⁷ / զի{...(4 կամ 5 տառ)}/ւա{...(4 կամ 5
տառ)}/եւ{...(5 կամ 6 տառ)}»⁴⁸: Բնագրի
սկզբում յիշատակուած հանգուցեալին
տրուած «տէր Խաչինո[յ]» բնութագրմանն
ուշադիր վերաբերուելու դէպքում մնացած
վկայութիւնները, թուում է, թէ հնարաւոր
է՛ այլ կերպ մեկնաբանել, քան ենթադրե-
լով, որ 1174 թ. «յերիտասարդ հասակի»
վախճանուած Վախտանգը Գրիգոր Մեծի
որդին ու յաջորդն է եղել, իսկ Նրջիսը՝
Գրիգորի կինը: Նա նշում է Վախտանգից
բացի (ըստ ամենայնի՝ նրանից առաջ՝)
նաեւ այլ դաւակներ (կամ գոնէ մէկին)
կորցրած լինելու մասին («որդոցս, որ Աս-
տուծոյ անդունդք կործանեցան»): Նրջիսի
միւս նշումից՝ «ես՝ ...թողն Աբասա թա-
գ[ա]վորին», երեւում է, որ իր մայրը (այ-
սինքն՝ Գրիգոր Մեծի զոքանչը, որի անու-
նը, ցաւօք, բնագրում յիշատակուած է՛) ե-

(աւելի փոքր չափերով) «մայր» բառի վերջին Բ
տառի եւ ՈՅՍ բառաճառուածի առաջին Ո-ի
վերեւում:
47 Այս «մայր» բառի առաջին տառը (Մ) փորա-
գրողն սկզբում վրիպել, ապա նկատել ու տեղա-
տրել է (աւելի փոքր չափերով) «իմ» բառի Մ-ի
աջ հորիզոնական ստեղծի տակ:
48 Տե՛ս Ի. Օրբելի, Бытовые рельефы на Хачен-
ских крестных камнях XII и XIII веков. - В кн.:
И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ
199-203 (ըստ Բ. Ուլուբաբեանի. ըստ Ա. Բար-
խուդարեանի՝ էջ 33). Դիւան հայ վիմագրու-
թեան, պր. V, էջ 69, N 198 (վերծանել է մինչեւ
«թագվորին» բառը, աւելացրել՝ «եւ կանգնեցի
գիւսչս», ապա նշել, թէ մնացած 2-3 տողերն
անընթեւներն են). Բ. Ա. Ուլուբաբեան, Գաւ-
ձասար, Եր., 1981, էջ 149-150 (նոյնը): Վերջին 5
վնասուած տողերի առաւել հաւանական վերա-
կանգնման տարբերակը համարում ենք հետե-
ւալը. «...կան/գնեցի / աւար(տ) / իմ մար(ս եւ) /
գի(մոց գա)/ւա(կացս հ)/եւ(ացեղոց)»: Այլ վիմա-
գրերում չենք հանդիպել «կանգնեցի աւարտ»
արտայայտութեանը՝ շիրմաքար դնելու իմաս-
տով, այն բացակայում է նաեւ ՆԲՀԼ-ում, բայց
հարազատ է թուում լեզուին (տե՛ս Հայերէն բա-
ցատրական բառարան, կազմեց Ա. Տ. Մախա-
սեանց, հտ. Ա, Եր., 1944, էջ 293):

46 Այս բառի առաջին տառերը (ՈՐԳ) փորագրողն
սկզբում վրիպել, ապա նկատել ու տեղատրել է

ղել է Կիւրիկեան վերջին արքաներից մէկի՝ Աբաս Ա-ի (1113-1145) դուստրը: Նրջխի հայր Հասանի (այսինքն՝ Գրիգոր Մեծի աներոջ) մասին աղբիւրագիտական այլ նիւթի բացակայութեան պատճառով առայժմ հնարաւոր չի թուում անգամ որեւէ ենթադրութիւն անել, սակայն բոլոր դէպքերում անհնար է մտածել, թէ նա կարող էր ոչ շատ նշանաւոր մի իշխանական տան ներկայացուցիչ լինել:

Հարկ է նկատել, որ առկայ թուականի տառերից երկրորդը մի փոքր տարբերում է բնագրի միւս Ի-երից: Լրիւ հասկանալի չէ նաեւ նրանից աջ գրուած մէկ կէտը (կրկնակէտ կայ միայն Գ-ից յետոյ): Եթէ ենթադրենք, թէ հեղինակը ցանկացել է Ո եւ Գ թուանշանների միջեւ, ասենք, կցագիր «և» գրել, որն Ի-ի է նմանուել, ապա թուականը կը լինէր «Ո եւ Գ», այսինքն՝ 1154 թ., որը չէր հակասի աղբիւրագիտական տուեալների մի խմբի: Սակայն, եթէ կասկածի տակ չենք առնում ընթերցող թուականի հաւաստիութիւնը, ապա նրջխի արձանագրութեան շնորհիւ պարզ է դառնում, որ անհրաժեշտ է որոշակի վերապահումով մտենալ Գրիգոր Մեծի որդի Վախտանգին յաջորդած Հասան Կրօնաւորեալի «աւագութեան» 40 կամ 30 տարիների մասին տուեալներին (մանրամասն տե՛ս ստորեւ) եւ նրա՝ խաչչնի իշխանաց իշխան («տէր») դառնալու իրական թուական համարել 1174-ը:

Ինչ վերաբերում է Գրիգոր Մեծին ու նրա Սմբատ եղբորը սպանած Հասան Դեսոմեանի տիրոյթներին, ապա հնարաւոր է ենթադրել, որ դրանք ընդգրկել են խաչչնագետի Քոլատակ վտակի վերնահովտում գտնուող Կոշիկ անապատի⁴⁹ շրջա-

49 Վանքի այս անուանումը դեռեւս ԺԳ դարում արձանագրուած է երիցս. տե՛ս Դիւան հայ վիճաբարութեան, պր. V, էջ 28, N 56 («ՈՂԳ: [= 1244 թ.]. յանում Ա^{տուճ}, եւ՝ Պոռշ, որդի իշխանի մ վասալկա, յուսով միաբանեցա կոշիկ անապատոյ. տվի...»), էջ 30, N 61 («Ես՝ վասակ,

կայքը (դա Կարկառի ձախակողմեան վտակների աւագանների հետ միասին կազմում էր աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական Պիանք գաւառի տարածքը⁵⁰), քանի որ վանքի երկու վիճագրերում յիշուած է Դեսում անունը: Դրանցից մէկը (մեծ գրանիտէ խաչքարի թեւերի շուրջը 20 կարճ տողերով) թուագրուած է 1179-ով⁵¹, իսկ երկրորդը (սրահի հիւսիսա-

գնեցի հող ի վաճառատեղս, ետու կոշիկ անապատ. միաբանքս տվի...»), էջ 32, N 68 («Ես՝ Տպէլ [վերծանուած՝ Տղէ, որը, սակայն, ուղղելի է ըստ յուսանկար 22-ի եւ գրչանկարի - Ա. Յ.], որդի (...), իմ ընչից գնեցի հող, (մի)աբանեցալ Ս^{տուճ} Եշանիս կամակցութեամբ եղբարքս կոշիկ ան[ա]պատոյ. ե[ւ] տվիմ իմ...»):

50 Տե՛ս Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ, էջ 311-316:

51 Դիւան հայ վիճագրութեան, պր. V, էջ 25, N 45 («Թի՛ն :ՈԻԸ: [=1179 թ.]: Ես՝ Օսհան, որդի իղի Դեսումս, կանգնեցի գխաչս ի տապանի եղբար իմ տր Գրիգորոս: Մէկ այլ մեծ. գեղաքանդակ խաչքարի վրայ պահպանուել է նաեւ ըստ ամենայնի, յիշուած Օսհանի 6 տողանոց տապանագիրը. «Թի՛վ :ՈՄԲ: է [=1203 թ.]: Ես՝ Տե՛ր Գագիկ եւ եղբայր իմ Գրիգ[ո]ր, որդիք Օսհանայ, կանգնեցաք գխաչս հար մերոս...» (նոյն տեղում, էջ 26, N 49): Ի դէպ, տէր Գագիկի անունը յուշում է, որ Դեսումեանների հետ կարելի է կապել եւ կոտորածի տեղում աւագ Դեսումի անունը վերականգնել վերջերս Կարկառի Պտրեցիք վտակի հովտում գտնուող Օխտը եղցի հնավայրում յայտնաբերուած մի խաչքարի վիճագրում (Ս. Սարգսեան, Յ. Առաքելեան, Պատարա, Եր., 2006, էջ 10). «Թի՛ն :ՈԺԲ: էր [=1163 թ.]. Գագիկ որդի Հասանա, թոռն [Դեսումայ...], (յիշենք, որ Արցախում Գագիկ անունը քիչ է տարածուած եղել. բացի Պիանքի այս դէպքերից, այն արձանագրուած է մէկ դէպքում էլ՝ որպէս Դիգակի յայտնի թագաւորի անուն): Սրա հետ կարող է կապուել եւ նոյն Հասանի (որը լիովին կարող է լինել Գրիգոր Մեծ խօսանաբերոցու թշնամին) տապանագիրը համարուել մօտակայքի միւս խաչքարի վիճագիրը (նոյն էջում). «Ի :ՈԺԳ: թվականի [ի] [=1165 թ.]. կանգնեցա խաչս ի տապանի Հասանա՝ որդի [ի]...» ակ[...]: Որք] երկրպագեք, յաղաթս յիշեցէք»: Իհարկէ, չափազանց հրապուրիչ է նաեւ մօտակայ տապանատան մէջ կանգնած խաչքարի 10 տողանոց վիճագիրը (էջ 9. «Թի՛ւ /

յին պատի մեծ խորշի մէջ, հողմնահարուած, 7 տողանոց, խաչքարեան վասակ իշխանի որդի Պոռշի՝ 1244 թուակիր վիճագրի կողքին) յայտնում է խիստ մեծածաւալ նուիրատուութիւնների մասին. «{Յուս}ովն Ա^{տուճ}, ես՝ Դեսում, որդի Սիսաքին, ամուսին իմ՝ Մամա, միաբանեցաք ս^{տուճ} ուխտիս եւ տվաք Մ^{տուճ} Գերգա ի մեր հայրենեց նովս Ղ{...} Ածերածու Մ^{տուճ} Գերգի մեր տնաջաղաց⁵² իւր հողի խոշոտլարէն ու զՁկնաւազն ու {...}... Միաբանք տվին :Գ: ժ{ամ...}...»⁵³: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ մօտաւորապէս 1250 թ. Հասան Ջալալ իշխանի գլխաւորութեամբ մոնղոլ փոխարքայ Սարթախի մօտ ժամանած 5-6 հոգանոց խմբի մէջ էր «եւ զԴեսում իշխանն՝ պարկեշտ պատանի»⁵⁴, որին հնարաւոր է համարել վերջին վիճագրում յիշատակուած՝ Սիսաքի որդի եւ Մամայի ամուսին Դեսումի հետ: Նշենք նաեւ, որ, ինչպէս յայտնի է Հաղբատի Ա. Աստուածածին (անուանուած՝ Խաթունաչէն) եկեղեցու 6 տողանոց ընդարձակ, ցաւօք, անթուակիր շինարարական վիճագրից («Կամաւն Ա^{տուճ}, շինեցաւ եկեղեցիս արդեամբք Խաթունին՝ {դատե}ր Հասանայ, յազգէ Դեսոմեանց, որ բերաւ ի խաչչնոյ յամուսնութի՛ն Ջաքարիս, որ էր տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց: Ընդ որում եկեալ

եղբարք իւր՝ Սենեքերիմ եւ Սեւադա, եւ փոխեալ ի Բ^{տուճ}՝ եղան առ դրան կաթողիկէիս. իսկ Խաթունն վ^{տուճ} յիշատակի նոցա եւ իւր շինեաց զսա...»⁵⁵), Դեսոմեանների մի ճիւղը ԺԲ. դ. վերջում կամ ԺԳ. դ. սկզբին տեղափոխուել է Լոռի (Բլուզ Ջաքարէ վահրամեանը զոհուել է 1204/ 1205 թ.⁵⁶): Հաղբատի տապանատան կենտրոնական շարքի շիրմաքարերի մէջ կան «Սեւադայ» եւ «Սինաքերիմ թ[ո]ւն աւագ Սենաքերիմա» գրութիւններով քարեր (դրանց միջեւ միայն երկու տապանաքար կայ)⁵⁷, որ կարող են վերագրուել Խաթուն

55 Կ. Ղաֆադարեան, Հաղբատ. ճարտարապետական կառուցումները եւ վիճակն արձանագրութիւնները, Եր., 1963, էջ 220 (N 111): Ծարումակութեան մէջ ասում է «Եւ ես՝ տր Յովհաննէս եւ միաբանքս Հաղբատս, տուաք սոցա խոնք մի պատարագ ի տարոջ...»: Յիշատակուած վանախար-եպիսկոպոսը կարող է լինել ԺԲ. դ. ամենավերջից մինչեւ ԺԳ. դ. 20-ական թթ. տիրակալած Յովհաննէս Ա-ն՝ Գրիգոր Ա. Ծարեցու որդին, կամ, առաւելագոյնը՝ նրան յաջորդած նոյնանուն եղբորորդին (Հասան Ա. Ծարեցու եւ Երկանաբազուկ Դօփ իշխանուհու որդին), որի յաջորդ Համագասպ եպիսկոպոսի առաջին թուակիր արձանագրութիւնը 1242-ից է (իսկ մինչեւ դարավերջ Հաղբատի եպիսկոպոսներ են եղել եւս երկու Յովհաննէսներ, որոնցից վերջինն էլ էր Ծարի իշխանատոհմից): Հմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. Ա, էջ 98-99: Տե՛ս նաեւ ստորեւ:

56 Տե՛ս Ա. Ի. Օսհանապարեան, Վահրամեանների իշխանութիւնը, Եր., 1990, էջ 67-68, 128: Ի դէպ, ուսումնասիրողի կարծիքով՝ խաթունաչէնի եկեղեցու շինարարական վիճագիրը կարող էր գրուած լինել մինչեւ Ջաքարէի եւ խաթունի որդի Վահրամ Բ. Գագեցու կողմից Ծամբորի ազատագրման ժամանակը (վիճագիրը Վահրամեանների տիրոյթների շարքում այդ քաղաքը չի յիշատակում), այսինքն՝ 1205-1216/1217 թթ. միջակայքում (նոյն տեղում, էջ 70-71): Տեղին նշենք, որ Վահրամ Գագեցին վախճանուել է մոնղոլների դէմ 1249 թ. անյաջող ապստամբութեան ժամանակ կամ դրանից ոչ շատ անց, ըստ Արտ. Օսհանապարեանի՝ մօտաւորապէս 1250/ 1251 թ. (նոյն տեղում, էջ 127-128):

57 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 187 (N 54, իր. ի):

:ՈԼ: էր [=1158 թ.]: Ես՝ Սմայատ՝ որդի / վասակա, կանգնեցի գխաչս որդոյ իմոյ Դաթոնիս, որ կիսաւրեա փոխեցաւ ի Բ^{տուճ}» կապել Հասան Դեսումեանի միւս թշնամու՝ Գրիգոր Մեծի եղբայր Սմբատ վասակեանի հետ (աշխարհագրական միջավայրը յարմար է, խնդիր կայ լոկ ժամանակի հետ կապուած):

52 Կարելի է վերծանել նաեւ՝ Մերոնա[յ] ջաղաց փխ մեր տնաջաղաց:

53 Նոյն տեղում, էջ 28, N 57:

54 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մէլիք-Օսհանաչեանի, Եր., 1961, գլ. ԾԵ, էջ 359: Պատմիչը նշում է նաեւ Գրիգոր Տղայ իշխանին, Մարկոս վարդապետին եւ Գրիգոր եպիսկոպոսին:

Դեսուժեանի եղբայրներին. այդպէս յայտ-
նի է դառնում նաեւ նրանց՝ Սեմեքերիմ ա-
նունով պապը, որը ենթադրաբար կարող է
համարուել Կոչիկ անապատում երկիրցս յի-
շատակուած Շահան իշխանի հայր Դեսու-
ժի եղբայրը կամ հօրեղբորորդին:

Ընդամին, Դեսուժ անունը մէկ անգամ
յիշուած է նաեւ Չարեքդարի վանքի, ըստ
ամենայնի, ԺԳ. դարի մի փոքրածաւալ
նուիրատուական վիմագրում (եկեղեցու
հիւսիսային պատին, ներքուստ, 6 տողա-
նոց եւ անթուակիր). «Ա^{սուժ} վ, ես՝ Դեսուժ,
միաբանեցա ս^{ու}բ ուխտիս, տվի :Ա: գիրք...
{տվ}ին :Ա: ժամ ս^{ու}բ Ակորի տաւնին»⁵⁸:
Սակայն այդ տարածքի տարբերակն աւելի
քիչ է հաւանական նաեւ այն պատճառով,
որ հէնց նրանից մի փոքր հեռու՝ Վաղու-
հասին արեւմուտքից հարեւան Վարդա-
նագոմեր (Վարդանլու) գիւղատեղիի եկե-
ղեցու բարաւորին է պահպանուել արձա-
նագրութիւն՝ գրուած «Տաւղան իշխանի
ամուսին» եւ Գրիգոր Մեծ իշխանի
դուստր Հասանի (բնագրում՝ Հասն) անու-
նից, որն արդէն Բ. Ուլուբաբեանի կողմից
իրաւացիորէն համագրուել է Մխիթար Գօ-
շի նշած թուրքմէն ցեղապետի այրու
հետ⁵⁹: Տեղին նշենք, որ այդ շինարարա-
կան վիմագիրը ժամանակին ընթերցուել է
Մեսրոպ Տէր-Մովսէսեանի կողմից⁶⁰, իսկ
վերջերս այն լուսանկարել եւ ճշգրիտ վեր-
ծանել-սրբագրել է ճարտարապետ Սամուէլ
Այվազեանը (բաւականին միաձեւ յստակ
տառերով եւ լաւ պահպանուածութեամբ
վիմագրի 10 տողերից ութը կիսակոր են,
իսկ վերջին երկու՝ բարաւորի կիսաշրջանի
կենտրոնում տեղադրուած կարճ տողերը՝
հորիզոնական): Լուսանկարը եւ վերծա-

58 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 133 (N 444):
59 Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 121:
60 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, Ար-
ցախ, էջ 115 (N 383):

նութիւնը սիրալիրաբար տրամադրելու
համար մեր երախտագիտութիւնը յայտնե-
լով ուսումնասիրողին՝ օգտագործում ենք
առիթը՝ այդ ուշագրաւ բնագիրը տալու
ամբողջութեամբ.

«Ի թվիս :ՈԿԳ: էր [=1215 թ.]: Ի վեր-
ջին եւ ի նվաղել ժամանակիս, / ես՝ Հա-
ս[ան] (?), դուստր Մեծին Գրիգորոյ, ամու-
սին Տաւղան/այ իշխանի, շինեց[ի] գեկեղե-
ցիս ի փրկութիւն իմ / եւ առն իմո[յ]: Ա-
ռաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցի/ն՝ առն ի-
մոյ արասցեն: Եթէ ոք յիմ/ոց կամ յաւտա-
րաց խափանել ջ/անայ՝ մեր մեղացն պար-
տակ/ան է. կատարիչ[ք]ն աւրհ/նին/ յԱ^{սուժ}
»: Պահպանում ենք Հաս[ան] բառի
կողքին Մ. Տէր-Մովսէսեանի դրած հար-
ցական նշանը, քանի որ տուեալ անձնա-
նունն արական է եւ մեզ յայտնի է նրա
իգական տարբերակի օգտագործման ուրիշ
դէպք (այդպէս՝ նաեւ Հր. Աճառեանին)⁶¹:

61 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառա-
րան, հտ. Գ, Եր., 1946, էջ 51): Նրախտագիտու-
թիւնն եւ յայտնում ուսուցչիս՝ Պարոյր Մուրա-
դեանին՝ վերծանութեան՝ փորագրողի ինչ-ինչ
վրիպումների պատճառով առաջացած բարոյ
տեղիների քննարկման համար: Դրանցից 4-5-
րդ տողերի «Առաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցի/ն՝
առն իմոյ արասցեն» հատուածը հնարաւոր է
թում հասկանալ իբրեւ՝ «Առաջին [հերթին]՝ երբ
[պատրաստ] լինի եկեղեցու աւագ [խորան]ը՝
թո՛ղ [պատարագն] իմ ամուսնու [հոգո՛ւ
իշատակի] համար անեն»: Հմմտ., օր., Գրիգոր
Հեղուրի՝ Գօշաւանքի Ա. Գրիգոր կաթողիկէի՝
շինարարական վիմագրում՝ «...[ե]տուն զաւագ
խորան՝ ինձ պատար[ագել]» (Դիւան հայ վիմա-
գրութեան, պր. VI, Իջեւանի շրջան, Կազմեցին
Ս. Ա. Աւագեան, Հ. Մ. Ջանփոլադեան, Եր.,
1977, էջ 106, N 236, լուսանկարը՝ տախտ. 10Բ):
ճաւ Դադիվանքում Արզուխաթունի շինա-
րարական վիմագրում՝ «հատաստեցաք կամա-
կցութեամբ եղբարցս՝ զաւագ խորանի զպատա-
րագն յանուն վերագրելոցս կատարել...» (Դիւան
հայ վիմագրութեան, պր. V, էջ 198-199, N 708,
լուսանկարը՝ տախտ. XXIX): Ս. Կարապետեան.
Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային
Արրբեջանին բռնակցուած շրջաններում, Եր.,
1999, էջ 110, N 1):

* * *

Արդ՝ Մխիթար Գօշը, Կիրակոս Գան-
ձակեցին եւ ԺԲ.-ԺԳ. դդ. տարատեսակ
աղբիւրներ բազմաթիւ առիթներով յիշա-
տակում են Խօխանաբերդը (նաեւ՝ Խախա-
նաբերդ, Խախախան բերդ, Խոյախան բերդ ձե-
ւերով)՝ իբրեւ Խաչէն երկրամասի, ապա
նրա Ներքին Խաչէն անուանուած հատուա-
ծի իշխանատոհմի (Գանձասարի կառուցող
իշխանի անունով կոչուած՝ Հասան-Ջալա-
լեաններ⁶²) կենտրոնական ամրոց: Սակայն
այն իրականում գոյութիւն ունէր շատ
վաղուց (մասնագէտներն ամրոցի հիմնադ-
րումը վերագրում են վաղ միջնադարի ժա-
մանակաշրջանին), պարզապէս Թ.-ԺԱ. դդ.
աղբիւրներում, մեր կարծիքով, աւելի տա-
րածուած էր նրա Խաչէն անուանումը:
Մեզ հասած աղբիւրներից այդ բերդա-
նունն առաջին անգամ յիշատակուած է
Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Ա-
ղուանից» երկում (որը գրուել է 982-988
թթ. միջեւ⁶³): Ըստ նրա նախավերջին գլխի
(Գ.իբ) տեղեկութեան՝ 827 թ. Դադիվանքի
«խորածորում» Միհրանեան կոչուած վեր-
ջին Վարազ Տրդատ իշխանն իր մանկահա-
սակ որդու հետ սպանուել է իր ազգական
Ներսէս Սիւնեցի իշխանի կողմից: Այդ ող-
բերգական դիպուածը շարագրում է նաեւ
ԺԳ. դ. վերջի պատմիչ Ստեփաննոս Օրբէ-
լեանը (իսկ բուն աղբիւրը Թ. դ. վերջի Հա-
յոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու՝

62 Հասան Ջալալի բազմակողմանի մշակութային
գործունէութեան դրուագների մասին եւ վկա-
յում տէր Իսրայէլի կողմից Յայսմաուրքի խմ-
բագրման հովանաւորումը, ինչպէս նաեւ վա-
նական Վարդապետի հետ նրա թղթակցութեան
նորայայտ փաստը. վերջինիս «Հարցմունք եւ
պատասխանիք» երկասիրութեան մի հատուա-
ծի խորագիրն է. «Խնդիրք Վահրամա իշխանի
եւ Ջալալա Հաչէնոյ զաւտի եւ պատասխանի
Վանական վարդապետի» (տե՛ս ՄՄ, ձեռ. թի
2189, թ. 211ա, ըստ՝ Ս. Ի. Շահնազարեան,
Վահրամեանների իշխանութիւնը, էջ 174):
63 Մանրամասն տե՛ս Ա. Ա. Акоюн, Албания-
Альпак, էջ 214-216, 223:

մեզ հասած պատմական երկն է⁶⁴): Իշխա-
նի սպանութիւնից յետոյ նրա այրին իր
Սպրամ դստեր հետ կարողացել է փախչել
եւ գիշերային ծանր ուղեւորութիւնից յե-
տոյ ապաստանել Խաչէն բերդում («ի
բերդն Խաչէնայ»), որտեղ Սպրամն ամուս-
նացել է տեղի նշանաւոր իշխան Սահլ
Սմբատեանի որդու՝ Ատրնբրեսի հետ:

Խաչէն ամրոցն աւանդաբար համադ-
րուել է առաւելապէս այլ բերդերի հետ՝
Կաչաղակաբերդի (նաեւ՝ Հախախաղաց,
Սախախաղաց՝ Խաչէնագետի վտակ Քոլատա-
կի ու Կարկառի վտակ Պտրեցիքի ջրբաժան
լեռնաշղթայի վրայ) կամ Հաւախաղացի
(նաեւ՝ Հաւախաղաց, Լաչիհ-դայա՝ Տրտուի
թութխու եւ Արագչուր վտակների ջրբա-
ժան լեռնաշղթայի վրայ)⁶⁵: Սակայն Կիրա-
կոս Գանձակեցու տուեալները չեն հաստա-
տում այդ համադրումները: Պատմիչը
յայտնում է, որ մոնղոլները, ըստ ամենայ-
նի, Կարկառի հովիտն ասպատակելուց յե-
տոյ, նախ նուաճեցին Հախախաղաց (=Կա-
չաղակաբերդ) ամրոցն ու դաժան հաշուե-
յարգար տեսան նրա պաշտպանների հետ,
ապա հասան Խօխանաբերդին (Գանձասարի
գիմաց գտնուող) եւ պաշարեցին այնտեղ
Հասան Ջալալ իշխանի գլխաւորութեամբ
պատսպարուած բնակչութեանը: Բացի այդ,
նա, երեք անգամ յիշատակելով Խօխանա-
բերդը, երկիրս նշում է, որ ամրոցն այդպէս
էր կոչուած «ըստ պարսկական բարբա-
ռոյն», «ըստ բարբառոյն Պարսից» (այ-
սինքն՝ «մահմեդական[արաբ, պարսիկ կամ
թիւրք ժողովուրդ]ների լեզուով»)՝ հաւա-
նաբար, նկատի ունենալով «գեղձ» կամ

64 Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Պատմա-
աշխարհագրական եւ վիմագրագիտական
հետազոտութիւններ, էջ 268-272:
65 Տե՛ս Մ. Յովհաննիսեան, Հայաստանի բերդե-
րը, Վենետիկ, 1970, էջ 452. Շ. Մկրտչեան,
Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապե-
տական յուշարձանները, էջ 23. ՀՅԾՏ Բա-
նարան, հտ. 2, Եր., 1988, էջ 665, 945. Ս. Սարգ-
սեան, Խաչէնի ամրոցները, էջ 39-45:

«սալոր» նշանակող արաբերէն «խոխ», «խուխ» բառը⁶⁶ կամ մի ուրիշ օտարալեզու եզրոյթ: Սակայն դրանից նաեւ բխում է, որ Գանձակեցու իմացած՝ ամրոցի «հայերէն» անուանումը մի հանրայայտ անուն էր, որը յիշատակելը նաեւ պարզապէս կրկնութիւն կը լինէր: Դժուար չէ կռահել, որ դա հէնց «Խաչէն»-ն է, որը նաեւ ողջ երկրամասի անունն էր՝ իբրեւ այդպիսին բազմիցս օգտագործուած պատմիչի շարադրանքի բովում, այդ թուում նաեւ՝ մեր նշած գլխի վերնագրում. «Լ. Վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչէնոյ...»⁶⁷ (Համտ. նաեւ բուն շարադրանքը. «Այս իմաստունն իշխանս, իբրեւ ետես զյարձակումն անօրինացն, ամբացոյց զբնակչէս իրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ» ըստ բարբառոյն Պարսից»⁶⁸):

Յաւելենք, որ Խօխանաբերդ-Խաչէն համադրութեան օգտին վկայող կարող է դիտուել Մովսէս Դասխուրանցու՝ վերը բերուած տեղեկութիւնը Սահլ Սմբատեանի Խաչէն բերդի մասին, քանի որ Խօխանաբերդն աւելի մօտ է Դաղիվանքի «խորածորին», քան Կաչաղակաբերդը (յիշենք, որ պատմիչի տեղեկութեան համաձայն՝ Դաղիվանքին շատ մօտ գտնուող միւս Հաւախաղաց ամրոցը կառուցուել է աւելի ուշ՝ Գրիգոր Ատրնբրսեհեանի կողմից): Նոյնի օգտին է խօսում, գուցէ, նաեւ Անանիա Մոկացու յիշատակած «Խաչինայ» վանքի գոյութեան փաստը, եթէ նկատի ունենանք, որ Խօխանաբերդի անմիջապէս լանջին գտնուում է Հաւախտուկ կոչուած վանական համալիրը, իսկ Կաչաղակաբերդին մօտիկ նման հոգեւոր հաստատութիւն յայտնի չէ: Վերջապէս, թուում է, թէ կարելի է ուշադրութիւն դարձնել այն հանգա-

66 Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 481. Հայոց լեզուի բարբառային բառարան, հտ. Բ, Եր., 2002, էջ 247:
 67 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. Լ, էջ 267:
 68 Նոյն տեղում, էջ 269:

մանքի վրայ, որ Խօխանաբերդի լեռնազանգուածը յառնում է անմիջապէս Խաչէնազետի հովտի վերեւում, իսկ Կաչաղակաբերդը նրա Քոլատակ վտակի հովտի միջնամասում է, ընդ որում՝ Խաչէնազետ գետանունը եւ նրան յարող Խաչիճաճոր-ը յիշուած են արդէն ԺԲ.-ԺԳ. դդ. մի քանի վիմագրերում⁶⁹: Նկատենք նաեւ, որ Խաչէն-Խօխանաբերդ համադրումն իր քարտեզներում անվերապահօրէն կատարում է Բ. Յարութիւնեանը⁷⁰:

Անդրադառնանք նաեւ Խաչէնի բերդի մասին ԺԳ. դ. առաջին կէսի արաբալեզու հեղինակ Մուհամմադ ան Նասաւիի «Սուլթան Ջալալ ադ Դին Մանկրուրնայի կենսագրութիւնը» վերտառութեամբ երկր տեղեկութեանը: Ըստ սկզբնաղբիւրի մեր կողմից օգտագործուած ռուսերէն թարգմանութեան բնագրի՝ մոնղոլներից փախչելով Առաջաւոր Ասիա հասած Ջալալ ադ Դին սելջուկ խորեզմշահի վեզիր Շարաֆ ալ-Մուլքի բանակը 1227 թ., անցնելով Արաքս գետից հիւսիս, «կանդ առաւ Խաչէն»

69 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 38, N 82 («Ա: լուծ ի Խաչիճաճոր...»), 214, N 755 («տվաթ զ[հող]... ի Խաչէնազետի...»): Տե՛ս նաեւ էջ 138 (N 460), որը վերաբերում է ուշ շրջանի՝ 1757 թ. («ՌՄԶ: թվ՞ն. կաման Աստուծոյ, ես՝ Ղուկաս վ[ա]րդ[ա]յ[ա]ն[ա]յ, շինեցի մէկ ճաղաց [ի] Խաչանակետ...»), ինչպէս նաեւ 1473 թ. (սկզբնապէս սխալմամբ ընթերցուած՝ 1493) մի յիշատակարանում («գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Խաչէնաճորոյ, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի...» տե՛ս Մ. եպ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 247. ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, հտ. Բ, Եր., 1958, էջ 344):

70 Տե՛ս, օր.՝ Բ. Յ. Յարութիւնեան, Հայաստանի պատմութեան ատլաս (Ա մաս), Եր., 2004, էջ 81 եւ ցախորդները: Ըստ այսմ պէտք է ուղղում կատարել մեր վերջին գրքի (Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ) «Արցախի կենտրոնական եւ Սիւնիքի հիւսիս-արեւելեան գաւառները ըստ «Աշխարհացոյց»-ի» ներդիր քարտեզում, որտեղ եւս Խաչէնաբերդը շտապողաբար համադրուած է ոչ թէ Խօխանաբերդի, այլ Կաչաղակաբերդի հետ:

ամրոցի մօտ, որտեղ գտնուում էր Ջալալ ադ Դինը [ուղղելի՛ Ջալալ Դօլան-Ա. Յ.]՝ Իւանէ ալ Գուրջիի քրոջորդին: Շարաֆ ալ Մուլքն սկսեց սպառնալ ու սարսափեցնել նրան, մինչեւ որ հաշտութեան մասին համաձայնութեան եկաւ՝ այն պայմանով, որ իրեն կը վճարեն 10 հազար դինար բերբերի եւ ազատ կ'արձակեն նախկինում ու վերջերս գերուած 700 մահմեդականներին⁷¹: «Խաչէն... միջնադարեան ամրոցի» համար թարգմանիչը եւս ծանօթագրում է. «Ճիշտը՝ Խօխանաբերդ»⁷²:

Ան Նասաւիի նման՝ Խաչէն «նահանգի» ամուր բերդի յիշատակութիւն է պահպանուել նաեւ ԺԳ. դ. առաջին կէսի մի պարսկալեզու անանուն հեղինակի «Աշխարհի զարմանալիքները» վերտառութեամբ աշխարհագրական երկում (Ն. Միկրուխո-Մակլայը դրա ստեղծման առաւել հնարաւոր ժամանակը համարում է 1220-ական թթ. կէսերը⁷³): Բառարանի ձեւով կազմուած այդ սկզբնաղբիւրի՝ մեր կողմից օգտագործուած ռուսերէն թարգմանութեան բնագրում արաբերէն «խա» տառի տակ շարադրուած է նաեւ, ըստ ամենայնի, «Խաչէն» բառաթողուածը, թէպէտ պահպա-

71 Живноеписание султана Джалал ад-Дина Манкбурны, Пер. с арабского, предисловие, комментарии, примечания и указатели Э. М. Бунятова, Баку, 1973, էջ 211: Ծարուակութիւնն է. «Դրանց մէջ կային եւ այնպիսիք, որ գերեվարուել էին մանուկ հասակում, իսկ գերութիւնից ազատեցին արդէն ծերունի» (էջ 211-212):
 72 Նոյն տեղում, էջ 388: Մանօթագրութեան մէջ թարգմանիչը շարուակում է նաեւ. «Կիրակոս Գանձակեցի. «Ամրոցը, որ պարսկերէն կոչուում էր Խօխանաբերդ («Տիրակալի քարէ բնակարան»): Վերջին «թարգմանութիւնը» լիովին անհասկանալի է (այս առիթով խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում նաեւ իրանագետ Արմանուշ Կոզմոյեանին):
 73 Н. Д. Миклухо-Маклай, Географическое сочинение XIII в. на персидском языке (Новый источник по исторической географии Азербайджана и Армении), - "УЗ Института Востоковедения", т. IX, Москва-Ленинград, 1954, էջ 184-185 (վերնագրի եւ հեղինակի մասին տե՛ս էջ 177-184):

նուած միակ ձեռագրում վերնագիր-բառի տեղը բաց է թողած), որում ասուում է. «Այդ նահանգը [վիլայաթ] դժուարամտօքելի է, լեռների եւ անտառների մէջ. պատկանում է Առաւելի մարզերին [ա՛մալ]. այնտեղ հայեր են [պարում]. Աբխազի [իմա՛ Վիրք] մարդիկ նրանց փաղիշահին տագաւեր [իմա՛ թագաւոր] են անուանում. նրանք աբխազների հետ խոռովութիւններ են անում: Նրանք ամուր բերդ ունեն: Իսլամի տիրակալ-փաղիշահը՝ յաղթանակող աշխարհիկ եւ հոգեւոր գործերում, 611 թ. [Հիջրէի = 1214/1215 թթ.] արշաւեց ձորի [դարէ] միջնամասը. նրա զօրքերը յաղթանակ տարան եւ համատարած կոտորած արեցին»⁷⁴: Բերուած շարադրանքի բովում «Խաչէն նահանգի» «ամուր բերդի» մասին նշելու եւ միաժամանակ անունը չտալու հանգամանքը որոշ հաւանականութեամբ թոյլ է տալիս մտածել, թէ պատճառը, գուցէ, երկու աշխարհագրական միաւորների նոյնանունութիւնն է եղել: Թէպէտ բացառուած չէ եւ մի ուրիշ տարբերակ: Պարսիկ անանունի երկում Խաչէնի վրայ Ատրպատականի սելջուկ աթաբեկի (Ն. Միկրուխո-Մակլայը ծանօթագրում է, որ դա, հաւանաբար, եղել է Էլտիուզեան Մուզաֆար ադ-դին Ուզբեկը) 1214/1215 թ. արշաւան-

74 Նոյն տեղում, էջ 204-205. Алжауб ад-и уния (Чулеса мира). Критический текст, перевод с персидского, введение, комментарии и указатели Л. П. Смирновой, Москва, 1993, էջ 199: Ծարուակութիւնն է. «Արանք սորուկներ ու հարուստ ռազմաւար բերեցին եւ հրի մատնեցին այն բազմաստուածների տներն ու բնակավայրերը. [այդպէս] դրսեւորեց [փաղիշահի] ողջ վեհութիւնը: Այդ վայրի ապրանքներն են՝ հաճելի գինիները, բուրաւտ խճորները, խաղողը եւ քաղցր մուրը»: Բնագրի՝ «այնտեղ հայեր են [պարում]» արտայայտութեան փոխարէն (Ս. Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի ձեռ. А-253, թ. 202բ. «արմանի անդ») առաջին ռուսերէն թարգմանութեան՝ «այնտեղ հայեր կան» սխալի մասին տե՛ս Ս. Մ. Мурадян, История - память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ер., 1990, էջ 87:

քի նկարագրությունը եզակի է: Այն այլ զուգահեռ չունի որեւէ աղբիւրում, եթէ միայն չփորձենք համադրել դրա եւ Վերին ու Ներքին Սաչէնների իշխանների մահուան ժամանակները. ըստ Վարդան պատմիչի՝ նոյնանուն Վախթանգները վախճանուել են նոյն տարում՝ Հայոց թուականութեան 663-ին, այսինքն՝ 1214 թ.⁷⁵: Եթէ նման համադրումը բաւարար դիտուելի՝ չկասկածելու էլ տկուզեանների արշաւանքի ժամանակի հաւաստիութեանը (ուստի եւ՝ արշաւանքի հետ խաչէնցի իշխանների վախճանի՝ թէկուզեւ անուղղակի կապին), ապա, միգուցէ, ճիշտ կը լինի պարսիկ գրողի աւարառու «տեղեկատուների» ճանաչած «ամուր բերդի» տակ ընկալել այդ պահին Սաչէնի իշխանապետութեան իրաւասութեամբ օժտուած Վախթանգ Հաթերքցու կենտրոնական ամրոցը, այսինքն՝ Հաթերքը:

Իսկ հայկական աղբիւրներում բերդանունան Սաչէն տարբերակի վերջին յիշատակումներից մէկը գտնուում ենք ԺԲ դ. երկրորդ կէսի հզօր եւ բարեպաշտ իշխան, Վախտանգի որդի Հասան Կրօնաւորեալի՝ Դադիվանքում անձամբ տեղադրած («եւ բերի զխաչաքարս չազուաշատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք») մեծադիր խաչքարի (նախկինում կոչուած՝ «խաչվիմ») թիկունքին փորագրուած 1182 թուակիր ծաւալուն արձանագրութեան մէջ⁷⁶:

75 Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 184: Դուրսէ, աման մի այլ զուգահեռ կարող է դիտուել եւ 1214 թ. Դադիվանքի շինարարական վիմագրում Արզուխաթուն իշխանուհու թողած վկայութիւնը՝ անդրանիկ որդի Հասանի զոհուելու մասին. «սպանաւ ի թորքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս» (տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 199, N 708. Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 108, N 1):

76 Տե՛ս Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 118 (N 72). Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 198, N 707 (վրիպումներով):

Նրա բնագրում նշուած Սաչիցաբերդի եւ այլ աղբիւրների Սօխանաբերդի համապատասխանութեան վերաբերեալ կասկածները՝ փարատելու համար կարեւոր է հանգամանալից քննարկել վերջին տասնամեակներում պատմագրութեան մէջ արմատաւորուած մի վրիպում: «Խաչվիմի» վիմագրի հեղինակը յայտնում է, որ 40 տարի աւագութիւն է վարել («կացի յաւագութեան ամսս»⁷⁷) ու յաղթական պատերազմներով եղել տէրը երկրի 4 ամրոցների՝ Հաթերոյ, Հանդաբերդի, Սաչիցաբերդի եւ Հաւախաղացի. բայց այժմ բաժանել է երկիրն ու ամրոցները («չբերդերս եւ զգաւառս ետու») իր ճորդիներին եւ կնոջ հետ միասին եկել կրօնաւորելու Դադիվանքում՝ իր եղբօր մօտ («մաւտ յիմ եղբայրս՝ ի տէր Գրիգորէս») ⁷⁸: Հասան Կրօնաւորեալը, հաւանաբար, Հէնց Դադիվանքում էլ վախճանուել է (տապաւնաբարը գտնուած չէ), ընդ որում՝ մինչեւ 1190 թ., քանի որ այդ տարում նրա եղբայր՝ «աէր Գրիգորէս» վանահայրը մենակ է երկու խաչքար կանգնեցրել իր եղբայր Սմբատի եւ մայր Շուշիկի տապանների վրայ: Դրանցից առաջինը հետագայում դրուել է Դադիվանքի դմբեթաւոր փոքր եկեղեցու պատի մէջ (6 տողանոց բնագիրն է. «Թ^Թ թ: ՈԼԹ: [=1190 թ.]. ես՝ տէր Գրիգորէս, / առաջնորդ ս^Թ բ ուխտիս, / կանգնեցի զխաչ^Թ

77 Նկատենք, որ նոյն Հասան Կրօնաւորեալի կին Մամախաթունը՝ «Մամայ թագուհին» («դուստր կուրիկայ թագաւորին»), նոյն՝ 1182 թուականին Դադիվանքում կանգնեցրած խաչքարի (ցաւօք, անրկայուն կորած) վիմագրի նոյնանուն եւ թատեստում (բայց առանց ամրոցանունների յիշատակման) նշում է. «Կացաք յաւագութեան^Թ յամս :/:, այսինքն՝ Յ տարի: Տե՛ս Ս. Եպիֆանիոսարեան, Արցախ, էջ 204. Ռմտ. Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 215 (N 762). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 120 (N 81):

78 Տե՛ս վերելում, ծնթ. 76: Նկատենք, որ ըստ Մամախաթունի վիմագրի՝ ամուսինները եկել են կրօնաւորելու Հասանի եղբայր «տէր Գրիգորիսի» եւ «իրենց որդի» Գրիգորիսի մօտ. «եւ [մօտ] որդին մեր՝ համաճուճ նորին» (տե՛ս ծնթ. 77):

եղբ/աւր իմո Սմպատա, որդո / Վախտանգա. որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէ՛ք»⁷⁹): Իսկ երկրորդի (այն ընկած է եղել Կաթողիկէի մուտքի առջեւ՝ սիւնասրահի մէջ) քառատող բնագիրն է. «Թ^Թ թ: ՈԼԹ: [=1190 թ.]. ես՝ տէր Գրիգորէս, որդի / Վախտանգա, կան[գն]եցի զխա/չս մաւր իմո Շուշկան. որք / երկրպագէք, յաղաւթս յիշեցէ՛ք»⁸⁰:

ԺԲ-ԺԳ. դդ. մատենագիրների մօտ, ինչպէս նաեւ վիմագրերում ու յիշատակարաններում, իբրեւ Հասանի եւ Մամախաթունի (որը դուստրն էր Մածնաբերդի վերջին՝ Կիւրիկէ Գ թագաւորի) ամենից նշանաւոր որդի, հանդէս է գալիս Հաթերքի տիրակալ Վախտանգը: Նրա մահուանից յետոյ է (1214 թ.), որ իր՝ մինչ այդ նաեւ երկու որդիներին կորցրած Արզուխաթուն տիկինը (Քուրդ իշխանաց իշխանի դուստրը) միանձնուհի է դառնում Դադիվանքում, ուր իր թողած ծաւալուն վիմագրի խօսքերով՝ նոյն թուականին աւարտին է հասցնում հոյակերտ Կաթողիկէն («Կատարեցաւ ս^Թ բ քաւարանս ի թուականութեան^Թս Հայոց :ՈԿԳ: [=1214 թ.]»⁸¹): Իր Դատաստանագրքի ստեղծման ժամանակի մասին Մխիթար Գօշը գրում է հետեւեալ ձեւով. «Ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան՝ եղեւ ի թուականութեանն Հայոց ՈԼԳ [=1184 թ.]... յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ, ի վաղընջուց ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Սաչէնոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ, որդւոյ Վախտանկայ՝ կրանաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանգայ, ի դղեկին, որ անուանի Հայթերք»⁸²): Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ «նեղեալ ի տաճկաց [Մխիթար Գօշը – Ա. Յ.] ի սաղրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփաննոսի, եւ եկեալ նորա յաշխարհն Սաչէնոյ առ Վախթանկ իշխանն Հաթերքոյ եւ առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, եւ անդ դադարեալ ամս ինչ»⁸³: Իր երկի յաջորդ գլխում պատմիչը յայտնում է. «Յայսմ ամի եղեւ աւարտ հռչակաւոր եւ խնդատես եկեղեցոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուութեամբ Վախթանկայ Սաչէնեցոյ՝ տեսուն Հաթերքոյ, եւ եղբարց իւրոց՝ Գրիգորոյ եւ Գրիգորիսի եւ Սոյդանայ եւ Վասակայ, եւ այլոց իշխանաց բարեպաշտաց, որդւոց Քրդին..., նաեւ քոյր սոցա, որում անուն էր Արզուխաթուն՝ կին Վախթանկայ Հաթերքեցոյ»⁸⁵: Գօշավանքի կաթողիկէի շինարարական արձանագրութեան մէջ այս նոյն փաստի մասին յիշատակուած է. «Ի ՈՒՆ [=1191 թ.], զկնի Դամաց առնլո զԵ^Թ սաղ^Թ Սալահադինն, սկսեալ եկեղեցիս ս^Թ բ ի նորո Գետիկ եւ կատարի յամս Ե... ձեռամբ վ^Թ դ^Թ սպիտիկ Մխիթարա..., ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանի Վախտանգա եւ նորին զուգակցի Արզուխաթունի եւ նորին եղբարցն Սմպատա, Վասակա, Սոյդանա, Գրիգորո,

79 Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 115 (N 44):

80 Նոյն տեղում, էջ 117 (N 71): Վմտ. Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 213, N 752 (քաղած է Մեսրոպ Տէր-Մովսիսեանի հրատարակածից):

81 Արզուխաթունի («ամուսին Վախտանգայ» թագաւորագն տ^Թ լ Հաթերք եւ ամեւայն վերին Սաչէն») շինարարական արձանագրութեան բնագիրը տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 198-199 (N 708). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 108-110 (N 1):

կայ՝ կրանաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանկայ, ի դղեկին, որ անուանեալ կոչի Հաթերք, գլխաւորի այլոց իշխանացն, եւ կողմանցն Կիւրիկեայ մեծի իշխանին Ռոբենի...»⁸² (Դատաստանագրքի՝ նոյնպէս հեղինակային՝ Բ խմբագրութեան մէջ աւելի համառօտ է. «...ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ եւ որդւոյ նորա Վախտանգայ, ի դղեկին, որ անուանի Հայթերք»⁸³): Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ «նեղեալ ի տաճկաց [Մխիթար Գօշը – Ա. Յ.] ի սաղրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփաննոսի, եւ եկեալ նորա յաշխարհն Սաչէնոյ առ Վախթանկ իշխանն Հաթերքոյ եւ առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, եւ անդ դադարեալ ամս ինչ»⁸⁴: Իր երկի յաջորդ գլխում պատմիչը յայտնում է. «Յայսմ ամի եղեւ աւարտ հռչակաւոր եւ խնդատես եկեղեցոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուութեամբ Վախթանկայ Սաչէնեցոյ՝ տեսուն Հաթերքոյ, եւ եղբարց իւրոց՝ Գրիգորոյ եւ Գրիգորիսի եւ Սոյդանայ եւ Վասակայ, եւ այլոց իշխանաց բարեպաշտաց, որդւոց Քրդին..., նաեւ քոյր սոցա, որում անուն էր Արզուխաթուն՝ կին Վախթանկայ Հաթերքեցոյ»⁸⁵: Գօշավանքի կաթողիկէի շինարարական արձանագրութեան մէջ այս նոյն փաստի մասին յիշատակուած է. «Ի ՈՒՆ [=1191 թ.], զկնի Դամաց առնլո զԵ^Թ սաղ^Թ Սալահադինն, սկսեալ եկեղեցիս ս^Թ բ ի նորո Գետիկ եւ կատարի յամս Ե... ձեռամբ վ^Թ դ^Թ սպիտիկ Մխիթարա..., ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանի Վախտանգա եւ նորին զուգակցի Արզուխաթունի եւ նորին եղբարցն Սմպատա, Վասակա, Սոյդանա, Գրիգորո,

82 Մխիթար Գօշ, Գիրք դատաստանի, աշխատաւորութեամբ Խ. Թորոսեանի, Նր., 1975, էջ 25:

83 Նոյն տեղում, էջ 546, ծնթ. 32:

84 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. ԺԳ, էջ 209 (փոխել ենք կէտադրութիւնը):

85 Նոյն տեղում, գլ. ԺԳ, էջ 215:

Գրիգորիսի եւ նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տաւնի Աստուծոսնին .Գ. աւուրսն, բայց զ.Ա.՝ Հասանա՝ հաւր Վախտանգա, եւ զ.Ա.՝ մաւր նոցին Մամին, եւ .Բ.՝ հաւր Արզու խաթունի՝ Քրդին բարեպաշտին...»⁸⁶: Նոյն Վախտանգին նուիրած իր Դատաստանագրքի օրինակի (իմա՝ Բ խմբագրութեան մայրը, որ պահուած է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում, 1237) յիշատակարանում Մխիթար Գօշը նշում է. «...իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ», նաեւ շարունակութեան մէջ՝ «Յիսուս Քրիստոս... նորոգեա՝ հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթունն ի կեանս անմահա...»⁸⁷:

Նոյն տարիներին իբրեւ Ներքին Խաչէնի տիրակալ է հանդէս դալիս Վախտանգ Տանգիկը (կինը՝ Սարգիս Զաքարեան ամիրսպասալարի դուստր Խորիշահ)՝ Գանձասարի հոյակերտ տաճարի կառուցող Զալալ Դօլայ Հասանի հայրը եւ որդին «Հասան Մեծի»: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «Այլ եւ բարեպաշտուհի մայր սորա իմա՝ Հասան Զալալի, յետ մահուան առն իւրոյ Վախթանկայ [9-10 ձեռ.՝ Վախտանգայ], զոր Տանգիկն [4 ձեռ.՝ Թանկիկն] կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր՝ զԶալալն եւ զԶաքարէ եւ զԻւանէ, չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ...»⁸⁸: Այս Վախտանգը մօտաւորապէս 1212 թ.⁸⁹ ըն-

86 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 64-65, N 127, լուս. 27: Բնագրում թուականը շտապողաբար «1197» են վերծանել: Վախտանգ իշխանաց իշխանի մօր անունը Մամինն ձեռի փոխարէն կարելի է նաեւ տալ վերականգնումով՝ Մամային կամ Մամայաթունին:

87 Տե՛ս Մխիթար Գօշ, Գիրք դատաստանի, էջ 548, ծնթ. 32:

88 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. I, էջ 268:

89 Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 143-144: Ուսումնասիրողը յիշատա-

դօրինակուած Աւետարանի պատուիրատուն է, որի յիշատակարանում ասուած է. «Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ Աւետարանիս հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածահաճոյ առն Վախտանգա, որդւոյ Հասանա, որդւո Վախտանգա, եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի»⁹⁰: Ի դէպ, շարունակութեան մէջ ասուած է նաեւ. «Արդ, ես՝ Վախտանգ եւ լծակից իմ Խորիշահ, ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ, ծնաք երիս ուստերս եւ երիս դստերս...»: Վախտանգի երեք որդիները մասին է նշուած նաեւ Վաննի խաղբակեանի 1232 թ.՝ վերը բերուած յիշատակարանում («ի տէրութիւն երից հարազատիցըն՝ բարեպաշտ իշխանացն Զալալին, Զաքարիայի, Իւանէի»)՝⁹¹: Ընդամին, Գանձասարի 1238 թ. աւարտուած կաթողիկէի («աւարտումն եղեւ շնորհաւք ողորմութեամբ ամենալգութ Տեառն :ՈԶէ: թՎ/ [=1238 թ.]») շինարարական՝ 1240 թուակիր

կարանի պնդումը՝ ստացողներ Վախտանգի եւ Խորիշահի կողմից եկեղեցի կառուցած լինելու մասին («շինեցաք զեկեղեցիս եւ երեւելի սպասիք զարդարեալ ներքո եւ արտաքո եւ հաստահեղուն յարիմուածովք») իրաւացիօրէն կապում է Մեծարանից Ս. Յակոբավանքում արեւմտեան եկեղեցու պատի վրայ Խորիշահի թողած՝ 1212 թուակիր 12 տողանոց վիմագրի հետ, ուր ասուած է. «Ուս: թի / =1212 թ./ ես՝ Խորիշահ, ամուսին Վախտանգայ տ՛ր Խաչէնոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերջ տին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղակիս իշեցէ՛ք» (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 12, N 2):

90 ՄՄ, ձեռ. թի 378, ք. 308ա: Հմմտ. Ի. Օրբելի, Իսկանդար, князь Хаченский, - В кн.: Ի. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, էջ 148. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ՝ Ժ. Գ. դար, էջ 94:

91 Տե՛ս վերեւում, ծնթ. 44: Վարդան Վարդապետի բնագրում ասուած է անգամ երկու որդիների մասին «մեռա... թողլով երկու տղայս» (տե՛ս ստորեւ, ծնթ. 97):

վիմագրում յիշատակուած են Վախտանգի ու Խորիշահի չորս որդիները՝ «Զալալ Դաւլայ Հասան», «Զաքարէ», «Դաւլայ», «Իւանէ»՝ հերթականութեամբ, եւ վերջինից առաջ՝ միակ դուստրը՝ Մարինը կամ Մարինան (=Մարինէ՝ «Ա: շաբաթն՝ իմ քուերն Մարինո»⁹²): Դրանից հետեւում է, որ Վախտանգի չորրորդ որդին՝ Իւանէն, ծնուել է խնդրոյ առարկայ յիշատակարանը գրելուց յետոյ, ուրեմն՝ ենթադրաբար, 1212-ի եւ 1214-ի միջակայքում: Իսկ նրա 3 դուստրերից երկուսն էլ պէտք է վախճանուած համարուեն մինչեւ 1238 թ.: Եւ իրօք, Գանձասարեան երկու պահպանուած, 1202 թուակիր խաչքարեր կանգնեցուել են իշխանի վաղամեռիկ զաւակների շիրմաներին: Դրանցից մէկի ստորին կտորը, որը հետագայում իբրեւ սալաքար դրուել է գաւթում, ունի 6 տողանոց հետեւեալ տապանագիրը. «Ես՝ Վախտանգ, որդի Հասանա կանգնեցի զխաչս ի տապանի որդոյ իմոյ. [յ]աղաւթս յիշէ՛ք. {թուին} :ՈՄԱ: [=1202 թ.]»: Միւս խաչքարի պահպանուած ստորին կտորի (տաճարի հիւսիսային պատի տակ դրուած) կիսատ տապանագրում խաչի հորիզոնական թեւի վերեւում երկուական տողով, «Թի/ւն / :ՈՄ/Ա:» նշումից յետոյ առկայ է տառացիօրէն նոյն բնագիրը, սակայն այն պակաս է մնում 4-րդ տողի «ի տապան/ի...» բառերից յետոյ⁹³: Պարզ է, որ դրանցից յետոյ բնագրում դժուար չէ վերականգնել «դստեր իմոյ...» բառերը: Իսկ ինչ վերաբերում է առաջին տապանագրին, ապա կա՛մ պէտք է հաւանական համարուի, որ փորագրողը, «որդոյ իմոյ» ասելով, այնուամենայնիւ, նկատի է ունեցել Վախտանգի մանկահասակ դուստր զաւակին, կա՛մ պիտի ենթադրենք, թէ 1212-1214-ի երկամեայ միջակայքում ծնուել են իշխանի երկու կրտսեր որ-

դիները (այսինքն՝ ոչ միայն Իւանէն, այլեւ՝ Դօլան): Նշենք նաեւ, որ դժուար է ընդունել Բ. Ուլուբաբեանի կարծիքը, թէ 1202 թ. վախճանուած որդին կարող էր լինել Դօլան⁹⁴, քանի որ Գանձասարի շինարարական վիմագրում (1240 թ.) վերջինիս յիշատակումն, ըստ էութեան, անհավանական է դարձնում նրա վաղամեռիկ լինելը: Բայց միեւնոյն ժամանակ, վերջին հանգամանքը չի բացառում Դօլայի (որի երկրորդ անունը, հաւանաբար, Սմբատ է եղել. տե՛ս ստորեւ) վախճանուած լինելը մինչեւ 1232-ին Վաննի խաղբակեան իշխանադատեր յիշատակարանի գրուելը, ուր թուարկուած են միայն նրա երեք եղբայրները («ի տէրութիւն... Զալալին, Զաքարիայի, Իւանէի»)՝⁹⁵:

Արդ, ըստ Վարդան Արեւելցու տուեալների, երկու Վախտանգները վախճանուել էին նոյն տարում. «Ի ՈԿԳ թուին [=1214 թ.] ...մեռաւ Վախթանկ բուն տէր նորա իմա՝ Հաթերքի՛ եւ որդիքն իւր տարածամ⁹⁶, եւ միւս Վախթանկն Սակոեանց՝ փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչէնոյ՝

94 Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 141:

95 Տե՛ս վերեւում, ծնթ. 44 եւ 91:

96 Ինչպէս տեսանք, իր վաղամեռիկ զաւակների մասին արձանագրել էր նաեւ Արզուխաթունը: Հանդարտորում վերջերս յայտնաբերուած վիմագրում (ժամատան բարատրի վրայ, 7 տող) ունենք Հաթերքի իշխանների մասին մի ուշ յիշատակում. «ՉԻԵ: թ^{ուին} [=1276 թ.], Աստուծով շինեցաւ ժամատունս եւ եկեղեցիքս Դ^{ատր} վ^{արդ}ապետի ձեռաք: Ազատեցին զսա հաթերքեցիքն յանձամ չարէ, Աստուծ արհմէ զնոսա: Ով խափանէ՛ դատի»: Տե՛ս Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 27. Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան, Հանդարտորդի վաճառք, էջ 70: Վերջին հեղինակները դա փորձում են կապել ԺԳ դ. երկրորդ կեսում մոնղոլների օժանդակութեամբ իբրեւ թէ հաստատուած ինչ-որ փոքր իշխանատոմի հետ (տե՛ս էջ 15, 70): Սակայն բնագիրը թոյլ է տալիս մտածել, որ խօսքն իրականում ուղղակի նախկինում եղած հօգոր իշխանների մասին է:

92 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 38-40 (N 82), լուսանկարը՝ տախտ. X:

93 Նոյն տեղում, էջ 63 (N 172) եւ էջ 67 (N 187):

թողլով երկու տղայս...»⁹⁷: Ժամանակին Յովսէփ Օրբէլին փորձ կատարեց՝ ցոյց տալու ժԹ դարի մասնագէտներին մօտ այդ երկու Վախտանգներին տարանջատել չկարողանալու հետ կապուած լուրջ բարդութիւնները⁹⁸: Զարմանալիօրէն դրան ի պատասխան՝ արդէն Հր. Աճառեանի, ապա Խ. Թորոսեանի, Բ. Ուլուբաբեանի ու նրանց հետեւորդների ջանքերով պատմագրութեան մէջ շտապողաբար ներմուծուեց պարզապէս ծայրայեղացուած մի դրոյթ՝ իբրեւ թէ տարբեր անձնաւորութիւններ են եղել նաեւ Հաթերքի Վախտանգի որդի Հասան Կրօնաւորեալը, եւ Ներքին Խաչէնի Վախտանգ Տանգիկ իշխանի հայր Հասան Մեծը՝ «Սակո» կոչուած, իբրեւ թէ, մէկ ուրիշ Վախտանգի որդին⁹⁹:

Սակայն այսօր աւելի ամբողջական աղբիւրագիտական նիւթի հիման վրայ հարկ է ուղղել նշուած վրիպումը եւ նկատել (ինչպէս դա արել էր, թէկուզ, որոշ չափով խառնակ ձեւով, դեռեւս Մակար Բարխուդարեանը¹⁰⁰), որ Հաթերքի իշխա-

97 Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 184:

98 И. Орбели, *Асан Джалал, князь Хаченский*, էջ 147, 163:

99 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, Եր., 1944, էջ 53-54; Գ. Կաթ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ*, էջ 167, ծնթ. 2. Մխիթար Գօշ, *Գիրք դատաստանի*, Աշխատասիրութեամբ Խ. Թորոսեանի, էջ 546-549 (ծնթ. 32). Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 135-152: Հմմտ. նաեւ նորագոյն աշխատանքներում՝ Է. Լ. Դանիէլեան, *Գանձասարի պատմութիւն*, Եր., 2005, էջ 99. Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան, *Հանդարեղի վանքը*, էջ 16-17, 62 (Գանձասարի 1181 թ. խաչքարի պատկերաքանդակի գնահատման առիթով):

100 Տե՛ս Մ. Եպ. Բարխուտարեանց, *Պատմութիւն Աղուանից*, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 140: Այս դիտարկումը փորձել է մերժել (եւ խիստ անյաջող հիմքերով) դեռեւս Կ. Տեր-Մկրտչեանը (*Կարապետ Եպիսկոպոս, Դո-*

նաց իշխան Վախտանգը պարզապէս որդին էր նոյն Հասան Մեծ Կրօնաւորեալի երկրորդ կնոջ՝ Կիւրիկէ թագաւորի դուստր Մամախաթունի (կամ Մամայի, գրականութեան մէջ երբեմն կոչուած նաեւ՝ Մամքան), իսկ Ներքին Խաչէնի Վախտանգ Տանգիկը զաւակն էր նրա առաջին կնոջ՝ Բաղաց արքայադուստր Կատա-Թագուհու: Որ վերջինս վաղ է հեռացել կեանքից, երբեւում է 1181 թ. մահացած նրա Խաթուն դստեր տապանազրից՝ Գանձասարի Ս. Յովհաննէս կաթողիկէի հիւսիսային պատի տակ կանգնած մեծադիր խաչքարի վրայ: որում ասուում է. «Թիւն :ՈԼ: էր [=1181 թ.]: Ես՝ Հասան, որդի Վախտանգա, կանգնեցի զխաչս ի տապանի դստեր իմո Խաթունին եւ մար իւր Թագուհո՞՞ դստեր թագ[ա]վորին Բաղաց»¹⁰¹: Ուշագրիւ լինելու դէպքում ակնյայտ է թւում, որ հայրը իր դստեր մօրը կարող էր «ամուսին իմ» չանուանել (փոխարէնը՝ «մաւր իւր Թագուհո[յ]») միմիայն այն դէպքում, եթէ տուեալ պահին նա կենդանի չէր, իսկ իր «պսակեալ ամուսինն» արդէն ուրիշ կին էր (այն է՝ Մամախաթունը): Իսկ որ Խաչէնի իշխանուհի Բաղաց թագաւորի դուստր Կատան կարող էր նաեւ պարզապէս Թագուհի կոչուել (առանց բուն անուան յիշատակման)՝ երբեւում է հետեւեալ զուգահեռից. Դադիվանքից ոչ հեռու, Տրտուի աջափնեայ Ս. Աստուածածին վանքի վիմագրերում Հասան Մեծի երկրորդ տիկինը կոչուած է ե՛ւ «Մամայ թագուհի», ե՛ւ (երկիցս) պարզապէս՝ «Թագուհի»՝ դուստր Կիւրիկէ թագաւոր

իւսանք եւ Մելիք-Ճահնազարեանք. Ս. Լշմիս-ծին, 1914, էջ 49-52), սակայն այն անվերապափորէն ընդունուել է, օր.՝ Կ. Թումանովի կողմից (C. Toumanoff. *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne*, էջ 238), ապա, ի վերջոյ նաեւ՝ Բ. Ուլուբաբեանի (տե՛ս ստորեւ, ծնթ. 108):
101 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 67 (N 186):

րի»¹⁰²: Ի դէպ, իբրեւ վարկած, հնարաւոր է նաեւ մտածել, որ Հասանի աւագ որդի Վախտանգի մականունը՝ Տանգիկ (Թանգիկ), կապուած է եղել, գուցէ, ոչ թէ իր անուան երկրորդ կէսի հետ՝ Վախ-Տանգ-իկ (ինչպէս աւանդաբար ենթադրուել է մինչ այժմ¹⁰³), այլ իր մօր անուան մի տարբերակի՝ Թագուհի-Թագիկ-Թանգիկ:

Կատարուած քննութիւնից յետոյ այլեւս որեւէ հիմք չի մնում՝ կասկածելու, որ միասնական Խաչէնի բաժանումն աւելի փոքր իշխանութիւնների (Ներքին Խաչէն, Վերին Խաչէն, Ծար եւ այլն) կապուած է եղել, իրօք, 1182 թուականին Հասան Մեծի՝ կրօնաւոր դառնալու, այլ ոչ թէ դրան նախորդած ինչ-որ անորոշ ժամանակի ու անորոշ հանգամանքների հետ (ինչպէս որ փորձ է կատարուած ամփոփելու, օր.՝ Բ. Ուլուբաբեանի մօտ¹⁰⁴): Կնոջ հետ հեռանալով աշխարհիկ կեանքից՝ Հասան Մեծ Կրօնաւորեալը, իր իսկ վկայութեամբ, իր 6 որդիներին բաժանել էր (թէպէտեւ, ըստ ամենայնի՝ ոչ հաւասարաչափ) իր «զաւաւր», «բերդերը» եւ «հողանիւթը»: Վերջին եզրոյթն, ի դէպ, Դադիվանքի վիմագրերին եւ ժԲ.-ԺԷ. դդ. այլ տարբերոյթ փաստաթղթերի յանգող (ցաւօք՝ սխալաշատ, տեղ-տեղ խառնակուած ու վատ ընթերցուած բնագրերով) մի ուշ, սակայն ինչ-ինչ ուշագրաւ նիւթեր պարունակող կալուածագրից է, որի պարբերութիւններից մէկում մասնաւորապէս արձանագրուել է. «Ես՝ Հասան՝ որդի Վախտանգա, եւ եղբայր իմ Գրիգոր՝ առաջնորդ ս^{ուրբ} ուխտիս ըսա[՞] Դատէի վանիցս եւ սակա...[՞] Սմբատ եւ եղբարքս մեր բաժանեալ տաք զՄեծն Սաչէն...[՞] Սակոս եւ երկիրս Ծար ի վերին

102 Տե՛ս Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 77-78:
103 Տե՛ս, օր.՝ Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 140. Է. Լ. Դանիէլեան, *Գանձասարի պատմութիւն*, էջ 87:
104 Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 123 եւ յետոյ:

Սաչէն տվաւ Հասանայ, եւ կանգնեցաք խաչ մի Մատաղիտոյ վերն, բոլոր բթին սահման Սաչէնոյ եւ Ծարայ: Ես՝ Հասան կացի աւաքութեան ամս քառասուն, եւ եղեւ ինձ Զ որդիս, եւ շինեցի Գ [բնօրինակում գրչական վրիպակով՝ Գ] բերթս՝ Հաթերքաբերթ, Չիջաբերթ, Հաւախաղացին եւ Դաշտաբերթ: Զբերթերս եւ զգաւառս ետու որդոց իմոց եւ ես եկի ի վանքս՝ մօտ տէր Գրիգորի եւ տէր Աթանախի [!] եւ եղէ կրօնաւոր. եւ երկրիս հողանիւթն այս է՝ Հաթերքոյ գետն ի վեր մինչեւ ի սարն Ապասայ...»¹⁰⁵: Պարզ է, որ Հասան Մեծի «զաւաւր», «բերդերի» եւ «հողանիւթի» բաժանման արդիւնքում Մեծ կամ Ներքին Խաչէնում (Խօխանաբերդ-Խաչիմաբերդ կենտրոնով եւ Գանձասարով) հաստատուել է Տանգիկ Վախտանգը, իսկ Վերին Խաչէնում (Հաթերքաբերդ կենտրոնով եւ իշխանապետութեան իրաւունքներով)՝ նրա կրտսեր եւ մօր կողմից խորթ, նոյնանուն եղբայրը: Բայց ինչո՞ւ էր նրանց հայրը վերջինիս եւս կոչել նոյն Վախտանգ պապանունով: Թւում է, թէ տուեալ արտապանունով կարող է համադրուել Հաթերքի իշխանապետական նոր կենտրոնի ձեւաւորման բազմանշանակ իրողութեան հետ եւ, թերեւս, մեկնաբանուել Հասան Մեծի երկրորդ ամուսնութեան՝ ոչ այնքան անձնական, որքան ինչ-որ «քաղաքական» ենթատեքստում:

Արդ՝ վերեւում կատարուած ճշգրտումների շնորհիւ նաեւ պարզ դարձաւ, որ Հասան Կրօնաւորեալը կարող է՝ առաւել մեծ հաւանականութեամբ վերջնականապէս նոյնացուել այն Հասան Գեռաքարեցի (Իմա՛, ինչպէս իրաւացիօրէն համարուում է՝ Գառնաքար գիւղից՝ անմիջապէս Խօխանաբերդի տակ) Խաչէնի իշխանի հետ, որն,

105 Տե՛ս Ս. Քամալեան, «Աղուանից աշխարհի» թաղէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի դարպաւ-կալուածագիր. - "Кавказ и Византия", вып. 2, Ер., 1980, էջ 153:

ըստ Ստեփաննոս Օրբէլեանի տեղեկութեան, ամուսնացել էր Սիւնեաց նախապետ-ըին թագաւոր Գրիգոր Բ-ի միակ դուստր եւ ժառանգորդ Կատայի հետ: Իր աներոջ ու նրա Սմբատ եղբոր՝ նոյն տարում վախճանուելուց յետոյ Հասանը դարձաւ Բաղայ թագաւորութեան վերջին գահակալը, իսկ Բաղաբերդի անկման նախօրէին ստիպուած եղաւ կնոջ եւ ընտանիքի հետ հեռանալ «ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն [տարբ. Խաչէնք]»¹⁰⁶: Նշենք նաեւ, որ Զալալ Դօլայ Հասանը մի քանի վիճաբերում կոչուած է «թոռն Բաղայ թագաւորի» (ընդ որում, այդ բնորոշումը երբեմն վերագրել են նրա կողքին յիշուած կնոջը՝ Մամքանին, որն իրականում Մածնաբերդի Կիւրիկեան արքայադուստր էր)¹⁰⁷: Ի դէպ, նախկինում իր կատարած սխալն ուղղելով, վերը նշուած Խաչուհի 1181 թ. տապանագիրը քննելիս Հասան Մեծի եւ Հասան «Գեռաբարեցու» նոյնութիւնն, ի վերջոյ, ընդունում է նաեւ Բագրատ Ուլուբաբեանը, որը գրում է. «Առաւել հիմնաւոր է ճանաչուած Գարեգին Յովսէփեանի կարծիքը, որի համաձայն՝ Հասանը պէտք է լինէր Գեռաբարի տէր

Խաղբակեաններէց, եւ նրա արձանագրութիւններն էլ պահպանուել են Գեռաբարի կողմերում՝ նրան ներկայացնելով իբրեւ Խաղբակեան Զաջուռի եղբոր եւ Խաղբակի որդու (Գարեգին կաթողիկոս [Յովսէփեան], Խաղբակեանք կամ Պոօշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 16, 41): Սակայն յիշեալ վարկածներէց եւ ոչ մէկը չի հիմնաւորուած աղբիւրագիտական ստոյգ նիւթերով: Եւ ահա այս խաչքարի արձանագրութիւնը գալիս է հաստատելու, որ Բաղայ Կապան թագաւոր գնացած-վերադարձածը, - որն ամուսնացել էր Բաղայ թագաւորի դստեր հետ, - եղել է Խօխանաբերդի տէր Վախտանգի որդի Հասանը: Ստ. Օրբէլեանի կողմից նրան տուած «գեռաբարեցի» որոշիչը չի խանգարում մեր տեսակէտին, քանի որ Գեռաբարը գտնուած է Խօխանաբերդի մօտ եւ մտնում էր Խօխանաբերդի կամ Ներքին Խաչէնի իշխանութեան տիրոջին մէջ: Զարմանալի չէ նաեւ Ստ. Օրբէլեանի կողմից Թագուհուն տրուած Կատա անունը: Պէտք է մտածել, որ կա՛մ Բաղայ թագաւորի դուստրն ունեցել է կրկնակ անուն, կա՛մ էլ պատմիչն է անունը չփոխել: Ուրիշ կերպ չի կարող լի՛նել, որովհետեւ նոյն Օրբէլեան պատմիչի միւս տեղեկութիւններէց գիտենք, որ միայն Գրիգոր թագաւորի միակ դուստրն է ամուսնացել Խաչէնի իշխանագունի հետ, որի անունն էլ եղել է Հասան: Ըստ այսմ թիւրիմացութիւն պիտի համարել Հասան Մեծի կնոջ Մամքան անունը (Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, էջ 85 եւ «Առանշահիկների առհմածաւր»)»¹⁰⁸:

Յաւելենք, որ Ստեփաննոս Օրբէլեանը Սիւնիքում Հասան Խաչէնցու կարծատեղ գահակալումը թուագրում է 1166-1170 թթ.՝

106 Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. Կ, էջ 233:
 107 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 29 (N 59), էջ 40-41 (N 83), էջ 80 (N 239): Հմմտ. ստորեւ, ծնթ. 219: Վիմագրերում իշխանը կոչուած է ե՛ր Հասան, ե՛ր Զալալ, ե՛ր Դալա, ե՛ր Հասան Զալալ, ե՛ր Զալալ Դալա: Դիւան-ի V պրակում եւ այլ վիմագրական ժողովածոներում հրատարակուածներին պէտք է ւսելացնել նախորդ տասնամեակի սկզբին Համլետ Պետրոսեանի յայտնաբերած 10 տողանոց արձանագրութիւնը (Գ. Ա. Սեդրաք, *Новонайденный хачкар из Арчадзора*, - ԼՀԳ, 1991, թիւ 4, էջ 147-152): Խօսուածքային ոճով բնագիրն է (փոքր սրբագրումներով՝ ըստ լուսանկարի եւ գրչանկարի). «ԹՎԻՃ: 29: /-1257 թ./: Իշխանութիւն Զալալիսն, պատրոնութեանը Հասանայ, / եւ՝ Սահլուն, գնացել եմ ի Մուր/դն ու գնացել եմ ի Սոնէթ ու գնացել եմ ի Կաւարիայ, ու ի: հետի / ի առագմ եմ մտել ու յաղաղութի՞ դուս եկել: Կանգնեցի յաչս ինձ եւ ամուսնացի իմո. յաղալթս յիշ/է՛ք. յաղալթս յիշեցէ՛ք»:

108 Բ. Ա. Ուլուբաբեան, *Գանձասար*, էջ 155: Հասան Մեծի՝ երկու անգամ ամուսնացած լինելը (Կատայի եւ Մամախաթունի հետ), ինչպէս նշեցինք վերեւում, իրաւացիօրէն ընդունուած է նաեւ Կիրիլ Թումանովի կողմից (տե՛ս ծնթ. 100):

որը հակասում է Հասան Կրօնաւորեալի եւ նրա Մամախաթուն տիկնոջ պնդումներին՝ 40 կամ գոնէ 30 տարի Խաչէնում «յաւագութեան» լինելու վերաբերեալ (1143-1182 կամ 1153-1182): Սակայն արձանագրելի է, որ Բաղայ թագաւորութեան անկման ժամանակի մասին Սիւնեաց պատմիչի պատկերացումները որեւէ այլ աղբիւրագիտական հաստատում չունեն եւ կարող են դիտուել իբրեւ իրականից՝ մինչեւ իսկ 1-3 տասնամեակ շեղում: Դժուար է, օրինակ, առանց վերապահութեան ընդունել աղբիւրի մատուցած պատկերը՝ Գրիգոր Բ-ի «ընդադրոս» թագաւորութեան՝ այդքան երկար տեւելու մասին՝ 1094/ 1096-1166 թթ.: Վահանաւանքի վերջին տասնամեակների պնդումների շնորհիւ յայտնաբերուած տապանագրերը պարզ ցոյց են տալիս, որ իրական ժամանակագրութեան հետ Օրբէլեանի պատկերացումները մեծ շեղումներ են պարունակում նաեւ Սիւնեաց նախորդ արքաների գահակալման տարիների դէպքում¹⁰⁹: Այս առիթով նշելի է, որ Սիւնեաց պատմիչն, ամենայն հաւանականութեամբ, սխալուել է նաեւ Գրիգոր Բ-ի միակ դստեր մասին իր պնդման մէջ: Յիշենք, որ Յովհաննաւանքի մի վիճաբերում ունենք հետեւեալ ուշագրաւ բնագիրը. «Թուին :ՈՒԷ: [=1178 թ.]. ողորմութեամբ Աստուծոյ, ես՝ Շուշիկ, դուստր Գրիգորի թագաւորին Բաղայ, հալածեալ ի մերմէ գաւառէ, եկի յաշխարհս Հայոց, ի վանս Յոհանու, յորում գլխատարումն եւ զթաղումն առի մարբ իմով...»¹¹⁰: «Զկատարումն եւ զթաղումն առի» արտայայտութիւնից բխում է, որ Բաղայ Գրիգոր Բ թագաւորի (իշխած 1094 կամ 1096 թուա-

կանից մինչեւ ժԲ դ. մօտաւորապէս կէսերը), ըստ ամենայնի, կրտսեր եւ Ստեփաննոս Օրբէլեանին անյայտ մնացած դուստր Շուշիկը վախճանուել ու թաղուել է Հայրենի Սիւնիքից հեռու, Արագածոտն գաւառի Յովհաննաւանքում 1178 թ. (դրանից առաջ վախճանուած է եղել նրա մայրը՝ «մարբ իմով», որի անունը, ցաւօք, չունենք), իսկ տապանագիրը գրուել է նրան յուղարկւորողների կողմից, թէպէտ եւ հանգուցեալի անունից՝ առաջին դէպքով (նման ուրիշ օրինակներ եւս կարող ենք գտնել):

Ընդամին, Խոսրով Գանձակեցու վկայարանութեան մէջ Մխիթար Գօշը նշում է սուրբի նահատակութեան տարին՝ 1167 թուականը, նաեւ Հասան Մեծի ժամանակով. «Կատարեցաւ սուրբ վկայն Գրիստոսի յաշխարհս Առանայ, ի մայրաքաղաքն, որ կոչի Գանձակ, ի թուականին ՈՒԶ [=1167 թ.] ... յիշխանապետութեանն Հասանայ, որդւոյ Վախտանգայ՝ կողմանցն Խաչէնոյ...»¹¹¹: Աւելի վաղ՝ 1163 թուականը իբրեւ Հասանի իշխանութեան ժամանակ է նշուած Հաւապտուկի եկեղեցիներից մէկի բարաւորի վրայի 9 տողանոց արձանագրութեան մէջ (թէպէտեւ՝ գրականութեան մէջ որոշ չափով քննառու համարուած՝ իշխանի կնոջ՝ ոչ թէ Մամայ, այլ Մամքան կոչուած լինելու պատճառով). («Թիւն :ՈՒԲ: էր [=1163 թ.]: Յիշխանութեանն Հասանայ՝ որդո Վախտանգայ, եւ ամուսնո նորա Մամքանայ, ես՝ Յոհան քվերորդի տէր Գրիգորի եւ Գեորգ եղբարորդի եւ այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիքս...»¹¹²: Մեծ հաւանականութեամբ՝ նոյն Հասան Մեծի կողմից է կանգնեցուել Գանձասարի այն խաչքարը, որի կտորուած ստորին մասում (ըրուած էր գաւթի հիւսիսային պատի տակ) պահպանուել է 1174 թուակիր արձանագրութեան հետեւեալ 3-4 տողանոց սկիզբը. «Թիւն

109 Բաղայ արքայացանկի համեմատաբար ակի հաւաստի տարբերակը տե՛ս Գ. Մ. Գրիգորեան, Ս. Գ. Հախավերդեան, *Սիւնիքի պատմութիւն (հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը)*, Եր., 2001, էջ 79. Գ. Մ. Գրիգորեան, *Սիւնիքի թագաւորութիւնը (X-XII դարեր)*, էջ 144:
 110 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, *Յովհաննաւանքը եւ նրա արձանագրութիւնները*, էջ 77, N 4:

111 Հայոց նոր վկայները (1155-1843), էջ 31:
 112 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 33 (N 70): Հմմտ. յօդուածի սկզբում, ծնթ. 3:

:Ո/ԻԳ: [=1174 թ.]. ես՝ Հա/սանս, կանգ/ {նե-
ցի ...}»¹¹³:

Նշուած աղբիւրագիտական տուեալ-
ներին, ինչպէս վերեւում նկատեցինք, Հա-
կասում է միայն Գրիգոր Մեծի տիկնոջ՝
Նըջիսի արձանագրութեան՝ 1174 թուակա-
նը, եթէ, իհարկէ, լիովին վստահում ենք
նրա «ՈՒԳ» ընթերցման հաւաստութեա-
նը (երկրորդ տառը՝ իր յաջորդող կէտով,
մի փոքր տարբերում է բնագրի միւս Ի-ե-
րից եւ կարող է դիտարկուել իբրեւ կցա-
գիր «և» գրելու անյաջող փորձ.
*ՈւԳ=1154 թ.)¹¹⁴: Իսկ հակառակ դէպքում
պարզապէս անհրաժեշտ է վերապահումով
վերաբերուել Հասան Մեծի՝ 1182-ին նա-
խորդած «աւագութեան» 40 կամ 30 տա-
րիներին եւ այդ «աւագութեան» տակ
հասկանալ ոչ թէ ինչպէս իշխանապետու-
թիւնը («տէր-ութիւն»-ը), այլ լոկ պապա-
կան ընտանիքում, այսինքն՝ Գրիգոր Մեծի
ու նրա կրտսեր եղբայր Վախտանգի (գրա-
կանութեան մէջ, սկսած Եսայի Հասան-
Ջալալեանցից, աւանդաբար կոչուած՝
Սակո) բոլոր որդիներին մէջ «աւագի» յար-
գը վայելելու իրողութիւնը: Միեւնոյն ժա-
մանակ, համադրելով առկայ բոլոր
տուեալները՝ կարելի է ենթադրել, որ բոլոր
դէպքերում Հասան Մեծը մօտաւորապէս
1150-1174 թթ. կամ թէկուզ աւելի կարճա-
տեւ միջակայքում, այսինքն՝ ինչպէս «ե-
րիտասարդ տէր» Վախտանգ եղբորորդու
իշխանապետութեան տարիներին, շնորհիւ
իր զինուորական քաջութեան («չատ պա-
տերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց
աւգնութեամբն Աստուծոյ») ու կեանքի լուրջ
փորձառութեան (4 տարի եղել էր Բաղքի
թագաւորը), հեռու կանգնած չի մնացել
մեծ գործերից եւ, ի դէպ, ամենայն հաւա-
նականութեամբ, հէնց այդ տարիներին է
հաստատել իր նստոցը Հաթիւրք ամրոցում
(ենթադրաբար՝ երկրորդ պսակից յետոյ):

113 Նոյն տեղում, էջ 67 (N 185):
114 Տե՛ս վերեւում, ծնթ. 46-48:

Այսպիսով, թուում է, թէ կարելի է ամ-
փոփել, որ Հասան Մեծ Կրօնաւորեալը, ա-
ռաւել մեծ հաւանականութեամբ, եղել է
Հերքան բերդի ճակատամարտում սպա-
նուած ինչպէս-նոխանաբերդի իշխան Գրի-
գոր Մեծ Վասակեանի, անշուշտ, կրտսեր
եղբայր Վախտանգի (եւ Շուշիկի) որդին:
Հրաւիրուելով Սիւնիք եւ ամուսնանալով
Բաղաց արքայադուստր Կատայի հետ՝ նա
շուտով թագադրուել է Բաղաց արքայ, ա-
պա 4 տարի անց՝ Բաղաբերդի անկման օ-
րերին, ստիպուած է եղել վերադառնալ
հայրենի ինչպէս: Հաւանաբար, անգաւակ
Գրիգոր հօրեղբոր սպանուելուց յետոյ
ստանձնել է պապական տոհմի «աւագու-
թիւնը» (շուրջ 1150/1154 թ.), իսկ ինչ-որ
ժամանակ անց՝ ինչպէս իշխանապետու-
թիւնը: Վախտանգ (Տանգիկ) եւ իսթու-
զաւակների մօր՝ Կատա-Թագուհու վաղա-
ժամ մահուանից յետոյ երկրորդ անգամ
ամուսնացել է Մածնաբերդի Կիւրիկէ Գ-
թագաւորի դուստր Մամախաթուհի հետ
եւ ունեցել եւս 6 որդի, որոնցից աւագին
կրկին անուանել է Վախտանգ (իր հօր ան-
ունուով): 1182 թ. սքեմ հագնելով՝ մտել է
Դաղիվանք՝ իր Գրիգորիս եղբոր եւ Գրի-
գոր որդու մօտ, իսկ երկիրը բաժանել է
միւս 6 որդիներին՝ ներառեալ առաջին
կնոջից ունեցած առաջնեկին, սակայն ա-
ւագութիւնը փոխանցելով կրտսեր Վախ-
տանգին՝ Հաթիւրքի տիրոջը (բայց վերջի-
նիս անժառանգ վախճանուելուց յետոյ
տոհմի աւագութիւնը 1214 թուականից
վերստին անցել է ինքնանաբերդի տիրակա-
լին՝ Վախտանգ Տանգիկի որդի եւ «Բաղաթ-
թագաւորի թոռ» Հասան Ջալալին):

* * *

Հասան Մեծի խնդրի պարզաբանու-
մից յետոյ հական ճշգրտելիք կայ նաեւ
Դօփեան կոչուած Ծարի իշխանութեան
սկզբնաւորման ժամանակի խնդրում, որը
եւս մի շարք մասնագէտների կողմից անո-
րոշացուած է՝ անկասկած, նոյն Հասան

Կրօնաւորեալի անիրաւացի «երկատման»,
անգամ «եռատման» հետեւանքով (օր.՝ Բ.
Ուլուբաբեանի մօտ):

Իրօք, հակառակ ԺԸ.-ԺԹ. դդ. պատ-
կերացումներին¹¹⁵ Ջաքարէ եւ Իւանէ ա-
միրսպասաւարների քոյր Դօփ իշխանուհու
ամուսինը եղել է ոչ թէ Հասան Մեծի որդի
Ղարա-Գրիգորը, այլ Հասան անունով իշ-
խանը, քանի որ նրանց որդին մի փրկագ-
նուած եւ 1244 թ. ինքնապաշտպանութիւն
ընդունելու համար Աւետարանի վերջում յիշատա-
կագրել է. «...եւ զհեծեալազաւրս ընդ ին-
քեանս տանէին՝ ուր եւ երթային [իմա՝
մոնղոլները], ընդ որս եւ գրաւեցայ ես՝
Գրիգոր, որդի Հասանայ եւ Դօփի, քուե-
րորդի սպարապետացն Հայոց եւ Վրաց
Ջաքարիայի եւ Իւանէի»¹¹⁶: Ստեփաննոս
Օրբէլեանը եւս Տարսայիճի ու Մինախա-
թուհի դուստր Ասիա իշխանուհու առի-
թով գրում է. «Ետ ի կնուութիւն մեծի եւ
փառաւորեալ իշխանին ինչպէս [իմա՝ ար-
դէն միաւորուած Վերին Սաչէնի եւ Ծարի]
Գրիգորոյ [1287-1317 թթ.]՝ որդւոյ Հասա-
նայ, որդւոյ Մեծի Գրիգորի, որ էր քեռորդի
աթաբեկ Իւանէի»¹¹⁷: Անկասկած, նոյն
«Մեծ» Գրիգորն է նաեւ Դաղիվանքի Կա-

115 Օր.՝ Մ. Եպ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 195.
Կարապետ եպիսկոպոս, Դօփեանք եւ Մելիք-
Օսեանապարեանք, էջ 49:
116 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ.
դար, էջ 228: Հմմտ. Գ. կաթ. Յովսէփեան,
Խաղաղեանք կամ Պոռթեանք հայոց պատմու-
թեան մէջ, մաս I, Վաղարշապատ, 1928, էջ 20.
Բ. Ա. Ուլուբաբեան, Սաչէնի իշխանութիւնը, էջ
154-155: Կիրակոս պատմիչը երկիցս յիշատա-
կում է այս Գրիգորին մոնղոլների արշաւանք-
ներին մասնակից հայ իշխանների թումը. տե՛ս
Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ.
ԼԴ, էջ 180 («Երիգոր Սաչենցի» Դօփի որ-
դի, որ էր այդ երկիրում ի Տեառնէ»), գլ. ԼԵ, էջ
184 («Եւ ինչպէս եղանքն» Ջալալի Հասան եւ գօրք
իր եւ ազգակազմն, եւ Գրիգոր Դօփի որդի,
մօրաքուեր որդի Ջալալին... Եւ այս եղեւ ի ՈՂԲ
թուականիս Հայոց [=1243 թ./»):
117 Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատ-
մութիւն տաճն Սիսական, գլ. 66, էջ 311:

թողիկէի արեւմտեան պատի հարաւային
մասում 1224 թ. փորագրել տուել այն 13
տողանոց նուիրատուական արձանագրու-
թիւնը, որում առաջին անգամ յիշատակ-
ւում է Դաղի առաքեալի գերեզմանը¹¹⁸.
«Անուամբն Աստուծոյ, ես՝ Գրիգոր, որդի
Հասանայ, որ մեծ յուսով տուի ի Դաղի գե-
րեզմանս :Դ: տուն շինակ[ան] վ՛ս՛ն հոգո
իմո յառաջնորդութեան տե՛սն Գրիգորի-
սի...»¹¹⁹: Արդ, ով խափանի յառաջնորդաց
զիմ ժամն, կամ յաւագաց յիմոց կամ յաւ-
տարաց՝ զշինական յետ առնլով... մասն
նորա ընդ Յուդայի եղիցի. :ՈՂԳ: [=1224
թ.]»¹²⁰: Մեր ընդգծած «յաւագաց յիմոց
[ով խափանի]» արտայայտութիւնը, կար-
ծես թէ, ուղղակի ձեւով ցոյց է տալիս պա-
տուիրատուի բաւական երիտասարդ լինե-

118 Թաղէոս առաքեալի անուը դարեր ի վեր կրած
վանքի անուան տեղական հնչողութեան (Դա-
ղի վանք) հիման վրայ ԺԳ դ. առաջին կէսին
Դաղի առաքեալի (իբրեւ եօթանասնից մէկի)
առասպելի ձեւաւորման մասին տե՛ս Ա. Յակո-
բեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմա-
գրագիտական հետազոտութիւններ, էջ 272-273:
Հնարար է Ակատել Ասե Գոյն շրջանում Դան-
ձասարի համար Յովսէփեան Մկրտչի մասունքի
(գլխի) հայթայթման վանական առասպելի ձե-
ւաւորումը եւ այդ ամենը կապել երկու հօրա-
ցող վանքերի ու Գրանց աշխարհիկ հովանաւոր-
ների միջեւ մի իւրօրինակ մրցման հետ:
119 Տէր Գրիգորիսը Հասան Մեծի թոռն էր, քանի
որ մի քանի վիմագրում կոչուած է որդի Ասիա-
տակին Վասակայ (Դիւան հայ վիմագրութեան,
պր. V, էջ 200, N 710, էջ 210, N 739, 740. Ս. Կա-
րապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ
112, N 28, էջ 116, N 61, 63. միւսներում կոչուած
է լոկ Տէր Գրիգորիս. Դիւան հայ վիմագրու-
թեան, պր. V, էջ 119-120, N 709, էջ 201, N 711,
էջ 202, N 714, էջ 204, N 718. Ս. Կարապետեան,
Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 111, N 15, էջ
111-112, N 16, էջ 112, N 26, 29): Այս պաշտօ-
նում Գրա Ասիապոլսից յայտնի են Հասան
Մեծի եղբայր Գրիգորեւը եւ որդի Գրիգորը,
բայց ցուցակը, գուցէ, դրանով չի սպառում:
120 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 201 (N
711). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշար-
ձանները, էջ 112 (N 29): Հմմտ. Հ. Լ. Պետ-
րոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆա-
րեան, Հանրաբերդի վանքը, էջ 13, ծնթ. 13:

լը, այդ պատճառով ոչինչ չի խանգարում նկատելու, որ բերուած վիճազրի անմիջապէս ներքեւի հողմնահարուած 10 տողապիղքներով արձանագրութիւնը (որի թիւը Սեդրակ Բարխուդարեանը պահպանուած վերջին «[...]»-ի հիման վրայ ենթադրաբար վերականգնուած է նոյն «:[ՈՂ]»-ի [=1224 թ.]» փորագրուած է այս Գրիգորի հայր Հասանի կողմից¹²¹: Ընդ որում, վեր-

ջինս իրեն կոչուած է «Հասան, որդի Գրիգորա[ն]» (ուրեմն՝ ԺԳ դարի Ծարեցի երեք Գրիգոր իշխաններից առաջինի)¹²²: Խաղաբազմանքի մի խաչքարի վրայ եւս, անկասկած, հէնց Դօփի ամուսին նոյն Հասանի գրել. «Թ^{ու}ի^ն :ՈԿԸ: [=1219 թ.]. ես՝ Հասան, որդի Գրիգորոյ, կանգնեցի զխաչս եղբարս իմոյ Շամսազինին: Տվի... զԹողակերտն ի խաղարի վանս»¹²³: Դրանից մէկուկէս տասնամեակ առաջ էլ՝ 1204-ին, նա աջակցել էր իր Յովհաննէս եղբորը՝ կառուցելու խաղարավանքի գմբեթաւոր եկեղեցին՝ համտ. «Ի ՈՄԳ թուիս [=1204 թ.], ես՝ տէր Յովհաննէս, շինեցի զեկեղեցիս... եւ ետեւ զվանքս իւր ամէն սահմանաւ իմ աւագ աղբարն Հասանս եւ իւր որդեաց՝ Հաթեր-

121 Լ. Պետրոսեանի եւ համահեղինակների կարծիքով՝ Գրիգորի մասին է պատմում Չարեքարի մեծ խաչքարի՝ ձախ կողմից մի քանի տառի չափով վնասուած, 9 տողանոց արձանագրութիւնը՝ գրուած նրա որդի Սեւադայի եւ, ըստ ամենայնի, դուստր Ծառաճոյիսի կողմից (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 132-133, N 443), եւ այդու Գրիգորի վախճանը ենթադրում 1260 թ. (Լ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան, Հանդարեղի վանքը, էջ 13-14, ծմբ. 16-18. «Չարեքարի մի խաչքարի արձանագրութիւնում Սեւադայի Գրիգորի որդին, իրեն անուանում է «որդի հօգար եւ յաղթող իշխանի, որ բազում քաջութեամբ եմար գտնահիւք...»: Գրիգոր Մեծն, ամենայն հաւանականութեամբ, զոհուել է 1260 թ. առաջ: Նրա որդիներից միջնակը՝ Սեւադան, որը զոհուել է 1260 թ., երբ մոնղոլական զօրքերի կազմում գրոհում էր Մարտիրոսաց քաղաքը կամ Մուֆարկիւնը... հօր տապանի վրայ կանգնեցրած խաչքարի արձանագրութեան մէջ յայտնում է, որ հայրը զոհուել է Երուսաղէմ մեկնելու ճանապարհին բռնկուած մի կռուի ժամանակ»: Այս տեսակէտը լրացուցիչ փաստարկումների կարիք ունի, քանի որ մի կողմից՝ Չարեքարի վիմագրում չի նշուում Գրիգորի ու Սեւադայի հայր եւ որդի լինելը, միւս կողմից՝ եթէ վերջին անձին համարում ենք վարդան պատմիչի նշած «գեղեցիկ արիտասարդ» Սեւադայի հետ («սպանա գեղեցիկ արիտասարդ» Սեւադայի խաչքանցի, որդի մեծ իշխանի Գրիգորի, քաջապէս մարտուցեալ եւ յայնուպի պսակեալ, հաւատ եւ երկիր պահելով զԱստուծոյն եւ զՅիւզանիս»), ապա պէտք է գիտակցենք, որ նրա վախճանը հնարատր ենք համարում առաւելագոյնը ընդամենը 16 տարեկան հասակում. վերը նշուած 1244 թ. յիշատակարանում Դօփի որդի Գրիգորը յատուկ յիշատակում է իր գաւակներից, եւ դրանք է գիտակցենք, որ նրա վախճանը հնարատր ենք համարում «Ըստ յիշատակարանի՝ Գրիգորն ունեցել է երեք որդի՝ Հասան, Սեւադա, Յովհաննէս» արտայայտութիւնն, իհարկէ, տեխնիկական վրիպում է, հմտ. Գ. Ե. Կիրակոսեան, Հայաս-

տանը Լանկ-Թամուրի եւ թուրքմէն գեղերի արձանագրութեան շրջանում (1386-1500 թթ.), Երև. 1997, էջ 178, 182): Ընդ որում, վերջին խնդիրը լուծելու պէտք է ուշադրութիւն դարձնել վարդան պատմիչի մօտ Գրիգորին տրուած «Մեծ իշխան» էպիտետին, որը նույնպէս չի կարող պատահական համարուել (միաժամանակ արդարեւ ընդ որում հեղինակների դիտողութիւնը Բ. Ուլուբաբեանի արտայայտութեան առիթով, ըստ որի՝ վարդան պատմիչը Գրիգորին «Մեծ» է անուանում իբրեւ թէ մի քանի անգամ:

122 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 201 (N 712). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 113 (N 30): Նկատենք նաեւ, որ արեւմտեան պատի վիմագրերի այս ուղղաձիգ շարքում փորագրման յաջորդականութիւնը եղել է, ըստ ամենայնի, ներքեւից դեպի վեր:

123 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 126 (N 418): 1986 թ. այս արձանագրութիւնը ստուգել ենք տեղում, ուստի ուղղում ենք 3-4-րդ երկար տողերում գրուած «զխաչս» բառը, որի Ա-ի պահպանումը մասնակցեցրել Ս. Բարխուդարեանը չի նկատել (ՋԼ/Ս.ՋՍ): Տեղին նշենք, որ բնագիրը չնկատուած շարունակութիւն էլ ունի 5-րդ՝ Ս. Բարխուդարեանի մօտ՝ վերջին երկար տողում «վանս» բառին յաջորդում է տողաւոր տի ԾԱՌՋԱՐ/ բառահատուածը, ինչպէս նաեւ առկայ է յաջորդ՝ 6-րդ տողի երկրորդ կէտից աւելին (մնացած տողերը շարքուած են), որ 8-9 շարքուած տառերից յետոյ ընթերցում են. «[...] ԱՒՐՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՋԱՆ[...]

քո տեառնն միջնորդութեամբ...»¹²⁴, եւ՝ «այս իմ գիր է Հասանս, որ երբ իմ աղբարս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երես, ես զԽնձորաբակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի...»¹²⁵:

Տեղին նկատենք, որ առկայ աղբարներում վկայուած են Հասանի եւ Դօփի միայն երկու որդիներ՝ Գրիգոր Բ Ծարեցի իշխանը (Ստեփաննոս Օրբէլեանի մօտ կոչուած՝ «Մեծ») եւ Հաղբատի եպիսկոպոս Յովհաննէսը: Վերջինիս՝ Հաղբատավանքի գաւթում, շուրջ չորս տասնեակ տապանաքարերի շարքում¹²⁶ պահպանուած գերեզմանաքարի (5 տողանոց տապանագիրը՝ «Ջաքարէի եւ Իւանէի քվերորդի/ն՝ Յովհաննէ[ն]ս / եպիսկոպոս տեղ/ոյս») աջ կողքին գտնուած է նաեւ նրա մօր շիրիմը՝ «Ջաքարէի եւ Իւանէի / քոյրն է՝ Դաւին» երկտող տապանագրով¹²⁷: Ի դէպ, գաւթի խիտ թաղումների շարքում նշուած տապանաքարերի դիրքը՝ կողք կողքի եւ ձախից աջ, թույլ է տալիս ենթադրել, թէ, ամենայն հաւանականութեամբ, Դօփ իշխանուհին Ծարից Հաղբատ է մեկնել՝ ըստ ամենայնի, վաղամեռիկ եպիսկոպոս-գաւազի յուղարկաւորութեանը մասնակցելու առիթով, ընդ որում, տեղ հասնելուց ոչ շատ ժամանակ անց ինքն էլ է վախճանուել, եւ դա թույլ է տուել՝ նրան թաղելու որդու շիրիմի անմիջապէս աջ կողքին: Բ. Ուլուբաբեանը պնդում է, թէ Դօփի ու Հասանի որդիներն են եղել նաեւ Գրիգորն ու Գերգը (Գիրգ), որոնցից երկրորդի՝ Դադիվանքի փոքր գմբեթաւոր եկեղեցու արեւմտեան պատի մէջ ագուցուած եւ 1181 թուակիր ոչ մեծ խաչքարի 5 տողանոց տապանագրում առաջին եղբայրն իրեն անուանել է «քուերորդի»

(«Թ^{ու}ի^ն :ՈԼ: [=1181 թ.]. ես՝ Գրիգոր քուերորդի, կանգնեցի զխաչս եղբարս իմո Գիրգա. որք երկրպագէք, յաղաւթս յիշեսլի՛ք»)¹²⁸: Սակայն իրականում ժամանակային տեսանկիւնից այդ արձանագրութիւնը վերագրելի է, ենթադրաբար, Հասան Մեծ Կրօնաւորեալի (այսինքն՝ տարածքի ոչ պակաս հզօր ու նշանաւոր իշխանաց իշխանի¹²⁹)՝ թէկուզ եւ այլուր չիշատակուած մի քրոջ գաւակներին, եւ ոչ թէ Ջաքարէ ու Իւանէ երկայնաբազուկների «քուերորդի»-ներին, որոնց մեծ մասն այդ տարում առաւել մեծ հաւանականութեամբ դեռեւս ծնուած էլ չէր: Ի դէպ, ամենեւին հասկանալի չէ ուսումնասիրողի ձգտումը՝ Հաղբատի եպիսկոպոս, Դօփի որդի Յովհաննէսին ներկայացնելու հէնց իբրեւ Ժ. Գ. վերջում ապրած անձնաւորութեան: Դեռեւս Կ. Տէր-Մկրտչեանի դիտարկմամբ՝ արդէն Կիրակոս Գանձակեցու մօտ մանրամասն տարբերակուած են Ժ.Գ. դարերում Հաղբատի եպիսկոպոս եղած երեք Յովհաննէսները (Իսկ Ժ.Գ. դարավերջին եղել է նաեւ չորրորդը), որոնցից երկրորդին է պատմիչը ներկայացնում իբրեւ «քուերորդի իշխանացն Ջաքարէի եւ Իւանէի եւ եղբորորդի առաջնոյ Յովհաննէսի»¹³⁰: Իսկ բերուած արտայայտութիւնից առաջ պատմիչը նշում է. «...սուրբն Գրիգորիս... Եւ յետ նորա՝ Յովհաննէս, այր հեղ եւ առաքինի, ազգական իշխանացն Սաչեանոյ: Սա քակեաց զգաւթիս»

124 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 121 (N 401):
 125 Նոյն տեղում, էջ 122 (N 402):
 126 Արձանագիր քարերի թիւը 37 է:
 127 Կ. Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 184-185, N 54, ծղ. ծե:

128 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 211 (N 742). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 115 (N 43):
 129 Այդ առումով հմտ. օր.՝ Դարբասներ տեղավայրում մեծ խաչքարի վրայ Գարեգին Յովսէփեանի ընթերցած վնասուած բնագիրը. «Ի թփս :ՈՒԲ: [=1173 թ.]. ի հայրապետութեանս տե՛սն Ստեփաննոսի եւ ի թազաւորութեանն [...] թերես՝ Հասանայ - Ա. Յ.] ես՝ Սրահանգս, որդի Ջաջոս, կանգնեցի զխաչս» (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 74, N 217):
 130 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. Ա., էջ 99: Հմտ. Կարապետ եպիսկոպոս, Դօփեանը եւ Մելիք-Շահնազարեանը, էջ 56-59:

փոքրագոյն... եւ շինեաց մեծ եւ գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ գտեսողսն հիացմամբ: Եւ յետ նորա՝ միս Յովհաննէս՝ քուերորդի իշխանացն...»¹³¹: Մէկ այլ դրուագում, պատմելով Հաղբատի Գրիգորիս եպիսկոպոսի հանդէպ Ջաքարէ երկայնաբազուկի հայածանքների մասին, Գանձակեցին լրացնում է. «Եղ զնա ի բանտի, եւ զՅովհաննէս կացոյց փոխանակ նորա եպիսկոպոս Հաղբատայ, ա՛յն, որ յառաջն եթող զաթոռն եւ զնաց ի խաչէն: Եւ այլ առաքինի էր Յովհաննէս, եւ բազում գործս արժանի յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս եւ զհուշակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ գտեսողսն»¹³²: Կ. Տէր-Մկրտչեանը նաեւ ճշտօրէն պարզաբանում է, որ Դօփի որդի Յովհաննէսը Հաղբատի եւ խաչարավանքի եպիսկոպոս Յովհաննէսի¹³³ եղբորորդին է եւ կայան կոչուած ոչ մեծ բերդի ու նրա ներսի եկեղեցու կառուցողը: Ընդամին, վերջինիս շինարարական վիճակը 1233-ով է թուագրուած. «Ի թիւն :ՈՂԲ: [=1233 թ.], կաման Աստուծոյ, ես՝ տէր Յովհաննէս, առաջնորդ Հաղբատա, քուերորդի մեծ պատրոնացն Ջաքարէի եւ Իւանէի, ի ժամանակի, որ եհաս սասանումն աշխարհիս մերոյ անաւրէն խորագմե[ա]յնցն... շինեցի զամբոցս եւ գեղեցիկս Հաղբատա սուրբ Նշանիս...»¹³⁴: Իսկ Յովհաննէսի յաջորդ եպիսկոպոսի (Համազասպի) վիճակը ամենավաղի

թուագրումը 1242-ն է¹³⁵, ուստի ե՛ւ իր, ե՛ս Դօփի վախճանը պէտք է դիտարկել 1233-1242 թթ. միջակայքում: Ինչ վերաբերում է նրա եպիսկոպոսութեան սկզբի ժամանակին, ապա աւելի հաւանական է մտածել, որ դա 1220-ական թթ. երկրորդ կէսն է: Յովհաննէս Ա-ին 1211-ից մինչեւ 1221 թ. յիշատակող Հաղբատի բազմաթիւ թուակիր վիճակներին հէնց առաջինում (Ս. Գրիգոր եպիսկոպոսի մուտքից վեր՝ պատուհանի գլխին, 6 տող) խօսուում է եկեղեցու վերանորոգման մասին (դրա վերաբերեալ տեղեկացնում էր նաեւ Կիրակոս Գանձակեցիին). «Թ...» :ՈԿ: [=1211 թ.]. նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յովհաննիսի եւ միաբան եղբարցս. յիշեցէ՛ք ի Բ...»¹³⁶: Իսկ վերջինում ունենք հետեւեալ ընդարձակ, 21 տողանոց բնագիրը. «Յամս ա...» ծագաւր թ...» որացս թամարա եւ որդո իւրո Գեորգի եւ :Բ: Հարազատաց Ջաքարէի եւ Իւանէի՝ հրամանաւ սոցա կոչեցա յեպիսկոպոսութիւնս մ...» Բ. Գրիգորի Հաղբատա: Ես՝ Յովհաննէս ի խաչնո, ներողութեամբ Ա...» ծոյ կացե[ա]լ իմ ամս բազում յառաջնորդութեամբս, եւ ըստ իմում կարողութեամբս սպասաւորեցի սրբոցս ի շինութիւնս եւ յառաջդիմութիւնս տանս Ա...» յ: Նախ ի ձեռն շինուածոց ի մ...» Բ. Նշանս, ի մատե[ա]յնս, ի սպաս զարդուց, զկաթուղիկէս սալե[ա]լ եւ զդուռնս, կազմե[ա]լ, զս...» Գրիգորն նորոգե[ա]լ զգաւթս շինե[ա]լ, զգաւթի ս...» սեղանոյն եւ զ:Գ: ս...» Նշանս: ...որք կատարեն զաղաչանս մեր՝ աւրհասցին ի Տ...» նէ. ամէն: :ՈՂ: [=1221 թ.]»¹³⁷: Ակնյայտ է, որ եթէ գրողը լինէր Յովհաննէս Բ-ն՝ Դօփի որդին, ապա չէր կարող բաւարարուել միայն «Ի խաչնոյն» ծանօթութեամբ եւ կը նշէ՛

131 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. Ա, էջ 98-99:
 132 Նոյն տեղում, գլ. Ա, էջ 173-174:
 133 Տե՛ս վերելում, ծմթ. 124, 125:
 134 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 250, N 173. Բմմտ. Կարապետ եպիսկոպոս, Դօփեանք եւ Մեղիք-Ճանապարհանք, էջ 57-58: Հմմտ. «Սա շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ եւ ընդ Սանահին... Իբրեւ մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս, քակեցին զպարիսպ բերդին հրամանաւ թաթարին» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. Ա, էջ 99):

135 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 178 (N 47):
 136 Նոյն տեղում, էջ 220 (N 110): Տե՛ս նաեւ էջ 230-231 (N 130. 1211 թ.), էջ 172-174 (N 41. 1220 թ.), էջ 229-230 (N 128. 1220 թ.), էջ 180 (N 50. 1221 թ.):
 137 Նոյն տեղում, էջ 180 (N 50):

«:Բ: Հարազատաց Ջաքարէի եւ Իւանէի» հետ իր ազգակցութեան մասին: Եւ վերջապէս, Սանահինում Գրիգոր Տուտէորդի վարդապետի մահարձան-խաչքարի կողքին կանգնած խաչքարի թիկունքին ունենք, ամենայն հաւանականութեամբ, նոյն Յովհաննէս Ա-ի թողած 9 տողանոց վիճակը. «Ի թվի՛ :ՈՂԲ: [=1227 թ.]. ես՝ տէր Յովհաննէս, առաջնորդ ս...» Բ. ուխտին Հաղբատա, կանգնեցի զխաչս ի հանգստարանի սնուցողի իմո Յովհաննէս քահանայի: Որք երկրպագէք, յիշեցէ՛ք ի Տ...»¹³⁸: Ընդամին, Համադրելով Կիրակոս Գանձակեցու խօսքերը («որ յառաջն եթող զաթոռն [Հաղբատայ] եւ զնաց ի խաչէն») եւ խաչարավանքի վիճակներին տուեալները¹³⁹, կարող ենք, թերեւս, չկասկածել, որ Յովհաննէս Ա-ն նախ Հաղբատի վանահայր-եպիսկոպոս է ձեռնադրուել ԺԲ. դ. վերջերին, դրանից ինչ-որ ժամանակ անց վերադարձել է Հայրենիք, կառուցել խաչարավանքի գմբեթաւոր եկեղեցին ու վանահայրութիւն արել այնտեղ, ապա 1204 թ. վերադարձել է Հաղբատ: Այդժամ նա խաչարավանքը յանձնել է «իր եղբայր Հասանին ու նրա որդիներին», այսինքն՝ Դօփի որդի Յովհաննէսին, որն էլ իր հօրեղբոր մահուանից յետոյ պիտի ձեռնադրուէր Հաղբատի եպիսկոպոս:

Վերադառնալով Դօփի սկստարար Գրիգորի խնդրին, որի յիշատակումն իր որդի Հասանի կողմից վերեւում տեսանք խաչարավանքի եւ Դադիվանքի մէկական վիճակներում (1219 եւ 1224 թթ.)¹⁴⁰: Եթէ ընդունենք յուշարձանագէտ Սամուէլ Այվազեանի այն դիտարկումը, ըստ որի Դադիվանքի համալիրում «տաճար» կոչուած կառույցի 1211 թ. շինարարական վիճակը

հեղինակ Գրիգորէսը¹⁴¹ ոչ թէ հոգեւորական է եղել (այն է՝ Հասան Մեծի ու Մամխաթունի հոգեւորական որդի Գրիգոր-Գրիգորիսը), այլ աշխարհական¹⁴², ապա կարող ենք համարել, որ Գրիգորէս անուանածեւով ունենք Հասան Կրօնաւորեալի՝ Մարի իշխան դարձած որդու, այսինքն՝ Դօփի Ջաքարեան իշխանուհու սկստարարի ինքնայիշատակումը: Եւ այսպիսով, Դօփի ամուսին Հասանի հայրը ոչ մի կերպ չէ դառնում «Վախտանգ» (ԺԲ. դարի կէսի մի «երրորդ»)!, ինչպէս վերը նշուած թիւրմբուման հետեւանքով պնդում է Բ. Ուլուբաբեանը¹⁴³: Դա մնում է նոյն Գրիգորը

141 Բնագիրն է. «Թ...» :ՈԿ: [=1211 թ.]. ես՝ Գրիգորէս, որդի Հասանա, շինեցի զտաճարս յիշատակ հոգո իմո. յաղաթս յիշեցէ՛ք» (Դիւան հայ վիճակագրութեան, պր. V, էջ 212, N 749. Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 116, N 58):
 142 Ս. Այվազեան, Դադիվանքի հոգեւոր շինութիւնների կառուցման ժամանակագրական յաջորդականութիւնը, - ՊԲՀ, 2006, թիւ 3, էջ 204: Որոշ վերապահում ենք անում, քանի որ տուեալ դիտարկումն, այնուամենայնիւ, լրացուցիչ աղբիւրագիտական հիմքերով ամրապնդուելու կարիք ունի. իրականում վիճակներում ունենք հոգեւորականի՝ առանց «տէր» նշումի, միայն անունով հանդէս գալու ոչ մեծաթիւ այլ դէպքեր եւ: Տե՛ս, օր.՝ Գանձասարի գաւթի հիւսիսային դռան բարաւորի վրայ՝ «Թի :ՈԿ: [=1271 թ.]... ես՝ Յովհաննէս, որդի Իւանէի, առաջնորդ ս...» ուխտիս Գանձասար...» (Դիւան հայ վիճակագրութեան, պր. V, էջ 50, N 122), Բերդաձորի Ս. Գրիգոր վանքի եկեղեցու հիւսիսային պատին, իր հօր կողմից ժամանակին այդ եկեղեցում «սպասատր տրուած» տէր Գրիգորի վիճակում՝ «ես՝ Գրիգորս, որդի Սակոի, վերստին շինեցի զեկեղեցիս ի թու՛ս :ՈԿ: [=1259 թ.]...» (նոյն տեղում, էջ 116, N 387):
 143 Բ. Ա. Ուլուբաբեան, Սաչէնի իշխանութիւնը, էջ 155-156: Այս մտնումը, ցուօք, առանց յատուկ փաստարկումների թեթեւօրէն կրկնում է նորագոյն աշխատանքներում, տե՛ս, օր.՝ Լ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան, Հանդարտորդի վանքը, էջ 11: Հեղինակների մատնանշած (էջ 12, ծմթ. 8) Հաղբատի յայտնի Աւետարանի հետագայի յիշատակարանի (ձեռագիրը 1223 թ. ոմն Սարգսի կողմից նուիրուել է Մեծ Կողմանց եպիսկոպոս

138 Տե՛ս Կ. Ղաֆադարեան, Սանահինի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Եր., 1957, էջ 180-181 (N 170):
 139 Տե՛ս վերելում, ծմթ. 132 եւ 124, 125:
 140 Տե՛ս վերելում, ծմթ. 122, 123:

սի հետ: ԺԹ. դարում վիճաբաններն ընթերցուած է այսպէս. «Սուրբ Պոռփոպոս. զմեծ տէր Յովհաննէս՝ շինուող եկեղեցւոյս, որդի Դաւիթին, եղբայր մեծ իշխանին Հասանայ, յաղաւթս յիշեցէ՛ք»¹⁵⁶: Քանի որ իշխանուհի Դոփի ամուսինը, ինչպէս գիտենք, Հասան անունն է կրել, ապա նրանց որդին, իրօք, չէր կարող (ըստ Հր. Աճառեանի՝ վերը նշուած դիտարկման¹⁵⁷) նոյն կերպ կոչուել: Սակայն հակասութիւնն իրականում լուծելի է: Զբաղաւելով ԺԹ դարի ընթերցումները՝ երբեմն լրջօրէն սրբագրելի լինելու հանգամանքը, այս դէպքում պէտք է նաեւ նշել, որ Դօփ անձնանունով աղբիւրներում վկայուած է ամենեւին էլ ո՛չ միայն յայտնի իշխանուհին: Օր.՝ «բուերորդի սպարապետացն... Զաքարիայի եւ Իւանէի» «Մեծն» Գրիգորին չի կարող վերաբերուել «Թարգմանչաց» անուանումով յայտնի Աւետարանի (արտագրուած է «Թիւն ՈԶԱ [=1232 թ.]»¹⁵⁸) նկարագրող-

ման մասին հետագայի յիշատակարանի նշումը. «Զմեծ եւ զամենաւարհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դաւիթին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասիայն՝ զստացաւըք եւ զարդարիչք սուրբ Աւետարանիս յիշեալի՛ք»¹⁵⁹: Չնայած «որդի Դաւիթին» արտայայտութեանը, բոլոր ուսումնասիրողներն իրաւացիօրէն իբրեւ ձեռագրի ստացողներ գիտեն ԺԳ. դ. վերջին – ԺԴ. դ. սկզբին իշխած ամուսիններ Գրիգոր Գ. Ծարեցուն՝ վախճանուած 1317-ից յետոյ, եւ Ասիային (Սիւնեաց Տարսայիճ Օրբէլեանի դուստր¹⁶⁰)՝ վախճանուած 1311 թ.: Ուրեմն, այստեղ «որդի Դաւիթին» է կոչուել նշանաւոր իշխանուհու թոռան՝ Հասանի որդին:

Մի քանի այլ բնագրեր եւս «Դաւիթ որդի» են կոչում արդէն ոչ թէ Ասիայի ամուսին Գրիգոր «Զինուորին»¹⁶¹, այլ նրա հօրը՝ Հասան «Արիականին» (նրա կին Մամքանը դուստրն էր Արագածոտնի

156 Ս. վրդ. Զալալեանց, Ժամայարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տիփլիս, 1842, էջ 206. Մ. եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 195. Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ. աշխատասիրութեամբ Յովհաննու եպս. Ծահխաթունեանց Ծահրիարեցոյ, հտ. Բ, վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1842, էջ 362. ըստ՝ Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 128 (N 427):

157 Տե՛ս վերեւում, ծնթ. 20: Տեղին նշենք, որ Դօփ իշխանուհին արդէն 1225 թ. մի վիմագրում (Խաղարաւանքի մատուռի հիւսիսային պատին արտաքուստ, 10 տող) ներկայանում է առանց ամուսնու՝ անգամ յիշատակման. «Թոփ» :ՈԶԳ. [=1225 թ.], ես՝ Դոփ, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իւանէի, շինեցի զգաւիթս եկեղեցոյս եւ զմատուռս. եւ տվի զԱւետարանս եւ Յանկաբակոց երկիրն եւ զին Հակոբեանայ մատաղիսն յեկեղեցիս՝ իմ հոգոյ. Աստուածածնին ծանն՝ Գ: ար. արարէ՛ք» (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 127, N 420): Ուստի Հասան Ա-ի, թերեւս, վաղաժամ մահը կարելի է վերագրել 1224-1225 թթ. միջակայքին (հմտ. վերեւում, ծնթ. 121):

158 ՄՄ, ձեռ. թիւ 2743, թ. 311ա: Հմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 317, ծնթ. 94: Նոյնն է եւ ձեռագրի 9բ թերթի յիշատակա-

րանում՝ «ի թիւս :ՈԶԱ. [=1232 թ.] ծաղկագարդեցաւ սուրբ Աւետարանս» (Արտ. Մաթեոսեանը 1984 թ. վրիպմամբ չի ընդգրկել այս բնագրերը Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ-ի ԺԳ. դարի հատորի մէջ):

159 ՄՄ, ձեռ. թիւ 2743, թ. 293ա. ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Եր., 1950, էջ 84: Հմտ. Գ. Կաթ. Յովսէփեան, Խաղարաւանք կամ Պոռփոպոսի հայոց պատմութեան մէջ, մասն I, վաղարշապատ, 1928, էջ 436. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 317:

160 Ասիայի մայրը Հասան Զալալի դուստր Մինան էր (վախճանուած 1298 թ.). նրա մասին աղբիւրագիտական տուեալները տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 226-227:

161 Այս Գրիգորի իշխանութեան արեւելեան սահմանագիծը նշող մի նոր տուեալ տե՛ս Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆաշեանի գտնուող Մեփս վանքի իր մի ընդարձակ արձանագրութեան մէջ Հասանի որդի Գրիգորը նշում է, որ թէեւ Չարաբերդը (Չարաբերդ) գտնուում էր տաճիկների ձեռքին, իրեն յաջողուել է Աստուծոյ օգնութեամբ պահել Ականան):

յայտնի իշխան Քուրդ Վաչուտեանի¹⁶²):

162 Աղբիւրների առատ տուեալները տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 234-243 (մասամբ լրացնելի է՝ Դիւան հայ վիմագրութեան, պր. IV, Գեղարքունիք, էջ 315, N 1294, էջ 317, N 1299, 1300, էջ 328, N 1334, էջ 355, N 1427): Նշենք, որ Համլետ Պետրոսեանը եւ համահեղինակները (Հանդաբերդի վանքը, էջ 15, ծնթ. 23) իրաւացիօրէն ուղղում են Դադիվանքի կաթողիկէի բեմի գոգաւորութեան սուրբի վրայ կարմիր ներկով գրուած 9 տողով արձանագրութեան սկզբում («Ազնութեամբ Աստուծոյ, ես՝ Մամքան, ամուսին Արիականին Հասանա եւ որդի մեր Գրիգոր, տէրք գոյով տեղոյս հայրեմաք եւ մեր պարուքն հաստատեցին, ի :ՉԺԶ: թվին [=1267 թ., ոչ թէ՛ 1307] տվաք ի սուրբ ուխտիս զՄովսէսեղ, զՋաջուտանց, զՋուրէկանց») առկայ տասնաւորը, որը Ս. Բարխուդարեանը շտապողաբար վերծանել էր «Ծ» (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 206-207, N 724): Իրօք, այդ տասնոր տարբերում է գրութեան սկզբում եւ վերջում առկայ Ծ-երից ու նմանում է «Ժ»-ին՝ թիւ Ժ: Ծիշտ է, պէտք է նկատի ունենալ, որ գրուածքի երկրորդ մասն աւելի ուշ շրջանում է յաւելուել («Ես՝ Գրիգոր, տվի զՋազուտանց հորդերն զմեր բաժին իւր չորեքովն: Որդի իմ տէր Սուրբ եւ միաբանք սահմանեցին... որ լինի իմ մարն եւ ամուսն իմ Ասիին...»), իսկ վերջին տողը («Մոխրաբաքս մեր բաժին տվաք. թիւ :ՉԿԱ. [=1312 թ.]») էլ աւելի ուշ: Հրատարակչի վրիպումը կրկնել է նաեւ Գ. Ս. Կիրակոսեանը (Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմէն ցեղերի արշաւանքների շրջանում, էջ 187-188)՝ պնդելով, թէ Հասանի կին Մամքանը կենդանի է եղել դեռեւս 1307-ին: Իրականում իշխանուհու Դադիվանքի «ժամատան» մէջ պահպանուած ուղղակի նմանում, մէջտեղից ճաքած տասնաւորների վրայ 9 տողով յստակ ընթերցում է. «Այս է հանգիստ Մամքանի/ն, ամուսն Հա/սան, դստեր/ Գրիգին եւ Խոր/իշանի, մարն / Գրիգոր: Աղա/չեմ յիշեցէք / առ [Բրխուդարեան] [ոչ թէ՛ յիշել ի բարի]». թվին :ՉԾՆ: [=1306 թ.]» (Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 117, N 64): Ի դէպ, Ս. Բարխուդարեանը չի տեսել վիմագիրը եւ օգտուել է Մ. Բարխուդարեանից (Արցախ, էջ 206) եւ Մ. Տէր-Մովսիսեանից՝ ընդ որում կատարելով անյաջող վերականգնումներ (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 214-215, N 758. «Բարխուդարեանը թուականը նշանակել է :ՉԾԿ. որը եւ ընդհանրացել է գրականութեան մէջ: Տէր-Մովսիսեանը՝ մի-է գրականութեան մէջ: Տէր-Մովսիսեանը՝ մի-այն :2: Մեզ թում է, որ սխալուում են, որովհետեւ հէնց Դադի վանքում :ՉԿԱ. (1312 թ.) ունի նուի-

Օրինակ՝ Խաչատուր Կեչառեցին 1295 թ. երկասիրած իր «Ողբ»-ում գրում է. «ԶՀասանն յիշեմ զԽաչէնեցի, Որ մականուամբ էր որդի Դօփի...»¹⁶³: Ծարի Ս. Սարգիս եկեղեցու՝ 6 տողերով պահպանուած շինարարական արձանագրութեան սկզբում ուրեւնէք. «Թ...» :ՉԻԸ: [=1279 թ.]: / Ի հայրանենք. «Թ...» :ՉԻԸ: [=1279 թ.]: / Ի պարոնութի՛ն պետութի՛ն տէր Աթ/անասի, ի պարոնութի՛ն Դուսիին որդ/ույն, Ոհան երէց ու Ոհանէս շինեց/աք զՄ... Սարգիսս...»¹⁶⁴: Ծարից ոչ հետու Գետամիջոյ վանքի հարաւային ճակատին եղած 5 ծաւալուն տողերով շինարարական վիմագրում 1301 թ. մասնաւորապէս գրուել է. «...մեք՝ տէր Յովհաննէս Դօփեան [իմա՛ Դոփի զաւակ]... հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց՝ զնալ ի մեր հայրապետացն յառաջնոց յաթոռն հռչակելին Հաղբատ, այլ դարձ արարեալ ի մեր հայրենական եւ բնիկ տունս հարագատ աւագ եղբաւր Հասանայ] քաջ զաւրակաւոր եւ հռչակաւոր արիացելոյն, որ եւ որդի իւր Գրիգոր՝ սիրող եկեղեցոյ] եւ քահանայից, եւ ամուսինն իւր բարեհամբաւ Ասիայ], դուստր մեծի կոմսի Տարսայի-ճին...»¹⁶⁵: Իսկ Բջնի Ս. Աստուածածին եկեղեցու պատին Գրիգոր Գ-ի թողած նուիրատական արձանագրութեան մէջ կարգում ենք. «Ի :ՉՄԲ: [=1303 թ.]. կամաւ աւանակային Ա... յոյ, ես՝ Գրիգոր իշխան, մենակային թոռն Դաւիթին, միաբանեցա Մ... Նշանիս եւ ետու արդիւնս ի Մ... Ա... ծածնիս, եւ սպասաւորք սրբոցս հաստատեցին ի տարին :Բ: ար պատա-

րատական մեծ եւ կարեւոր արձանագրութիւն, հետեւաբար տասնամարի վրայ տասնաւորը սխալ է վերծանուել, այն պէտք է լինի :Կ: [!]:

163 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Հայապատմ., մասն Բ, վեցերորդ-Ս. Ղազար, 1901, էջ 527:

164 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 218 (N 766). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 65:

165 Մ. եպս. Բարխուդարեան, Արցախ, էջ 407-408. Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 223-224 (N 798). Ս. Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները, էջ 67-68:

կան եւ վիմագրագիտական հետազոտութիւններ, եր., 2009) «Արցախի կենտրոնական եւ Միւնիքի հիւսիս-արեւելեան գաւառները ըստ «Աշխարհացոյց»-ի» ներդիր քարտէզում, որտեղ ոչ միայն խաղաղութան քարտէզը, այլեւ նրանից արեւելք գտնուող Բերդաձորի Ս. Գրիգոր վանքը շտապողաբար ցոյց ենք տուել Հարջլանք գաւառի կազմում: Տեղին նշենք նաեւ գրքում շոշափուած մէկ այլ խնդրում սրբազրում կատարելու անհրաժեշտութիւնը: Հետեւելով նախորդ ուսումնասիրողներին՝ մի գրուագում կրկնել էինք այն մտայնութիւնը, թէ ԺԳ դ. սկզբներին Տրտուի միջնա-հովտի աջափնեայ (Հարաւային) մասը մինչեւ Արծաթահանքի լեռնաշղթան՝ աւելի մեծ հաւանականութեամբ եղել է ոչ թէ Ներքին խաչէնի, այլ Վերին խաչէնի կամ Վախտանգ Հաթերքցու իշխանութեան տարածքում (էջ 247, ծնթ. 85): Սակայն ներկայումս աղբիւրագիտական նիւթը հիմք է տալիս՝ պնդելու հակառակը: Օրինակ՝ Տրտուի աջափնեայ ձորալանջի կոն-դուտ գիւղից վեր գտնուող Ամենափրկիչ եկեղեցու մուտքի ճակատաքարի վիմագրում ունենք, առաւել մեծ հաւանականութեամբ, Վախտանգ Տանգիկի իշխատակումը. «Ի հայրապետութեան տէր Յակոբոսայ եւ իշխանութեան վախտանգայ, որդոյ Հասանայ, ես՝ Յոհանէս ու Սերոբ ու Սարգիս ու Գրիգոր որդի Հարբաձայրայ շինեցաք զԱստուածածինս ի մեր հայրենեակաց...»²⁰²: Նոյնն է մի քանի կմ արեւմուտք ընկած Վաղուհաս գիւղի՝ «Մայրաքաղաք» կոչուած եկեղեցու բակի խաչքարի (ներկայումս կորած) վիմագրում. «Ես՝ Յոհան գրան Էրէցս Վախտանգայ կանգնեցի զխաչս... Թիվն :ՈԿԲ: էր [=1213 թ.]»²⁰³: Այս

202 Դիւան հայ վիմագրութեան, ար. V, էջ 91 (N 278): Որոշ տառերի ընթերցումները ժամանակին ճշտել ենք տեղում:
 203 Նոյն տեղում, էջ 114 (N 380): Ս. Բարխուդարեանը շտապողաբար ընդունել է թուականի՝ Սարգիս Ջալալեանցի՝ ընթերցումը (:ՈԿԷ):

եկեղեցու գաւթի խորանի ճակատին եղել է կոստանդին Բարձրաբերդցի Հայոց կաթողիկոսի (1221-1267) անունից գրուած ուշագրաւ վիմագիրը (ներկայումս՝ կորած), որում նա, մասնաւորապէս, նշում էր. «...միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան Մեծի Ջալալ Դալիս եւ յառաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսի... Ի թվիս :ՈԿԵ: էր [=1246 թ.]»²⁰⁴:

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Խոխանաբերդը հիմնադրուած աւերուել է մոնղոլների կողմից զեռուս Ջալալ Դալա Հասան իշխանի կենդանութեան օրօք, եւ գրականութեան մէջ աւանդաբար ընդունուած է թուագրել դա մօտաւորապէս 1246-1247 թթ.²⁰⁵: Ըստ պատմիչի տեղեկութեան՝ հարկահան Բուղայի զլիաւորած մոնղոլական զօրախումբը «քակեաց զանլալի», զոր Խոխանայ բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն, եւ զԴեղն, եւ զԾիրանաբարն, եւ զայլ ամրոցս նորուն: Եւ այնպէս յատակեաց զնոսա, մինչեւ հետք անգամ ոչ երեւէին, թէ բնաւ շէն լեալ իցէ»²⁰⁶: Սակայն այս դէպքի աւանդական թուագրութեանը հակասում է մի

=1218 թ.) խոտանելով Մակար Բարխուդարեանցինը (Արցախ, էջ 192), որն աւելի իրականորոյն դրան երէցի 7 տողանոց տապանագիրը Այս է հանգիստ Յոհանիսի՝ որան երէցոյ Ջալալ-դարբուցիք, էջ 280, N 1186):
 204 Մ. Եպ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 192. Դիւան հայ վիմագրութեան, ար. V, էջ 114 (N 377):
 205 Տե՛ս, օր. Ի. Օրբելու, Կ. Ասան Դալալ, князь Хаченский, էջ 154; Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 195-196:
 206 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց. Գ. Խ. Էջ 313 (գլխի վերնագիրն է. «Վասն հարկահանացն, որ եկին ի դաւեան», էջ 312):

կարեւոր տուեալ, որը տալիս է Կեչառիսի «ժամատան երգիկի կամարի [Հարաւահայկեաց] գարնէզի վերայ»-ի արձանագրութիւնը²⁰⁷: Եօթ մետր բարձրութեան վրայ գաւթի երգիկի տակ «կախուած» այդ վիմագիրը (որի որոշ տառեր մի վաղ վերականգնման ժամանակ արուած կրասուաղի տակ միայն մօտիկից են «շօշափուում») ստուգել ենք տեղում (Յուլակ եւ Գեւորգ Յակոբեանների հետ), ուստի բերում ենք ամբողջութեամբ: Կամարի երկու շարք քարերի վրայի 6 տողանոց ծաւալուն բնագիրն ընթերցուած է.

«Աւգնութեամբ Ամենայնս՝ Երրորդութեակն, ես՝ Ջալալ Հասան, որդի Վախտանգայ, որդոյ Մեծին Հասանայ, տէր |

Խոխանայ բերդոյ եւ խաչէնոյ, եւ մուսին իմ Մամբան, դուստր²⁰⁸ Բաղայ թագաւորին, միաբանեցաք մեծ եւ հոչակաւոր ս՝բ ուխտ |

Իս Կեչառուաց, եւ տուաք²⁰⁹, յաւերման Նետողաց բազում գանձիւք վերստին

207 Տե՛ս Գ. Կար. Յովսէփեան, Խաղաղութեան կամ Պոռոզեանց հայոց պատմութեան մէջ, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 317: Հմմտ. Յովհ. Եպ. Ծախաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի, հտ. Բ, էջ 195. Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր. Յոցակ ժողովածոյ արձանագրութեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 92. Է. Լ. Դանիելեան, Գանձասարի պատմութիւն, էջ 128-129:

208 ԴՈՒՍՏՐ բառն այս բնագրում յայտնուել է, թերեւս, իբրեւ «գրագետ» փորագրողի «նախաձեռնութիւն-վրիպակ»: Նրան տրուած «պատուիրաթոյն», անշուշտ, պիտի լինէր ԹՈՒՆ, ինչպէս վերեւում ճշտուած մի քանի վիմագրում է, որ այդպէս է կոչուած Հասան Ջալալ, սակայն շաղաղանքի մի այնպիսի բանաձեւով, որ շփոթեցրել է շատ հետազօտողների: Այն ճիշտ է հասկացում լոկ փակագծերի յատկումով. օր. «...Հասան Ջալալ՝ որդի Վախտանգայ (նա ասուսին իր Մամբան), թոնն Բաղայ թագաւորին...»:

209 ՏՈՒԱՔ բառի վերջին 3 տառերի փորուածքները կրասուաղով են լցուած, բայց մօտիկից «շօշափուում» են (Գ.ար. Յովսէփեանի մօտ՝ տ(ե)սի):

նորոգեցաք, եւ տուաք յամեն ամի ի հարաւ²¹⁰ վաճառէն ին դաւկատ²¹¹ |

(Թվի՛ն :ՈԿԷ: [=1248 թ.] յառաջնորդութիւն Միսիթ՝ վճարեալս ին: Վարդայեպետերս եւ այլ միաբանքս ընկալան եւ սահմանեցին մեզ՝ :Բ: աւր պատարագ զամեն եկեղեց |

Իքս, զԱւագ գատիկն ինձ եւ :Գ: շաբաթն աւրն Մամբանայ: Կատարիչք գրոյս ա՛հն ին յԱստուծոյ, իսկ որ խափանէ ի մերոց կամ յաւագ |

այ կամ յիշխանաց եւ յառաջնորդաց, մեր մեղացս պարտական է եւ :ՅԺԸ: Հայրապետացն նզոված է: Կատարիչքն ա՛հն»²¹²:

Արդ, ակնյայտ է թուում, որ Կեչառիսում Հասան Ջալալի եւ իր կնոջ փառահեղ նուիրատուութիւնը հնարաւոր չէ վերագրել մոնղոլների սկսած ծանրագոյն հալածանքներին անմիջապէս յաջորդող ժամանակին: Հետեւաբար, այդ հալածանքները (ուստի եւ՝ խաչէն-Խոխանաբերդի կործանումը) կարող են թուագրուել 1248 թ. ոչ վաղ: Ի դէպ, դա ինչ-որ չափով երեւում է նաեւ Կիրակոս Գանձակեցու շարագրանքի

210 Գ.ար. Յովսէփեանը հրատարակել է յամարեմ փիս հարատիլ: Մշտնապէս ընթերցել է արդէն վիմագրագետ Գագիկ Սարգսեանը (խորհրդատուութեան եւ իր վերծանութիւնը մեզ սիրալիք տուութեան եւ իր վերծանութիւնը համար յայտնում ենք կերպով տրամադրելու համար յայտնում ենք նրան մեր երախտագիտութիւնը): Վիմագրի յաջորդ բառը վրիպակով է՝ վաճառէն փիս վաճառէն, որը հրատարակիչներն իրաւացիօրէն արբազնել են:

211 Հրատարակիչների մօտ՝ դուկատ փիս դաւկատ, որը ճշտել է արդէն Գ. Սարգսեանը: Երրորդ տողատարտում փորագրուած այս բառից յետոյ նախադասութիւնը պարզ շարունակում է, ըստ ամենայնի, յաջորդ տողակազմում նախապէս գրուած թուականից յետոյ (դա նաեւ կամարի քարերի երկրորդ շարքի սկիզբն է): Թուականի բոլոր 6 տառերն էլ մի փոքր աւելի մեծ են: Փակագծերով առանձնացնելու փոխարէն (ինչպէս արել ենք մենք), թուականը կարելի էր վերականգնել նաեւ բնագրի սկզբում:

212 Տե՛ս ծնթ. 207:

Արդ, ինչո՞ւ պէտք է հաւանական համարել Իւանէ եւ Աթաբակ անունները կրող (ըստ ամենայնի՝ մանկուց) Խաչէնի իշխանի կողմից նաեւ մի երրորդ՝ Խերխան (Խերխան) անուն ընդունումը: Հարցի պատասխանը կարող է լինել այն հնարաւոր ենթադրութիւնը, որ այս կամ այն չափով ինքնուրոյնութիւն դրսեւորող հայկական եւ վրացական ուժերի դէմ 1260-ական թթ. սկզբին կրկին ահազնացած մոնղոլական հալածանքները (որոնց գոհ գնացին Հասան Ջալալը եւ ուրիշներ), հաւանաբար, ստիպել են դրանց թուլացման գործին լծուած Իւանէին (յիշենք՝ «:Գ: Հետի ի դանն գնացի», «զգրկանքն մեր ի ժամանակի Նետոյղացի», «[...] իմ ազգէն թափեցի դատաստանաւ»)՝ բռնատիրոջներին ներկայանալ մի աւելի յարմար, «մոնղոլանման» անունով: Նշենք, որ, ըստ Հր. Աճառեանի, միայն երիցս ԺԳ. դարում արձանագրուած Խերխան անուն ստուգաբանութեան մէջ յստակը հէնց խան թիւրք-մոնղոլական բաղադրիչն է²³¹:


Միւս հարցին, թէ ինչո՞ւ պէտք է Հասան Ջալալի որդի Իւանէ Աթաբակ Խերխանը թաղուէր ոչ թէ տոհմական գերեզմանատուն Գանձասարում, այլ Կոշիկ անապատում, շատ աւելի դժուար (եւ առայժմ՝ պարզապէս անհնար) է պատասխանել: Այն իրողութիւնը, որ Գանձասարի տարածքում նրա գերեզմանը չկայ, դեռ չի

կարող հարցի սպառիչ պատասխանը համարուել, քանի որ Գանձասարում գտնուած չեն նաեւ իր ծնողների եւ պապերից շատերի գերեզմանները, թէպէտ կան աղբիւրների հաւաստի վկայութիւններ, որ նրանք թաղուած են հէնց այնտեղ:


Եւ վերջում. եթէ ընդունում ենք Հասան Ջալալի որդի Իւանէ Աթաբակի եւ Կոշիկ անապատում թաղուած՝ «Բաղաց թագաւորի թոռ Հասանի» որդի Խերխանի նոյնութիւնը, ապա պէտք է ընտրենք Խաչէնի այդ իշխանի մահուան տարեթուի ճիշտ տարբերակը: Համադրելով Կոշիկ անապատում Խերխանի տապանագրի թուականը (1286) վերը նշուած Ստեփաննոս եպիսկոպոսի «Ժամանակագրութեան» հարողած տուեալի հետ (1287)²³², թերեւս, կարող ենք մտածել, որ ոչ ճշգրիտ, այլ աւելի շատ մոտաւոր կարող է զիտուել վերջին աղբիւրի նշումը: Առաւել եւս, որ բնագրում ասուած է այդ տարում երկու տարբեր անձանց մահուան մասին, եւ դրանցից մէկի հարցում հեղինակը կարող էր չխորշել կտրացնելուց: Այնինչ հայկական տապանագրերը, զրեթէ առանց բացառութեան, արձանագրում են հանգուցեալի վախճանի հէնց ճշգրիտ ժամանակը: Ըստ այսմ՝ Իւանէ Աթաբակ Խերխանի մահուան իրական տարին պէտք է համարուի 1286 թուականը²³³:

231 Ռի առատ վկայութիւնները տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 232-233:
232 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, էջ 510-511:

232 Տե՛ս Մանր ժամանակագրութիւններ, հտ. Ա, էջ 48; Հմմտ. վերելում, ծնթ. 195:
233 Իւանէի ժառանգների ու յաջորդների մասին ԺԳ. եւ հետագայ դարերում տե՛ս, օր., Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 296-314; Գ. Ե. Կիրակոսեան, *Աշ. աշխ.*, էջ 231-248:



Գանձասարի 1174 թ. խաչքարի արձանագրութիւնը



Վարդանագոմերի եկեղեցու բարատրի վիմագրի գրչանկարը

Խաչէնի իշխանների տոհմաճառը (Թ-ԺԳ դարեր)


© Ալ. Յակոբյան, 2010 թ.

ՆԵՐՔԻՆ ԽԱՉԵՆԻ ԾԻՂ (ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԸ)

ՍԻՆԿԵՐ ԵՐԵՍՅԱԾԻՂ

ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆԱ-ԱՐԵՍՅԱԾԻՂ

ՓԱՆԻՍՍԻ ԻՇԽԱՆԱ-ԱՐԵՍՅԱԾԻՂ



- Գրիգոր Աղբյուրներում վկայուած որդիներ
- Մարին Աղբյուրներում վկայուած դուստրեր
- Թամար Աղբյուրներում վկայուած կանայք
- ? ? [կին] Աղբյուրներում վկայուած՝ առանց անձնանունան
- ? Աղբյուրներում չվկայուած, բայց ենթադրելի սերունդ
- + յետ (մինչ) 949 Վախճանը ենթադրելի է այլ առիթով աղբյուրի վկայած թուականից ոչ շատ ուշ կամ վաղ
- Անձի նոյնություն

ՀԵՍՈՒՄԵԱՆԸ

ԾԱՌԻ ԾԻՂ (ԴՕՓԵՍԱՆԸ)